1900

ԹԻՒ Գ. ՄԱՐՏ

ԱՐԱՐԱՏ



ՏՊ· ՄԱՅՐԱԹՈՌՈՅ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ·

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ՊԱՏԱՐԱԳԱԿԱՆ

1. Պատճէն Հրովարտակի Վեհ. Հայրապետի. 99
2. Քաղուածք հրովարտակաց Վեհ. Հայրապետի 100

ԿՐՕՆԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆՆԱՑ.

3. Քահանաների ընտրութեան եղանակը Գ. Վ. Ցովսէփեան 102
4. Մայր աթոռ 104

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ

5. Ս. Վարդանանց տօնը Երևանի Հայոց Հոգևոր Դպրանոցում Հ. Ցովհաննէսեանց. 105
6. ՏԱՃԿԱՀԱՑՔ 105

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

7. Օրթոդոքս, Կաթոլիկ և Բող. եկեղ. 107
8. Ծաղկաքաղ ընտիր մտքեր «Հարանց վարքից» Ն. աբեղայ Տ. Աւետիքեանց 111
9. Բարոյական վէճեր . . Ս. Մ. 112
10. Հացահատիկները և ցանքը Գ. Ղ. 118
11. Առողջապահական դիտելիքներ (Շար.) 124

ԱՃԼԵԻԱՃԼՔ.

12. Մանրալուծք 127
13. Պ. Սեդրաք Մանդինեանի յօբելեանի առթիւ Ք. Մ. 130
14. Հայկականք (Շար.) Գ. Տ. Մկրտչեան 134
15. Հայ ժողովրդական առասպելները (Շարունակելի). Մ. Աբեղեան 140

ՑԱՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՅՈՒՅԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ԳՐԵԱՆՑ ՏՊԱՐԱՆԻ ՄԵՑՐ ԷՋՄԻԱԾՆԻ

	Ր.	Կ.
Ագաթանգեղոսի աղբիւրներից յիշատակ դատակնքացն Գորիա եւ Շմոնի.	—	50
Առակք Բռիլովի Ծաբ. Եպ. Ալվ.	—	80
Ատենի ժամագիրք, որ է մատեան հասարակաց աղօթից Բ—դդ. ապագր. 1891 թ.	3	—
Աւետարան Տ. Մերոյ Յիսուսի Քրիստ. (Ճաշոց աւետարան) 1890 թ.	3	—
Աւետարան (փոքրադիր.) 1891 թ.	—	70
Աւետարան Իւղաբերից 1892 թ.	1	50
Աստուածաբանական Գիտութիւնները (Ա. ց. Մէքքէլեան) 1893 թ.	—	50
Աստուածպաշտութիւն Հայոց. եկեղ. (Ս. ա. ք. Մանդինեան 1870 թ.	—	70
Անանիա Նարեկացի գիրք խոստովանութեան . . (Մխաբան) 1892 թ.	—	50
Աբրահամ Կաթուղիկոս Կրետացի	2	—
Աղանդաւորը եւ Մոլորութիւնք նոցա ի վարդապետութիւնս Հաւատոյ (Ա. Եպս. Դուբեան) 1890	—	20
Այրի վանք, կամ Նկարագրութիւն Գեղարդայ)վանից Վ. Մանկունի)	—	10
Աղբիւր Բացեալ (Պ. Եպս. Բերդումեան) 1845 թ. .	—	20
Ա. եւ Բ. մնացորդաց գրքերի նորագիւտ Հայ Թարգմանութիւնը (Գր. Խալաթեան 1896	—	15
Բամբակի մշակութիւնը Ս. Մկրտչեան	—	20
Բուսաբանութիւն (բժ. Գ. Տ. Գրիգորեան) . . .	—	15
Բագրեւանդ եւ Ջրաբաշխ գաւառ (Ս. Հայկունի) 1894	1	50
Բաղդատական Աշխարհագրութիւն (Պետերբուրգի հայ ուսանողներ) 1872 թ.	—	50
Գիրք Հերձուածոց (Մխաբան) 1892 թ.	—	50
Գիրք խոստովանութեան (Մխաբան)	—	50
Գիրք Հանդիսականաորութեան կայսերական տօնից 1894 թ.	—	50
Դասագիրք կրօնի Ա. տ.	—	15
» նոյն Բ. տ. Ե. վ. Մովսիսեան . .	—	20
» » Գ. տ.	—	30
Դաստիարակութիւն եւ ճառանդականութիւն . .	—	60
Դասագիրք Քրիստ. վարդապետութեան (Աբել Արքեպիսկոպոսի) 1873 թ.	—	10
Դասագիրք Հայկական Քայնագրութեան (Ն. Թաշեան) 1874 թ.	—	50
Դեօլինգերի Նամակները . . . . . 1892 թ.	—	50
Եօթն խօսք առ տղայս	—	15
Երգք Քայնագրեալ ի ժամագրոց Հայաստանեայց եկեղ. 1872 թ.	4	—
Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի Թուղթը առ Աբբաս Աղուանից կաթուղիկոս 1866.	—	15
Զաքարիա սարկաւագի պատ. 1870	2	—
Էվիզէ Ռէկլիւ. Ռուսական Հայաստ. Արաքսի աւազանը. Ուրմի լիճը եւ առաջաւոր Ասիա (Թարգ. Մխաբան) 1892	—	30
Նոյնը Լազիստան, Հայաստան եւ Քիւրդիստան (Թարգ. Մխաբան) 1893 թ.	—	50
Ընդհանուր պատմութիւն հին դարու (Ֆ. վրգ. Սուրխեանց)	—	50
նոյն միջին դարու	—	50
Ընդհանրական Ս. Ներսիսի Շնորհալւոյ . . .	3	—
Ժամագիրք (Զեռաց) 1892	2	—
Ժանտախտ (Բժ. Վ. Արծրունի) 1897	—	20
Ինկվիզիցիա	—	30

ԱՐԱՐԱՏ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

ԹՒԽՔ. Ի.Գ. ՏԱՐԻ | ՀԱՄԱՌՐԵՐՈՒԹ | ՄԱՐՏ. 1900 Թ.

ՀՔԱՓԱՌՆԱՆՔ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

1900

Дозволено цензурою 15 Марта 1900 г. г. Тифлисъ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՊԱՏՃԷՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՍԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ԾԱՑՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՒ ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՑՐ ՆԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱՆՑՒՆ, ԳԵՐԱԳԱՏԻՒ ՎԻՃԱԿԱԿԻՒՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ ՀԱՐԱՋԱՏԻՑ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՅՍ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ՅԱՑՏ ԱՌՆԵՄՔ։

Յօրէ գահակալութեան Մերոյ ահա անցին ամք հօթ և Մեք ի խնդրապրոց և ի մատուցեալ Մեզ յօրագրոց Սինօդի նկատեցաք, զի բազմաթիւ էին գործք թոյլատուութեանց պակաց ի զանազան ատենս, չհասուութեանց, թէ ազգակցական և թէ խնամիական և ակն արկեալ ընդ պատճառս յառաջ բերեալս, ներելով թոյլատրեցաք։ Բայց յայնցանէ նկատելով զինչ ինչ հանգամանս, ի դիւրութիւն և ի պատշաճաւորն կենցաղավարութիւն ի քրիստոնէականս կրօնի սիրեցեալ որդւոցս Հայաստան աշխարհի, Կոնդակօք Մերովք Ա. յ'30 Յունիսի անցելոյ ամի թ. 797, հրամայեցաք Սինօդի Ս. Էջմիածնի թոյլատրել կոնսիստորիայիս արձակել զկրճատանս պակաց հինգերորդ ատենի խնամիական չհասութեանց, որպէս և Բ. Կոնդակաւ թ. 1490, յ' 17 դեկտեմբերի անցելոյ յանուն նոյն Սինօդի հրամայեցաք թոյլատրել զպակս հօթներորդ ատենի ազգակցական չհասութեանց՝ որպիսիք երբեմն աննորելիք և անթոյլատրելիք համարեալք էին։

Սակայն ցաւ ի սիրտ տեսանեմք, զի նորատունկ ժողովուրդն Մեր չբաւականացեալ այսքանիւ ներողութեամբ և թոյլատրութեամբ, շարունակին զաննորելին յարբերութիւնս ընդ բարեկամս և ազգականս յաւուց միաւորութեան պակի և այն ի ձիգ ժամանակս անյայտ պահելով՝ յորժամ արգասիքք միաւորութեան ի յայտ գան, յայնժամ միայն գիմեն առ Հոգևոր իշխանութիւն խնդրելով զկրճատման պակին, պատճառելով զպատճառս մեզաց, թողով և զիշխանութիւնն յանելանելի դրութեան, որոց և զիջողութիւնն լինի օրինակ չար այլոց։ Այլ զի բարձցին խոպան այսօրինակ անտեղութիւնք և պատճառք պատուհասից այլոց անմեղաց և ազատեսցի Հոգևոր իշխանութիւն յաւելորդ գրաւութեանց, ի միջնորդութեանց և յանելանելի տարակուսանաց, Մեք հարկ համարեցաք Սովին Հայրապետական Կոնդակաւ և բարձու հրամանաւ միանգամ ընդ միշտ սահման դնել և յուշ առնել համայն Գեր. Վիճակաւորաց, վիճակային Ատենից և ատորապրեալ նոցին Հոգևոր Կառավարութեանց և Գործակալաց չընդունել և չառաջարկել յետ այսու ի Սինօդն կամ մեզ զինդիրս մատուցեալս ի ժողովրդականաց կամ ի քահանայից, ո՛չ Չորրորդ ատենի խնամիութեանց և ո՛չ վեցերորդ ատենի ազգակցութեանց և ո՛չ որ պակաս ի սոցունց իցեն, քանզի անթոյլատրելի մնան հրամանք այնպիսիք և անլսելի խնդիրք այնպիսեաց։

Բայց ատի պարտիք Առաջնորդաց լինին շրջաբերական հրամանաւ խստիւ պատուիրել քահանայից առնել ուշադրութիւն ի ժամ նշանագրութեան, մի՛ օրհնել նշանս ան-

չափահասից և մի՛ գաղտագողի յամուռնացողացն և պարտիք Ծխատարց լիցին քննել, թէ արդարև յօժարամիտ սիրով և աղաւն կամօք ցանկան ընկերակցութեան հարսնացուն և փեսացուն, եթէ յոչ կամաց կամ յարտաքին ստիպողական ինչ պատճառաց յայն բերեալ իցեն բռնութեամբ, քանզի ամենայն չարիք յամուռնական կեանս Ծագին յանհեռատես ընտրութենէ, ի շահասիրութենէ և յանազատ սիրոյ, որոց մեծագոյն մասանց, ցաւելով ասեմք, միջնորդք՝ տաներէցք լինին զանազան դիտամտիք՝ և հետևանք այսօրինակ ամուսնութեանց բռնի սէր, անհամաձայնութիւն, կռիւ և կռիւ և ապա ապօրինի բաժանում և կենակցութիւն ըստ հաճոյս, որոյ ազգավնաս և հակաբարոյական արդիւնս օր ըստ օրէ յաճախեալ, անկումն և քայքայումն սիրեցեալ հօտին Ս. Լուսաւորչին տեսանեմք:

Լիայոյս եմք զի շրջաբերականս այս բազմաց լիցի պատճառ բարութեան, վարպետից նիւթ քարոզութեան առ հասատացեալ ինքեանց հօտ, քահանայից՝ ևս առաւել ի խրատ և ի զգուշութիւն, յորոց պահանջելոց է Աստուած զարիւն անմեղաց յաւուր դատաստանի. ծնողաց՝ ի յորդոր, որոց ցանկալի է երջանկութիւն և բարօրութիւն սիրեցեալ զաւակաց իւրեանց, ամուսնացողաց՝ ի զգաստութիւն, որոց նպատակ է և քաղցր ապագայ կենցաղավարութիւն և մխանջենական սէր և խաղաղութիւն յընտանեկան կեանս:

Աղօթակից հարց եկեղեցւոյս և աղօթարար Սիրեցեալ ժողովրդեանս՝

ի վերայ իսկականին ստորագրեալ է
Նորին Սրբութիւն
ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի 24 Փետրուարի 1900 ամի
և ըստ տոմարիս ՌՑԽԹ.
ի Հայրապետութեան Մերում Է. ամի
յԱբարատ. Մ. ԱԹոռ Ս. ԷջմիածնիՀ
ի Վաղարշապատ

ՓԱՂՈՒՄԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀՈՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ յանուն Սինօդի Ս. Էջմիածնի յաղագս բացակայ համարելոյ զանդամն Սինօդի զՏ. Աշոտ վարդապետն միամեայ ժամանակաւ՝ Թ. 153.

— Ցանուն Ամեն. պատրիարքի Կ. Պոլսոյ յաղագս գրելոյ Տ. Ցովսէփ եպիսկոպոսի Սարաճեան յԱմերիկա թոյլատրել առնել հանգանակութիւն ի մերաղնեայս ի նպաստ Հոգ. դպրանոցի միոյ ի Կիլիկեայ՝ Թ. 161.

— Ցանուն Գեր. Թեմակ. Շամախւոյ Նասյի Արքեպիսկոպոսի, որով յայտնեցաւ լըկարգումն Տ. Եփրեմ վարդապետի Սուքիասեան ի վանահայր վանուցն Սաղիանու և նախանդամ Կոնսիստ. Շամախւոյ՝ Թ. 166.

— Ցանուն Սինօդի Ս. Էջմիածնի ի վերոգրեալ միաս՝ Թ. 170.

— Ցանուն Սինօդի Ս. Էջմիածնի, որով յայտնեցաւ թոյլատրութիւնք ոմանց պատկաց՝ Թ. 173.

— Ցանուն Տ. Տիրայր վարդապետի, որով յանձնեցաւ նմա ի քննել զերկուս բողբս, որք զՑովսէփայ Մելիք Շահնազարեանց՝ Թ. 177.

Կոնդակ օրհնութեան և քաջալերութեան յանուն «Որբանոցաց ընկերութեան Վասպուրականի», որ ի Գահիրէ Եգիպտոսի՝ Թ. 174.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՔՀԱՆԱՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Մեր եկեղեցու պայծառութեան, նորա բարոյական հեղինակութիւնը վերականգնելու անհրաժեշտ պայմաններից մէկն է քահանայութեան բարեկարգութեան խնդիրը: Զուներնանք պարտաճանաչ եւ բանիմաց քահանայութիւն, ի զուր են մեր բոլոր յոյսերն ու տենչերը, որ կապուած են եկեղեցու գոյութեան եւ նպատակի հետ: Իսկ եկեղեցու կոչումն ու նպատակն է «քրիստոնէական փրկութիւն» տալ իւր հօտին Հիմնադրի հոգու եւ վարդապետութեան համաձայն: Քրիստոսի վերջին պատուէրն էր. «Ա՛ռէք նոցա պահել ամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ», որով եւ եկեղեցու կոչումն էր որոշում: Եկեղեցին ծիրով այս հրամանի համաձայն այլ եւ այլ միջոցներ եւ հաստատութիւններ է հիմնել իւր դաստիարակչական նպատակների յաջողութեան համար, բայց նոցանից ամենահինը քրիստոնէական եկեղեցու պաշտօնէութիւնն է, որ հաստատել է Յիսուս Քրիստոսի ձեռքով: Որովհետեւ եկեղեցու ներկայ նուիրապետութիւնը առաքելական շրջանի պաշտօնէութեան շարունակութիւնն է, տարբերը արտաքին կազմակերպութեամբ, բայց նոյն էութեամբ եւ նպատակով: Քրիստոսի վերջին պատուէրն այսպիսով հնչում է եւ ներկայ պաշտօնէութեան ականջին, որ կոչուած է իրագործելու եկեղեցու նպատակը:

Եկեղեցու պաշտօնէութեան մէջ կարեւոր տեղ է բռնում քահանայութիւնը, որ իւր ղիրքով անմիջապէս կապուած է եկեղեցու հօտի հետ: Ճշմարիտ է, նա առաջնորդող ղեր չունի եկեղեցու ընդհանուր բարեկարգութեան, վարչական ղեկավարութեան մէջ, բայց առանց հետեւանքի կմնան հոգեւոր բարձր վարչութեան բոլոր ցանկութիւնները, եթէ քահանայ եւ պարտաճանաչ քահանայութիւն չունենայ իւր ծեռքի տակ: Բարձրագոյն նուիրապետութիւնն առանց քահանայական դասակարգի նման է մի զօրապետութեան առանց զինուորների: Լաւ զօրապետից եւ օգնական սպաներից շատ բան է կախուած պատերազմի յաջողութեան համար, բայց հանճարեղ զօրապետի եւ նորա սպաների ջանքերն ի զուր են առանց քաջ, իրենց հայրենեաց համար մեռնելու պատրաստ զինուորութեան: Եկեղեցւոյ նուիրապետութիւնը մենք առանց դիտաւորութեան չհամեմատեցինք զինուորական կազմակերպութեան հետ. եկեղեցու ընթացքն եւս պատերազմական է, որովհետեւ իւր հաստատութեան օրից կոչուած է նա մարտ մղելու «աշխարհի», այսինքն խաւարի, չարութեան, անբարոյականութեան դէմ: Ուստի եւ առաքեալը իւր կեանքի գործունէութիւնը պատերազմի է նմանեցնում եւ հետեւեալ խօսքերով կընքում. «Զբարւոյ պատերազմն պատերազմեցայ, զընթացսն կատարեցի . . . »:

Այո՛, եկեղեցու նուիրապետութիւնն մի հոգեւոր զինուորութիւն է Քրիստոսի որոշակի տակ եւ նորա յաղթութիւնը պայմանաւորուած է իւր զօրապետների եւ հոգեւոր զինուորների բարեմասնութիւններից եւ պարտաճանաչութիւնից: Հայաստանեայց եկեղեցու հոգեւոր զինուորութիւնը նորա քահանայութիւնն է, որ կոչուած է մեղքի եւ անբարոյականութեան դէմ մաքառելու անձնուիրութեամբ եւ քաջութեամբ: Իսկ ի՞նչպէս կարող է մէկն ուսուցանել, երբ մինչեւ իսկ գաղափար չունի իւր ուսուցանելիք նիւթի մասին: Քահանայի գէնքը նորա հոգեւոր ուսումն ու տաւտն է, սակաւ բացառութեամբ երկուսից էլ զուրկ է մեր քահանայութիւնը:

Ամառնային ճանապարհորդութիւնների ժամանակ առիթ ենք ունեցել ծանօթանալու զանազան գաւառների քահանաների վիճակի հետ. Ղարաբաղի, Վայոց Ձորի, Շիրակի, բայց նոյն իսկ Ս. Էջմիածնի շրջը զանուած գիւղերում քահանաներ կան, որոնց համար առանց խղճահարուելու ասել կարող

ենք, թէ համարեա կարդալ չգիտեն։ Պատահել ենք քահանաների, որ արթեցութիւնից ոտքի վերայ կանգնել եւ մեզ հետ խօսել չէին կարող, պատահել ենք քահանաների, որոնց անբարոյական ընթացքը գայթակղեցուցիչ էր նոյն իսկ հօտի ամենից ընկած անդամի համար։ Պատահել ենք կիսախելագար քահանայի, որը տարիներով սրբազնագործութիւն էր կատարում։ Ընդհանուր խօսքերով նկարագրում, անցնում ենք այս տիսուր իրողութիւնները, բայց մեր յիշատակարանից ամեն տեսակի համար բազմաթիւ փաստեր կարող ենք յայտնել յակառակ յանուանէ, գիւղն ու գաւառը նշանակելով, որ և տարկէտ անպատեհ է այստեղ։ Նոցա նիւթական վիճակն էլ համապատասխան է բարոյականին։ Եւ այդ խեղճերը կոչուած են ժողովրդի առաջնորդը, դաստիարակը դառնալու։ Ի՞նչպէս կարող է եկեղեցին այսպիսի ապաստաւորների ձեռքով իւր վեր կոչման ծառայել։ Ցաւալի է, շատ ցաւալի։ Բայց նկարագրելով այս տիսուր իրողութիւնը՝ թեեւ համոզմունքով՝ գրչի մի շարժումով մեղքը այս կամ այն անձի վերայ չենք ձգում։ Պատմական մի այսպիսի քարդ երեւոյթ կարօտ է բազմակողմանի եւ լուրջ ուսումնասիրութեան։ Ով փորը ինչ գործ է ունեցել տգէտ եւ անհասկացող ժողովրդի հետ, նա լաւ հասկանալ կարող է, թէ ինչպէս դժուար է ՝ի անգիտից բարեխրատս-ի մղել նորա մէջ։ Սակայն մենք անհնար չենք համարում այդ, ամեն դժուարութիւն, խոչընդոտ տեղի է տալիս վերջապէս կարգաւորեալ, հետեւողական եւ յարատեւ գործունէութեան։ Եկեղեցու պաշտօնէութեան, դորա մէջ եւ քահանայութեան, բարեկարգութիւնը Հայոց եկեղեցու համար այնպիսի ծանրակշիռ, կենաց եւ մահու նշանակութիւն ունեցող խնդիր է, որ մեր բոլոր հոգացողութիւնը, մեր բոլոր ջանքերը այդ կէտի վերայ պիտի կեդրոնացնենք։ Եկեղեցու պաշտօնէութեան անկմամբ, ընկնում է եկեղեցին, խեղդւում է ժողովուրդը կրօնական անտարբերութեան եւ ամեն տեսակ անբարոյականութեան ծովի մէջ, որ աւելի վտանգաւոր է մեր ազգի ապագայի համար, քան սուն ու սուրը։ Ահա մի վէրք մեր եկեղեցական կեանքի մէջ, որ անպայման քժշկութեան պէտք ունի։ «Արարատ»-ի հետեւեալ համարներում մի քանի յօդուածով կաշխատենք մեր տկար կարողութեան չափ լուսաբանել այս կենսական հարցը զանազան կողմերից, առ այժմ մի քանի խօսք ասենք ֆահանայական ընտրութեան նէրկայ եղանակի մասին, որ քիչ է խանգարում քահանայութեան բարեկարգութեան խնդիրը։

Քրիստոնէական նախնի սովորութեան համաձայն քահանացուների ընտրութիւնը Հայաստանեայց եկեղեցու մէջ կախուած է համայնքից կամ ծխականներից։ Հին ժամանակներից ընտրութեան որոշ ձեւ, եղանակ չէ հասել մեր ձեռքը։ Տաւանօրէն ժողովրդի առաջնորդներն համաձայնութիւն են տուել այս կամ այն անձի քահանայացմանն, գաւառի եպիսկոպոսն էլ ձեռնադրել է։ Իսկ այժմ, երբ ժողովուրդը պարտաւոր է համախոհական ներկայացնել հոգեւոր իշխանութեան, սակաւ բացառութիւնները չհաշուելով սովորական է դարձել ընտրութեան հետեւեալ վնասակար եղանակը։ Քահանայացուն անձամբ կամ նորա բարեկամներից մէկը նախօրօք պատրաստուած համախոհականը շրջեցնում է տուն, խանութ խանութ եւ առորագրել տալիս։ Բաւական է, առորագրողների թիւը 100-ից անցաւ, համախոհականը պատրաստ է։ Այսպիսի դէպքերում խնդիրը, աղաչանք, երբեմն մինչեւ իսկ կաշառք, լինի այդ դրամով, թէ հացկերոյթով կամ նոյն իսկ մի քաժակ օղիով մեծ նշանակութիւն ունին գործի յաջողութեան համար։ Դժկամակների սիրտը վերջին միջոցներով են շահում։ Բայց այդ դժկամակութիւնը չի ծագում տիրացուի արժանաւորութեան քննադատութիւնից, այլ կուսակցական շարժառիթներից։ Կուսակցական ոգին մի քաղցկեղ է, որ ճարակում է մեր գիւղական ժողովրդի լաւագոյն զգացմունքները, խոչընդոտ դառնում ամեն մի բարի ձեռնարկութեան։ Քահանաների բազմութեան մի պատճառն էլ այս երկպառակութեան արդիւնքն է։ Էջմիածնից ոչ հեռու՝ միմեանց մօտ գտնուող երկու գիւղեր, որ հազիւ երկուսը միացած մի քահանայ պահել կարո-

ղանան, վերջին օրերս երկ երկու տիրացու են առաջարկել Կոնսիստորիային այն պատճառով, որ իւրաքանչիւր գիւղում երկու կուսակցութիւն կայ։ Բայց ո՞ր գիւղում կուսակցութիւն չկայ։ Հազուագիւտ բացառութիւնները են այդպիսի գիւղերը։ Եւ ահա այսպիսի հանգամանքների մէջ քահանայացուները իրենց բարեկամներով մրցութեան են դուրս գալիս այս կամ այն միջոցներով ստորագրութիւններ եւ կուսակիցներ շահելու։ Ժողովուրդն այնքան տգէտ է, որ գիտակցութիւն չունի, թէ ինչպիսի ծանր յանցանք է գործում եկեղեցու ղէմ այդպէս թեթեւամիտ կերպով իր համաձայնութիւնը տալով այս կամ այն տիրացուի ընտրութեան՝ առանց նորա արժանաւորութիւնը քննելու։ Այս թեթեւամտութիւնն իշխում է ոչ միայն գիւղերում, այլ եւ քաղաքներում։

Քահանայութեան անկմանն պատճառներից մէկը գոնէ քաղաքներում մենք վերագրում ենք այսպիսի անկանոն ընտրութեան եղանակին։ Ֆահանայություն ընդունելը պէտք է կատարելո՝ այն եկեղեցու հոգեւոր ժողովո՞ւ, որի համար նա հռչակ է ընդունո՞։ Այս պահանջում է ընտրութեան գաղափարը եւ եկեղեցու շահը։ Շատ անգամ ծխականների մեծ մասը անտեղեակ է մնում՝ նոր քահանայի ընտրութեան, որ ձեռնադրութիւնից յետոյ անախորժ պատմութիւնների առիթ է դառնում։ Բայց եթէ ընդունենք իսկ, թէ տեղեկատուականը ստորագրում է նոյն եկեղեցու ամբողջ հօտի կողմից, դարձեալ ապօրինի է եւ անարդար առանց ժողովի։ Աւելի հեշտ կարելի է մոլորեցնել անհատին ծածուկ մեքենայութիւններով, քան մի ամբողջ ժողով։ Վերջապէս ժողովի մէջ խորհրդածութեան նիւթ կարող է դառնալ տիրացուի արժանաւորութիւններն ու թերութիւնները, այն ինչ այդ դժուար է, երբ տիրացուն ինքը կամ նորա բարեկամն է դիմում այս կամ այն անձին։ Հասարակ տանուտէրի ընտրութիւնը կատարում է ամբողջ հասարակութեան ներկայութեամբ եւ գաղտնի քուէարկութեամբ, այն ինչ քահանայինը՝ ոչ։ Տանուտէրը ժամանակաւոր կառավարիչ է, ընդամենը մի քանի տարուայ համար ընտրուած, այն ինչ քահանան ժողովրդի կրօնական—բարոյական դաստիարակութեան առաջնորդն է եւ արքազնագործ պաշտօնեայ, որ ե-ը ա-էօղջ կեանքով կապւում է եկեղեցու եւ նորա հօտի հետ։ Ուրեմն որքան աւելի լրջութեամբ պէտք է կատարել վերջնիս ընտրութիւնը։ Քահանայացուի ընտրութիւնը համայնական—ծխական կեանքի մէջ ամենակարեւոր եւ լուրջ խնդիրն է, որի համար պարտաւոր է համայնքը ամենայն խոհեմութիւն եւ զգուշութիւն գործ դնել յաջող ընտրութեան համար։ Քահանայացուի լաւ կամ վատ ընտրութիւնից է կախուած եկեղեցու եւ ծխականների ապագայ գործերի ընթացքը։ Ծխական եկեղեցու ապաստանը քահանան է, որի ձեռքով նա հոգեւոր մխիթարութիւն եւ դաստիարակութիւն է ստանում։ Առանց քահանայի եկեղեցին քարերի մի կոյտ է, անիսօս մի շինութիւն, որ ժողովուրդ հովուել չի կարող։ Բայց այսպիսի մի կարեւոր եւ արքազան նշանակութիւն ունեցող գործ վերին աստիճանի անփութութեան է մատնուած մեր մէջ։ Ամեն ոք աշխատում է շուտ ստորագրել փողոցում իրեն մատուցած թուղթը գլուխն ազատելու կամ գործից յետ չընկնելու համար։ Այն ինչ ժողովի մէջ նոյն մարդը անկարող էր այդպէս անփոյթ վերաբերուել, երբ մանաւանդ տիրացուի համար թերեւ ղէմ վիճաբանութիւններ, կարծիքներ լսուէին։ Ներելի էր հասարակ գիւղական ժողովրդին, երբ անփութութեամբ վերաբերուէր ղէպի այսպիսի մի կարեւոր գործ, բայց ամօթ եւ խայտառակութիւն է քաղաքացիների համար, որոնք սակայն իրենց ընտրած քահանայի թերութիւնները ամենախիստ քննադատութեան ենթարկել գիտեն։

Առանց ժողովրդի ազատ ընտրութեան իրաւունքը խանգարելու, մեր հասկացողութեամբ՝ հոգեւոր վարչութիւնը պէտք է ե-ոո-ած ունի հսկելու ընտրութեան կանոնաւորութեան վերայ։ Բայց անկարելի է կանոնաւոր ընտրութիւն ապահովել, մինչեւ ե-պո- վէբոց-ին փողոցներում կատարուած ընտրութիւնները։ Մենք կարծում ենք, որ քաղաքներում ամենաչին դժուար

չէ ընտրութեան այս տզեղ եղանակը ոչնչացնել, քանի որ տեղ տեղ արդէն կանոնաւոր, ծխական ժողովով ընտրութիւնն սկսուած է, հարկաւոր է միայն պարտաւորեցուցիչ դարձընել ընդհանրութեան համար։ Մի անգամ ընդ միշտ պէտք է յայտարարուի հոգեւոր իշխանութեան կողմից, թէ անվաւեր են այն բոլոր համախոհականները, որ ստորագրւում են առանց ծխական ժողովի եւ հոգեւոր վարչութեան հսկողութեան։ Պէտք է միայն հետեւողական լինել մի անգամ կատարած որոշման մէջ եւ կարճ ժամանակում ժողովուրդը ստիպուած կլինի կարգ ու կանոնի ենթարկուել։ Գործի դիւրութեան համար անհրաժեշտ էր ընտրութեան հրահանգները հրատարակել, որով առաջնորդուէին թէ ծխականները եւ թէ ընտրողական ժողովին հսկող գործակալներն ու քահանաները։ Հոգեւոր վարչութեան հսկողութիւնն ու մասնակցութիւնն օգտակար կլինէր նորանով, որ նախօրօք տեղեկութիւններ կստանար նա ընտրելիների բարոյական եւ ուսումնական արժանաւորութիւնների մասին, արգելք կլինէր ընտրութիւններ կատարելու, երբ աւելորդ լինէր նոր քահանայի ձեռնադրութիւնը, վերջապէս ինքն իւր կողմից արժանաւոր ընտրելիներ կառաջարկէր ծխականներին օգնելու եւ աւելի արժանաւոր քահանայացուներին առաջ քաշելու համար։ Ապա թէ ոչ առանց հոգեւոր իշխանութեան վճռական մասնակցութեան եւ կարգադրութեան ոչ մեր քահանայութեան ընդհանուր վիճակը կբարեկարգուի եւ ոչ մասնաւորապէս ընտրութեան գործը։

Գ. Վ. Յովսէփեան

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Շամախու թեմի նորահաստատ առաջնորդ Գերապատիւ Տ. Եսայի Արքեպիսկոպոսը փետր. 15-ին ճանապարհ ընկաւ դէպի իւր նոր պաշտօնատեղին։ Ն. Սրբազնութեան ուղեկցում է բարձր. Եփրեմ վարդ. Սուքիասեանց, որ նշանակուած է նոյն թեմի Կոնսիստորիայի նախանդամ եւ Սաղիանի վանքի վանահայր։ Գերապատիւ Սրբազանին ըստ նախնի սովորութեան մինչեւ վանքի մեծ դարբասն ուղեկցեց Մ. Աթոռի միաբանութիւնը եւ բարի ճանապարհ մաղթեց։

Մեծ պասի ժամանակ Մայր Աթոռի միաբաններից Ս. Հայրապետի կարգադրութեամբ քարոզիչներ են նշանակուած Ս. Էջմիածնի տաճարի համար Գերապատիւ եպիսկոպոսունք Տ. Տ. Գրիգոր Գառնակերեան, Մակար Բարխուդարեան, Յովհաննէս Շերամունի եւ բարձր. Յուսիկ վարդապետ։ Շաբաթօրեայ մէջ մի անգամ եւս լի օրերը, ճեմարանի տեսուչ բարձր. Կարապետ վարդապետը Աւետարանից հատուածներ է կարդում եւ բացատրում, ժողովրդին Ս. Գրքի բովանդակութեան եւ իմաստի հետ ծանօթացնելու նպատակով։

Վաղարշապատի եկեղեցու համար քարոզիչներ են նշանակուած. բարեշն. Ղեւոնդ Եղիայեան, Գարեգին Յովսէփեան եւ Ղեւոնդ վարդապետները, որ շաբաթ երեկոյեանները եւ կիւրակի առաւօտները պիտի քարոզեն կարգով։

Շրջուն քարոզիչներ են նշանակուած նաեւ գաւառների համար։

1. Գառնոյ գործակալութեան համար բարձր. Պետրոս վրդ. Այվազեան։

2. Սուրմալուի գործակալութեան համար բարձր. Եղիա վարդապետ.

3. Սարդարապատի գործակալութեան համար Խաչիկ վարդապետ.

4. Էջմիածնի եւ Աշտարակի շրջակայ գիւղօրէից համար բարձր. Տ. Տ. Կարապետ եւ Գաբրիէլ Յովսէփեան վարդապետները։ Վերջիններս քարոզչութեան պիտի ելնեն միայն շաբաթ եւ կիւրակի օրերը, միւս օրերը ուսուցչական պաշտօնի պատճառով ազատ չլինելով։

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՑՈՑ ԹԵՄԱԿ. ԴՊՐԱՆՈՑՈՒՄ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ «ԱՐԱՐԱՏ»-Ի.

Երեւանի եկեղեցին և դպրանոցը ոգեւորութեամբ ատնեց իր խնկելի նահատակաց յիշատակը։ Եկեղեցում սովորական պատարագն աւարտելուց յետոյ՝ հոգեհանգստեան կարգ կատարուեցաւ ի յիշատակ դպրանոցիս և եկեղեցու բարերարների՝ նախնի սովորութեան համաձայն, որից յետոյ Սբբ. բազան Սուքիաս Արքեպիսկոպոսը մի համառօտ քարոզ խօսեց, օրհնելով բարերարների անունը և նոցա յիշատակին էլ կապելով Վարդանանց սրբոց յիշատակի հետ։ Պատարագից յետոյ Ս. Արքեպիսկոպոսը առաջնորդարան իջաւ հանգստանալու, մինչ դպրանոցիս տեսուչը մի քանի ուսուցիչների օգնութեամբ կարգադրութիւններ էր անում հանդիսի կանոնաւորութեան համար, որ պէտք է գուրսը դպրանոցի առաջ ս. Սարգիս եկեղեցու բակում կատարուէր։ Եղանակը հրաշալի էր և շատ նըպաստեց հանդիսի շքեղութեան։ Կարճ ժամանակից եկեղեցու բակն լցուած էր հանդիսականներով։ Առանձին տեղ էր պատրաստած Սբբազան Հօր համար, առանձին տեղ՝ պատուարժան հոգաբարձուների և դպրանոցիս յարգելի ուսուցիչների համար։ Հանդիսականների համար էս ամբոռներ կային, բայց ոչ այնքան, որ բոլորին բաւականացնէր։ այնպէս որ շատերը կանգնած էին, կանգնած էին նաև դպրանոցիս աշակերտները։ Ուսուցիչներից մի քանիսը և ոմանք մեծ աշակերտներից հսկում էին կարգ ու կանոնի վերայ։

Ամբիոնը զրուած էր դպրանոցի մուտքի առաջ սանդուղքների վերայ, իսկ դռան վերև կախած էր ս. Վարդանայ նկարը։

Հանդէսը բացուեցաւ սովորական աղօթքով, որին հետևեց «Նորահրաշ» շարականը նուագածութեամբ։ Այս նորութիւնը և գեղեցիկ ներդաշնակութիւնն, որով երգեցին աշակերտներն այս հոգեւոր երգը, մեծ ապաւորութիւն գործեց հանդիսականների վերայ։

Ապա բեմ ելաւ դպրանոցիս ուսուցիչ պ. Հ. Աբովեանը, որ մի գեղեցիկ ուսումնասիրութիւն կարդաց։

Պ. Աբովեանի ուսումնասիրութեան հետևեց դպրանոցիս Զ. դասարանի աշակերտ Մ. Մուրադեանի ճառը. «Վարդանանց պատերազմի նկարագիրը»։ խօսումէր զգացուած, զգացուեցան նաև ունկնդիրները։

Ճառից յետոյ ասուեցան մօնին համապատասխան ոտանաւորներ. իսկ հանդէսն ամփոփից դպրանոցիս Տեսուչ՝ Բարձր. Տ. Բենիկ վարդապետը, խօսելով նահատակութեան մասին։ Բացատրեց թէ ի՞նչ ասել է նահատակութիւն, ո՞րն է գիտակցական նահատակութիւն և ո՞րը տգիտութեան արդիւնք։ Առաջ բերելով օրինակներ շեշտեց՝ որ նահատակ անուան արժանի է նաև Երևանի թեմական դպրանոցը. քանի քանի հաստատութիւններ նորա քոյրերը հարստացան և ապահովեցան, իսկ նա իր 63-ամեայ գոյութեան ընթացքում աչք չբացեց աղքատութիւնից և դեռ էլի տառապում է աղքատութեան մէջ։ Ճառը ազդեցիկ ապաւորութիւն գործեց հանդիսականների վերայ։

Ուրախանչիւր ճառից և ոտանաւորից յետոյ երգեցիկ խումբը երգում էր մօնին յարմար մի երգ, իսկ դպրանոցիս երաժշտական խումբն էլ նուագում էր։

Հանդէսը վերջացաւ Սբբազան Հօր բարեմաղթութեամբ։ Հանդիսականները գնուեցան խիստ գոհ, զգացուած և ոգեւորութեամբ լցուած։

Օրհնեալ լինի Վարդանանց յիշատակը, որ մեր քրիստոնէութիւնը, եկեղեցին ազատեցին հեթանոսութեան ձեռքից։

Հ. Յովակիմեանց.

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

— Իգամի մէջ կը կարդանք.

«Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը խընդրեր է որ գաւառներու Հայ վարժարաններու վերաբերեալ գիրքերը առանց մաքսի ղրկուին։ Արդարեւ, օրէնքը կը տրամադրէ որ գիրքերը մաքսէ զերծ մնան, բայց պայմանով որ այն վարժարանը,

որուն կը վերաբերին, պաշտօնական արտօնութեամբ բացուած ըլլայ։ Հետևաբար ձեռնհաս իշխանութիւնը ըստ այնմ պատասխան տուեր է Հայոց Պատրիարքարանին։ Եթէ այդ գիրքերը արտօնութեամբ բացուած վարժարաններու կը վերաբերին՝ հրահանգ պիտի տրուի մաքսային վերատեսչութեան, որ առանց մաքսի անցնին։»

— Նպաստից Ցանձնաժողովը որոշած է Մարաշի որբանոցի շէնքին մէջ արհեստանոց մը բանալ տալ այն 100 ոսկիի գումարով, զոր նուիրած են Ժամհարեան եղբայրները՝ Մոսկուայէն։

—20 Յունուար։ Խառն Ժողովը հրաւիրուած էր արտասովոր նիստ մը գումարել Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ, Ս. Պատրիարք Հայրը Ժողովին հաղորդեց Դատական գործոց նախարար Խարձր, Ապտիւրահման փաշայի կողմէ նախընթաց օր Ազգ. Պատրիարքարան ուղղուած պաշտօնագիր մը, որ կը զեկուցանէ թէ Կիլիկիոյ կաթուղիկոսական ընտրութեան հսկելու պաշտօնով՝ կրօնական գործոց տեսչի օգնական Պէհա պէյ ի մօտոյ պիտի մեկնի ժայրաքաղաքէս։ Հետևաբար, կը յարէ, հարկ է որ Պատրիարքարանի կողմէ կարգուած պաշտօնեան ալ ընկերանայ անոր։

—Մշոյ վանքէն Բաղէշ գացող Սրապիոն վրդ.-ի համար եղած ամբաստանութեան մասին կատարուած քննութեան տեղեկագիրները, զորս ղրկած էր Մշոյ ընդհ. վանահայր և առաջն. տեղապահ Տ. Բարգէն վրդ., Կրօն. Ժողովը որոշեց վեցամսեայ պայմանաժամով կանոնական տպաւորութեան ենթարկել յիշեալ Սրապիոն վարդապետը։

— Ս. Պատրիարք Հօր մեկնումին համաձայն, Ռէժիի վարչութիւնը յանձն առած է ամսական 1,500 բագէթ ձախիտ նուիրել Ազգ. Հիւանդանոցին։

— Կարօտեալներուն ի նպաստ մայրաքաղաքիս աղգայիններուն մէջ կատարուած հանգանակութեան արդիւնքը մինչև յունուար 8ը եղած էր 55,528, յունուար 9էն մինչև 15, մէկ շաբաթուան մէջ, 7,030, յունուար 16էն մինչև 22, մէկ շաբաթուան մէջ, 3,051, ընդհանուր գումար 65,609 ղրուշ։

—Հոգելոյս Երեմիա Սրբազանին Փոխանորդական Պաշտօնին պիտի փոխանակէ, հաւանութեամբ Ամեն. Տ. Ծարութիւն Ս. Պատրիարք Հօր, Տ. Ներսէս Սրբազան Գէորգեան՝ գարպասընկալ պաշտօնեան Ս. Ծակոբեանց Միաբանութեան՝ իբրև երիցագոյն եպիսկոպոսն իր աստիճանակիցներուն մէջ՝ հանգուցեալ նախորդին նման ալեփառ ու ալեւոյթ, բայց քաջառողջ ու զօրեղ մարմնով՝ որ կը յուսադրէ թէ՝ երկու պաշտօններն ալ կատարեալ ձեռնհասութեամբ պիտի գործադրէ։

— Փետրուարի վերջերը Խարիզի մէջ պիտի սկսի հրատարակուել Ջարդ անունով հայերէն նոր թաձեւութեան հանդէս մը՝ Տիկին Մարի Սրվաճեանի կողմէ։ Այս հանդէսը՝ որու մէջ Տոքթ. Պօղոս Քօլէճեան պիտի գրէ առողջապահական ու բժշկական հարցերու վրայ, պիտի պարունակէ նորելուկներու (nouvautés) բաժնէն զատ գրական մաս մըն ալ։ Պիտի խօսի կենցաղագիտութեան մասին, ձեռագործներու վրայ տեղեկութիւններ պիտի տայ, պիտի պարունակէ բարիգեան քրոնիկներ և վէպ մը. մէկ խօսքով բարիգեան նմանօրինակ հանդէսներուն հաւասար պիտի ըլլայ։ Ջարդ առաջիկային մէջ պիտի սկսի պատկերազարդ հրատարակուիլ։

— Կիպրոսի որբանոցի վարչութիւնը 10 ուշիմ որբեր ուզած է Պատրիարքարանէն, նոյն որբանոցին մէջ դաստիարակելու համար։

—Կիպրոսի որբանոցը մէկ քանի յաջող շրջանաւարտներ ունեցած է, որոնցմէ մէկը արդէն ուսուցչութեամբ կը պարապի. ուրիշ մըն ալ Խարիզ ղրկուած է, ուր Գեղարուեստից վարժարանը կը յաճախէ բարիզաբնակ ուսանողներու պաշտպանութեամբ։ Կը լսենք թէ Սոյ վիճակէն պիտի ղրկուին ուզած 10 որբերը։

—Խառն Ժողովը բացառարար գումարուեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանը, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Ալանեան Սեւրիան փաշայի։

— Ժողովը նկատողութեան առաւ Դատական նախարարութեան կողմէ Պատրիարքարան հասած նոր թեղրէրէ մը, որ կը հրաւիրէ անյապաղ ղրկել Պատրիարքարանի ներկայացուցիչը, ըստ որում Դատական նախարարութեան կողմէ կարգուած կրօնից տեսչի օգնական Պէհա պէյ քիչ օրէն պիտի մեկնի Առանձ՝ Կիլիկիոյ կաթուղիկոսական ընտրութեան համար։

—Ս. Երուսաղիմայ վանքին հիւանդութենէ մահանալէն Տ. Աստուածատուր սրբազան բաւական առնել իվեր հիւանդ ըլլալով՝ բժիշկները յոյս յայտներ են, որ ձմեռն անցնելէ յետոյ թերեւս բարւոքի առողջութիւնը՝ և գարնան օդափոխութիւն յանձնարարեր են։

—Գաւառական հովուութեան համար Պատրիարքարանը Տ. Ծարութիւն Ս. Պատրիարքէն վարդապետներ ուզած էր։ Ն. Սրբազնութիւնը այս անգամ պատասխաներ է, թէ վանական սովորութեան համեմատ ամէն վարդապետ 7 տարի վանքին մէջ աշխատելէ յետոյ կրնայ պաշտօն ստանձնել։ Հետևաբար այդ հովուութեանց յարմար գտնուող վարդապետներ տակաւին 7 տարիներ լրացուցած ըլլալով և վանքին մէջ անոնց ծառայութեան պէտք ըլլալով՝ չպիտի կարենայ գոհացում տալ Պատրիարքարանի խնդրանքին։

Եպիսիոյ տեղապահ Անանիա վրդ. Պատրիարքարան գրած է թէ տեղւոյն եկեղեցւոյն վերանորոգութեան կայս. հրամանը եղած ըլլալով, շինու-

թիւնը ի գլուխ հանելու համար 400 ոսկուոյ չափ գումարի մը պէտք կայ, որուն 130 ոսկին անցեալ տարի ապահովուած էր տեղական միջոցներով։ Պատրիարքարանը հազիւ առօրեայ կարօտութիւններու և գիմումներու կը բաւէ, հետևաբար չպիտի կրնայ գոհացում տալ այս խնդրանքին, որ տեղացիներու համար իր մասնաւոր կարևորութիւնը ունի, յարմար և ընդարձակ ազօթատեղի մը չգտնելուն համար։

Քղիի տեղապահ Վահրիճ Ծ. Վ. հակառակ ձմրան այս խստաշունչ եղանակին, այցելեր է բոլոր հայաբնակ գիւղերը, և ստուգելով ամէն մէկ գիւղի եկեղեցական կալուածոց որքանութիւնը, անոնց վերաբերեալ գրութիւնները առաջնորդարան փոխադրեր է։ Այժմ հետամուտ է եղեր գիւղական վարժարանները բանալ։ Կետրոնի ժողովները կազմակերպեր է և ամեն մէկ գիւղական վարժարանի խնամակալութիւններ հաստատելով։ Պատրիարքարանն ալ նպաստ խնդրերէ այդ աղքատիկ վարժարաններուն համար, անշուշտ առանց ստանալու։ Վահրիճ Վ. Քղի գաւառին մէջ վերաբանալ տուեր է ասկից առաջ գոնուած ընթերցարանը, որուն հոգը յանձներ է կարգ մը պարկեշտ երիտասարդներու։

Պէրութի վանքին տեսուչ Մատթէոս վարդապետ Գայրգճեան գաւառական կարօտեալոց նպաստելու համար՝ մէկ քանի կիրակի յաջորդաբար քարոզներ տալով, անցեալ Ծննդեան տօնին 60 ոսկիէ աւելի հաւաքուեր է, որ Պատրիարքարան պիտի ղրկուի։ Այդ գումարին 10 ոսկին Մատթէոս Վ. տուեր է։

Տիարբէքիրի տեղապահ Եղեկիէլ Վ. Ս. Աստուածածին վանքի վերանորոգութեան համար 200 ոսկիի նպաստ մը խնդրած է Պատրիարքարանէն, որ ժամանակաւորապէս չպիտի կրնայ գոհացում տալ, բայց կանասեր տեղապահին խնդրանաց, որովհետև հայցագրի համար եղած խնդրանքներուն իսկ շատ մանակի կերպով կը պատասխանուին։

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

ՌՈՒՍԱՀ ԵԿԵՂԵՑԻ

Ռուսաց լարեգործական հաստատութիւններէն մէկ շատ նշանաւոր տեղ է բռնում Ն. Կայսերական Մեծութեանց Հովանաւորութեան տակ գտնուած մանուկներէն ապաստարանները։ Կայսրուհի Մարիա Ալէքսանդրովնայի հոգաբարձութեան հրաատարակած հաշիւը ցոյց է տալիս, թէ ո՛րքան մեծ ընդարձակութիւն է տուեր Ռուսաստանում յատկապէս կոյսերի խնամատարութեան գործը։ 1898 թ. հաշուից երևում է, որ հոգաբարձութիւնը 41 հաստատութիւն ունէր նոր խնամքի տակ։ Սոյնպէս 23-ը կոյսերի համար դպրոցներ և արհեստանոցներ են այլ և այլ քաղաքներում, երեքը հանրակացարաններ երկու. սեռի կոյր արհեստաւորների համար, երեք ապաստանարան զառամեալ կոյսերի և 10-ը բուժարան՝ կոյսերի համար գանազան քաղաքներում։ Հոգաբարձութեան դրամագլուխը առ մէկին յունուարի 1899 թ. 2807992 ր։ Բարեգործական մի ուրիշ նշանաւոր հաստատութիւն է այսպէս կոչուած աշխատասիրութեան տներ։ Այս հաստատութիւնը Եւրոպայում շատ տարածուած է բոլոր ազգերի մէջ և քրիստոնէական ողորմածութեան վայել մի գործ է։ Աշխատասիրութեան տներ կոչուում են այն հաստատութիւնները, ուր անգործ բանուորներ, մշակներ աշխատել կարող են երեկոյ օրական ապրուստը հայթայթելու համար և այդպիսով ազատ կմնան մուրացկանութեան անբարոյական արհեստը դադարեցնելուց։ Քրիստոնէական բարեգործութեան ղղացումը մեզ թելադրում է օգնել իւրաքանչիւր թշուառի, որ անկարող է աշխատել հիւանդութեան կամ ուրիշ պատճառներով. առողջ մարդուն շարունակ ողորմութիւն տալ և ոչնչել նորա մէջ աշխատելու բարոյական զգացումը. հետու է ճշմարիտ ողորմածութեան գաղափարից։ Այս նպատակով էլ հնարուած են վերոյիշեալ հաստատութիւնները, որ Ռուսաստանում էլ հետզհետէ ընդհանրանում է։ Церк. Вѣст. հաղորդած տեղեկութեան համաձայն աշխատասիրութեան անունի հոգաբարձութիւնը առ մէկին դեկտ. 1899 թ 853997 ր. դրամագլուխ ունէր, որից անձեռնմխելի է 600896 ր. իսկ մնացածը սովորական և արտաքոյ կարգի ծախսերի համար։ Աչքի առաջ ունենալով Մ. Աթոռի աղքատների համար դործ դրած մեծամեծ ծախսերը և նորա կատարած շինութիւնները ու այլ և այլ մշակութեան դործերը, շատ հեշտ կերպով կարելի էր նման մի հաստատութիւն հիմնել և այսաեղ։

—Թագաւոր կայսրը հրամայել է հանգանակութիւն բանալ Ռուսաստանի մէջ յոգուտ Նիւեօրկի օրթոդոքս եկեղեցու շինութեան։ Հինգեօրդ տարին է լրանում այն օրից, երբ Նիւեօրկում հաստատուեցաւ ռուսական միսիոնարութիւնն ու եկեղեցին։ Այդ մի պատանի էր, որ ծագել էր ռուսական գաղթականութեան հոսանքով։ Ռուսները ցրուելով նոր աշխարհի մայրաքաղաքի մէջ՝ հետզհետէ կորուում էին իրենց

հայբենի եկեղեցուց և լեզուից: Շատերը պռակտում էին կաթոլիկ եկեղեցու մէջ, ուստի երեխաներին ստիպուած էին լատինական ծիսով մկրտել, յատկապէս լեհերի եկեղեցիներում: Հետեւեալ դէպքն առիթ եղաւ ռուսներին բաժանուելու լեհերից. մի անգամ, երբ լեհական մատուռը եկել էին ռուսներ ևս աղօթելու, քարոզիչը իւր քանախօսութեան մէջ ուրիշ հերետիկոսների հետ սկսեց նզովել և յոյն եկեղեցու հետեւողներին: Այնքան վիրաւորական էր այս դէպքը օրթոդոքս ռուսների համար, որ ամենքն ստիպուած էին թողնել եկեղեցին և հեռանալ. Ժողովները ժողովներ գումարեցին և վերջապէս վճռեցին դիմել Ալեսակինի եպիսկոպոսին, որ հաճէ գնալ տարին մի անգամ ռուս քահանայ ուղարկել հաղորդելու և պատարագ մատուցանելու համար: Ուղարկուած քահանան կարողացաւ համախմբել ցրուած օրթոդոքսներին և մինչև իսկ քարոզչական միաբանութիւն հաստատել, որ օրթոդոքս համայնքի կեդրոնը դարձաւ: Այնուհետև հետզհետէ ընդարձակուեցաւ օրթոդոքս քարոզչութեան տարածքը՝ ոչ միայն համախմբելով հայբենիքից եկած գաղթականներին, այլ և միացնելով Աւստրիայից գաղթած ռուսիաներին իրենց հետ: Այս յաջողութիւնն ի նկատի առնելով Ալեսակինի Նիկոլայ եպիսկոպոսը, խնդրագրով դիմեց Ս. Սինոդին Նիւեօրկում մշտական հովիւ նշանակելու համար: Բոլոր կրօնների Նիւեօրկում ունէին իրենց ներկայացուցիչները, ուստի աղդն ու եկեղեցին ևս պիտի ունենար իւրը: Կառավարութիւնը իւր կողմից 1000 ր. նպաստ նշանակեց մի քահանայ և տարեկան պահելու համար, իսկ այժմ բարձրագոյն հրամանով ժողովարարութիւն է սկսուած վաստակաւոր տաճար կառուցանելու համար: Առ այժմ Նիւեօրկի օրթոդոքս համայնքը իւր առաւելագոյն աշխատութիւնը կատարում է մի աղօթատան մէջ: Այս յաջողութեան շնորհիւ Նիւեօրկի ցրուած ռուսները բոլորը ոչ միայն համբուեցան իրենց մայրենի եկեղեցու շուրջը, և նկատելի կերպով բազմանում է համայնքի թիւը, այլ և կապուեցան մայր հայբենիքի հետ, նոյն ծէսերն ու սովորութիւնները, ինչ որ ունի Ռուսը իւր հայբենիքում, անպարտ կերպով պահպանում է հեռու պանդխտութեան մէջ. Ցօն օրերի համար այնքան փոքր է Նիւեօրկի աղօթատունը, որ ասեղ ձգելու տեղ չէ լինում բառի իսկական նշանակութեամբ. Ուսում և երեխաներին եկեղեցի չեն բերում. բազմաթիւ օտարազգաւանները, որ սկզբով կհամենային յաճախել օրթոդոքս եկեղեցու ծէսերը տեսնելու համար, ստիպուած են հրաժարուել իրենց ցանկութիւնից, զրկւում են մինչև իսկ ոչ ռուս ունիաներից: Այս դժուարութիւնները աչքի առաջ ունենալով Ս. Սինոդը 22 հազար դոլլար նպատակ է նշանակել եկեղեցու շինութեան համար վող ձեռք բերելու. Գնուած է արդէն հողը 36 հազար դոլլարով, իսկ եկեղեցու շինութիւնը կնստի մօտաւորապէս 50 հազար դոլլար. Այս նպատակի համար ահա բարձրագոյն հրամանով ժողովարարութիւն է սկսուած ամբողջ Ռուսաստանում:

— Բարձրագոյն հրամանով 1899 թ. դեկտ. 28-ից արևմտեան Ռուսաստանի Գրոդնոյ քաղաքում եպիսկոպոսական մի նոր աթոռ հաստատուեցաւ: Նոր թեմի կառավարութեան համար նշանակուած է տարեկան 35,896 ր: Նոր թեմի համար առաջնորդ է նշանակուած Լիտվայի եպիսկոպոսի տեղակալ Ցավակիմ եպիսկոպոսը. նոր թեմը մինչև այժմ Լիտվայի թեմի մի մասն էր կազմում:

ՑՈՒՆԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Անտիոքի նորընտիր պատրիարքի գործունէութիւնը. — Մելքիտոն նորընտիր պատրիարքը իւր հայրապետական աթոռի վերայ բարձրանալուց անմիջապէս յետոյ՝ բոլոր ուշադրութիւնը դարձրել է հոգևորականութեան կրթութեան վերայ: Մինչև այժմ հոգևորականների կրթութեան և նախապատրաստութեան գործը անփութութեան էր յանձնուած, ինչպէս մեր մէջ, բայց նորընտիր պատրիարքը, որպէս բարձրագոյն կրթութիւն ստացած մարդ, լաւ է հասկանում, թէ եկեղեցին իւր գաստիարակչական բարձր նպատակին ծառայել չէ կարող, մինչև արժանաւոր ոսպառնալները չունենայ, ուստի և իւր անձնական միջոցներով Բալամանդ վանքում հոգևոր դպրոց է հիմնել վեցամեայ ընթացքով և ընդարձակ ծրագրով: Моск. Вѣд. Թղթակցի ասելով հետևեալ առարկաները են մտնում ծրագրի մէջ. արաբերէն, մաթեմատիկայ, աշխարհագրութիւն, քաղաքական պատմութիւն, բնախօսութիւն, աստղագիտութիւն, փիլիսոփայութիւն, տրամաբանութիւն, լրատւական հանրագիտութիւն, թուրքերէն, յունարէն և ռուերէն լեզուները, սրբազան պատմութիւն, ծիսապաշտութեան և աղօթքների բացատրութիւն, քրիստ. վարդապետութիւն, քրիստ. բարոյականութիւն, նեռածութիւն Ս. Գրքի, մեկնաբանութիւն, եկեղեցական պատմութիւն, հայրաբանութիւն, եկեղ. իրաւագիտութիւն և երաժշտութիւն. Նորընտիր պատրիարքը առանձին ուշադրութիւն է դարձնում աստուածաբանական դիտութիւնների և լեզուներից արաբերէնի, յունարէնի և ռուերէնի վերայ: Հոգևոր դպրանոցի հոգաբարձու է նշանակուած Ցրիպոլսի մետրապոլիտը, իսկ տեսուչ՝

աստուածաբանութեան ուսուցիչ Կանդալաֆտ։ Անտիոքի պատրիարքութեան այլ և այլ կողմերից պատանիները դիմում են Բալամանդի դպրոցը, որ բացուել է ներկայ թուականի յունուարի 3-ին։ Դպրոցի աշակերտները առանց բացառութեան համաձայն են Ս. Պատրիարքի առաջարկութեան հետ, որ նրանց ուսումը աւարտելուց յետոյ պարտաւորուած են ծառայութեան մէջ մտնել պատրիարքի կարգադրութեան համաձայն։ Արեւելեան եկեղեցիների վերահաղորդութեան միակ ճանապարհը քրիստոնէական կրթութեան ճանապարհն էր, որ իմաստութեամբ ընտրել է նորընտիր պատրիարքը։

— Անցեալ տարի ապր. 4—16-ին Աւստրալիայի Սիդնէյ քաղաքում օծուել է օրթոդոքս առաջին եկեղեցին Ս. Երրորդութեան անունով։ Նոր եկեղեցու ծախսերը կազմուած են մեծ մասով Ցունաստանի և Թուրքիայի յոյն գաղթականներից և փորթաթիւ ռուսներից ու սլաւոնականներից։ Տաճարի շինութիւնը 1000 ր. է նստել։ Եկեղեցու վերաշինութեան սկզբնապատճառը Նոյ ատեմի Դամիանոս պատրիարքն է եղել։ Եկեղեցու աւագերէցն է Սերաֆիմ Փոկաս անունով անձը։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

— Հակակաթոլիկական շարժումը Աւստրիայում համեմատաբար այժմ խաղաղ, բայց դարձեալ անդադար առաջ է գնում։ 1899 թ. դեկտ. 17-ին խուռն բազմութեան ներկայութեամբ Տեպլիցից ոչ հեռու Տուբնում օրհնուել է (քաղաքականները ծաւմն չունէին) առաջին եկեղեցին, որպէս հետևանք այդ շարժման։ Նոր օրհնուած եկեղեցին ժամանակաւոր է և միայն 500 հոգու համար պատրաստուած. շուտով պէտք է ձեռնարկուի իսկական եկեղեցու շինութեան։

Հալլէի համալսարանի աստուածաբանութեան մանաւոր ուսուցիչ դր. Կլեմենը, որ իբրև հիւր ներկայ է եղել եկեղեցական հանդիսին, նկարագրում է այն ոգևորութիւնը, որով այժմ ընդունած են բոհեմիայի նորադարձները։ Կրօնական և հոգևոր կեանքը նորադարձների շրջանում շատ բուռն է և կենդանի, եկեղեցիներում կատարուած աստուածպաշտութիւնից պատ ժողովները են դումարում մանաւոր ընտանիքներում, կամ այսպէս կոչուած ընտանեկան երեկոները են կազմում հատարակաց դահլիճներում, ուր նորադարձների հետ հաւաքւում են և հին քրոջքականները։ Դատախօսութիւնները, երաժշտութիւն, բարեկամական խօսակցութիւնները ու յարուցած խնդիրները վերաբերեալ տպուած տետրակների տարածումն նպաստում են շարժման ընդարձակման։

— Բայց ինչպէս երևում է հակակաթոլիկական շարժումն սկսուած է նաև սլաւոնական տարրի մէջ։ Հին կաթոլիկ դր. Իլկան եւանգուն դարձուածութիւն է սկսել Չեխերի մէջ հռոմէականութեան դէմ։ Պրագում նա այժմ եկեղեցական—քաղաքական մի թերթ է հրատարակում Նարոդնի կարդիկ անունով, որով այն գաղափարն է քարոզում, թէ պէտք է սլաւոնական ազգ եկեղեցի հաստատել արտաքոյ հռոմէական գերիշխանութեան։ Թերթի ճակատը զարդարում է Հուսի պատկերը, որ կաթոլիկութեան առաջին հակառակորդ էր Չեխիայում և Լուտերի բարեվոխութեանց կարապետը։ Երկու սլովին քահանայ քողոքականութիւն են ընդունել և ժողովուրդը կամենում է մայրենի լեզուով Ն. Կատակարան ունենալ, բայց կաթոլիկ հոգևորականութիւնն էլ իւր կողմից անատրքը չէ մնում դէպի այս շարժումը։ Գրաւոր թերթերի և տետրակների միջնորդութեամբ, բերանացի՝ պատահոսութիւններով և քարոզներով համ ուրիշ միջոցներով ամեն կերպ աշխատում է մաքառել հակակաթոլիկական շարժման դէմ։

Հակակաթոլիկական շարժումն կայ ոչ միայն Աւստրիայում այլ և Պրուսիայում. 1880—1897 թ. կաթոլիկութիւնից քողոքականութեան դարձած անձանց թիւն է 40,000, այն ինչ նոյն ժամանակի ընթացքում քողոքականներից միայն 4400 հոգի են կաթոլիկութեան դարձել։ Կաթոլիկութիւնից քողոքականութեան դարձածների ամենամեծ առիւսը Շլեզիայինն է՝ 148,34 հոգի, այն ինչ նոյն նահանգում քողոքականութիւնից կաթոլիկութեան դարձողների թիւը 811 է։

— Կաթոլիկութեան հակառակ կարծես պօռանալ է սկսում և այսպէս կոչուած հին կաթոլիկութիւնը։ Այս նոր եկեղեցին ծագել է 1870 թ. յետոյ պապի անսխալականութեան վարդապետութեան դէմ քողոքողների ձեռքով։ Հին կաթոլիկները, ինչպէս իրենց անունն էլ ցոյց է տալիս, կամենում են վերանորոգել հին քրիստոնէական եկեղեցու կաթոլիկութիւնը։ Նոքա շատ բարեկամ են Հայոց եկեղեցուն։ Անցեալ տարուայ դեկտ. 17-ին Հռոմում մի նոր մատուռ են հիմնել։ Իտալիայի հին կաթոլիկների համար եպիսկոպոս է ընտրուել երբեմն Ս. Պետրոսի Կանոնիկոս Կոմս Էնրիկոյ Կամպելլոյ։ Նորընտիր եպիսկոպոսը օրհնեց նաև նորահաստատ համայնքի դրոշակը՝ ոսկեզօծ խաչ կարմիր ֆօնի վերայ։

— Բելգիայի վեց միլիոն բնակիչներից միայն 30000-ը քողոքականութեան են պատկանում։ Կաթոլիկ եկեղեցիների և մատուռների թիւը 5850 է 6600 քահանաներով, իսկ վանքերի թիւը 1784 է 3000 վանականներով և կոյսերով։

— Ֆրանսիայում հակակղերական շարժումը

նորանով վերջացաւ ու Աստուածպշնիանների միաբանութիւնը յուծուեցաւ։ Այս շարժումը պէտք է կանգ առնէր ներկայ տարուայ մէջ քայքայուելիք յունահանդիսի պատճառով։ Գրանսիական կառավարութիւնը ձգտում է այժմ ըստ կարելւոյն խաղաղութիւն պահպանել ներքուստ և արտաքուստ։ Խաղաղութիւն պէտք էր պահպանել և եկեղեցու մէջ։

— Սպանիայի տարեկան ծախսերի նախահաշուի մէջ հոգևորականութեան և վանքերի համար նշանակուած է 42 միլ. մարկ, իսկ հատուցարանի և գործոցական գործի համար 12½ միլ. մարկ։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Քրիստոնէական գեղեցիկ հաստատութիւններ են այսպէս կոչուած *կազդուրութիւն* վայրերը։ Ներքին մինոսիոնի կամ նման քրիստոնէական ընկերութիւնների ձեռքով գեղեցիկ, առողջարար օդով յայտնի վայրերում հիմնում են կազդուրելու հաստատութիւններ ամեն դասակարգի և հասակի մարդկանց համար։ Կազդուրուելու պէտք ունեցող, բայց նիւթական մեծ կարողութիւնից զուրկ անձինք այնտեղ շատ էժան գնով ապրել կարող են։ Ընկերութեան նպատակը միայն քրիստոնէական օգնութիւնն է և ոչ նիւթական վաստակը, ուստի և հնարաւորութիւն ունի համեմատաբար շատ ասելի էժան դնով յարմարութիւններ պատրաստել հիւանդների համար, քան առևտրական նպատակով հիմնուած նման հաստատութիւնները։ Ով ապրել է մեծ քաղաքներում խեղդուած օդի մէջ և գիտէ, թէ ինչպիսի մեծ նշանակութիւն ունի երկար, անընդհատ աշխատանքից յետոյ ամառուայ ամիսներում մի երկու շաբաթ հովասուն վայրերում հանգստութիւնը, նա կարող է ըմբռնել այս հաստատութիւնների նշանակութիւնը։ Եկեղեցին որպէս ողորմած և գթած Քրիստոսի հաստատութիւն, պարտաւոր է մտածել երբեմն նաև իւր խեղճ անդամների առողջութեան վերայ։ Մենք կարծում ենք ամենևին դժուար չէր լինի մեր մի քանի վանքերն այսպիսի նպատակների համար գործադրել։ Մանաւանդ այնպիսիները, որոնք քաղաքներին մօտ են և հանքային ջրեր ունեն, օրինակ Խծկոնից վանքը արևմտեան Շիրակում Կարսի և Ալէքսանդրապոլի մէջ, Ցակորայ վանքը Արցախի Խաչենոյ գաւառում Շուշուայ մօտ, որ մեծ քանակութեամբ և ընտիր հանքային ջրեր ունի։ Այժմ էլ ժողովուրդն օգտւում է, բայց կարելի էր այդ գործը կանոնաւորել և քրիստոնէական գեղեցիկ բարեգործական հաստատութիւն շինել, որ մինչև իսկ եկեղեցուն նիւթական օգուտներ բերէր։

— Լայպցիգում մի սարկաւագանոց պէտք է շինուի, որի համար ծրագրուած է մի միլիոն մարկ գործադրել։ 700000 մ. հանգանակուած է արդէն։ Այստեղից կարելի է եզրակացնել, թէ ի՛նչպիսի մեծ հաստատութիւն է այս և ինչպէս ժողովուրդը գնահատում է այն, որ միայն շինութեան համար մի միլիոն մարկ նուիրաբերութիւն է անում։

— Սաքսոնիայի Լաւուզիտց գաւառի բոլոր հայերը մի դաշնակցութիւն են կազմել իրենց հայերի համար սարկաւագուհիներ պահելու նպատակով։ Բողոքական եկեղեցու մէջ սարկաւագուհի նշանակում է հիւանդապահ կին, կամ ողորմածութեան քոյր, ինչպէս սովորաբար գործ ենք ածում ֆրանսերէնից կամ ռուսերէնից վերցնելով։ Իւրաքանչիւր պաստորի իշխանութեան տակ մի երկու այդպիսի քոյրեր խնամում են համայնքի մէջ եղած հիւանդներին և խեղճերին։ Ընտանիքի անդամները շատ անգամ անկարող են լինում իրենց հիւանդին լաւ խնամելու, կամ հրեմն մինչև իսկ հասկացողութիւն չունին, թէ ինչպէս պէտք է խնամուն և ահա սարկաւագուհիները օգնութեան են հասնում այդպիսիներին՝ վարժուած լինելով ըստ ամենայնի հիւանդապահութեան մէջ։ Այդ սարկաւագուհիներն են նոյնպէս աղքատների՝ յատկապէս կանանց և նոցա երեխաների խնամատարները։ Յաճախ սարկաւագուհիները մխիթարիչ հրեշտակներ են դառնում այնպիսի կանանց և ընտանեաց համար, որոնց գլուխն օր. արբեցող է, անհոգ իւր ընտանեաց համար։ Մեր եկեղեցին չունի այսպիսի հաստատութիւն. այդ գործը քահանաների վերայ է ընկնում կատարելու, բայց քանի՞ հոգի կարող ենք գտնել մեր քահանաների մէջ, որ իրենց քահանայական կոչումը այդպէս սուրբ և ընդարձակ մտքով ըմբռնեն։ Ցնորք կլինի մեծամեծ բաներ սպասել մեր քահանայութիւնից, մինչև որ քրիստոնէական կրթութիւնն ու գոնէ չափաւոր գիտութիւնն անպայման նախապատրաստութիւն չ'ընդունի քահանայական կոչման համար։

— Ժողովրդական բարձր դպրոցական դասընթացքներ սկսուել է և Լայպցիգում։ Առ այժմ դասախօսութիւն են կարդում երկու հոգի, առաջինն է ուսուցչապետ Բարր, որ խօսում է ականջի և լսողութեան մասին, իսկ երկրորդն պաստոր Բոնհոֆ, որ խօսում «քրիստոնէութեան և ներկայ ժամանակի բարոյական զգացման մասին»։ Երկրորդի դասախօսութիւնը հետևեալ մասերից բաղկացած կլինի ա). ընկերական և հասարակական առաքինութիւնների նշանակութիւնը. բ). Անձնաւորութեան նշանակութիւնը և անհատի պարտաւորութիւնը դէպի ինքը, գ). Ներկայ քաղաքակիրթ մարդու բարոյական պատերազմը, դ). Յիսուս Քրիստոսի կրօնը որպէս բարոյականութեան զօրութեան աղբիւր։

—Փոքրիկ Սաքսոնեան 17 գիմնազիա ունի 5983 աշակերտներով 231 դասարանում՝ տեղաւորուած, որով իւրաքանչիւր դասարանը միջին թուով 26 աշակերտ ունի: Պետական բեալական դպրոցների թիւը 10ն է, 3892 աշակերտներով 155 դասարանի մէջ, իւրաքանչիւր դասարանն 25 հոգի: Հասարակական 28 բեալ. գիմնազիաներն 8393 աշակերտ, իսկ աղջիկներանց բարձրագոյն (միջակ) դպրոցներ 1048 աշակերտուհի ունին: Այս թուերի մէջ չեն մտնում համալսարանի ուսանողներն ու ծխական դպրոցների աշակերտները:

— Դրեզդենի ներքին քարոզչութեան (միսիոնի) ընկերութիւնը նիւթական մեծ նեղութեան մէջ էր ընկերութեան համար առանձին շինութիւն կառուցանելիս պարտքերի տակ ընկնելով: Ընկերութիւնը հազիւ կարողանում էր պահպանել իր գոյութիւնը և մեծ երկիւղ կար, որ կաթոլիկութիւնը իր մրցութեամբ ոչ միայն աւելի մեծ յառաջադիմութիւն պիտի անէ, այլ և ընկերութեան տունը նոցա ձեռքը պիտի անցնէ: Այս հանգամանքը տեսնելով մի քանի հարուստ և իրենց մայրենի եկեղեցուն նախանձախնդիր քաղաքացիք իրենց մէջ հանգանակութիւն են բացել և կէս միլիոն մարկ նպաստ հաւաքել ընկերութեան օգտին:

— Սաքսոնիայում «աւետարանական ընկերութեան գաշնակցութիւնը» 28 ճիւղ ունի 4188 անդամներով: Այս գաշնակցութեան նպատակն է նիւթապէս և բարոյապէս նպաստել բողոքականութեան զօրանալուն և տարածման:

ԾԱՂԿԱՔԱՂ ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

«ՀԱՐՍԱՆՅ ՎԱՐԴԻՅ»,

որ 1723 թուին տպած էր ի Կ. Պոլիս:

— Մի եղբայր հարց արաւ հայր Անտոնին. «ի՞նչ կանոն պահեմ, որ հաճելի լինեմ Աստծուն.» պատասխան տուաւ ծերը և ասաց. «Ուր որ գնաս, միշտ Աստծուն քո աչքի առաջ ունենաս. ամեն գործածիդ համար վկայութիւն ունենաս ո. Աստից. և մի տեղ որ կենաս, շուտով չբժուխտես կամ աւելի լաւ է՝ տեղիցդ ամենևին չշարժուես.»

Հարց արաւ հայր Պամբոն հայր Անտոնին. «ինչ է աւելի օգուտ, որ գործեմ». ծերն ասաց. «Քոյս չըղնես քո սրդարութեան վրայ. անցած քանի վրայ չափոսաս. և զգուշութիւնով պահես լեզուդ և սրտիդ»:

— Մի եղբայր հարց արաւ հայր Բեսարիոնին. «ի՞նչ անեմ, ծ՛ով հայր»: Նա ասաց. «Լո՛ւռ կաց, ուրիշին մի՛ դատիր, քննի՛ր միայն քո անձը:

— Հայր Բեսարիոն վանճանուելիս իր աշակերտներին ասաց. «Միշտ ուրախ զուարթ կացէք, անդադար աղօթեցէք, ամեն վիճակի մէջ գոհ եղէք»:

— Երիցագոյ Աստուածաբանն ասաց. «Երեք բան է պահանջուում ամէն մկրտուած մարդուց. առաջին, ուղիղ հաւատ նրա հոգու համար, երկրորդ՝ նրա բերնից ճշմարտութիւն և երրորդ՝ սրբութիւն նրա մարմնից»:

— Հայր Եպիփանն ասաց. «Լաւ կըլինի, եթէ հնաը է, ամեն քրիստոնեայ կարդալ սովորէ ս. Գիրքը, որի միայն տեսքը աղդում է մեզ և պաշտպանում մեղքից, որչափ ևս առաւել նրա ընթերցանութիւնը, որ կեանք է տալիս մեր հոգուն և սիրել է տալիս արդարութիւնը. Մարդուս համար մեծ հաստատութիւն է անմեղութիւնն և սուրբ գրքերի ընթերցումը. Սուրբ Գրքից տգէտ լինելը հրեաների մեծ խոչընդոտ է և խոր խաւար: Աստծու օրէնքները չիմանալը՝ կեանքի անկում և կորուստ է»:

— Ոչ ոք չի առանալ Քրիստոսին, բայց եթէ Չանքով. քրտինքով, խոնարհութեամբ և միշտ աղօթելով:

— Երեք եղբայր դնացին հայր Պաւինոսեի մօտ և խնդրեցին մի շահեկան բան ասել նրանց. ասաց ծերը «Ի՞նչ բան էք կամենում, որ ասեմ, հոգևոր թէ մարմնաւոր»: Ասացին «Հոգևոր»: Ծերունին պատասխանեց. «Գնացէք, սիրեցէք վիշտը առաւել քան հանգիստը, արհամարհանքը քան վաստքը, սիրեցէք տալ, քան թէ առնել»:

— Մի վաճառական ժողովեց շատ քաղմապիսի ակունք և իւր ծառաների հետ նաւ նըստեց, որ տանէ օտար երկրում ծախէ. Նաւավարներն այս նմանալով, խորհուրդ արին իրենց մէջ, որ սպանեն վաճառականին և նրա ծառաներին և յափշտակեն ունեցը: Վաճառականի փոքրիկ սպասաւորը՝ լսելով չարամիտների դաւադրութիւնը՝ յայտնեց իւր տիրոջ: Սա այն ժամանակ կանչեց իւր ծառաներին և ասաց. «Ինչ որ հրամայեմ՝ իսկոյն կը կատարէք»: Բերել տուաւ մի մեծ սիրուց, մէջը թափեց բոլոր ակունքը, չըթողեց իւր մօտ և ոչ մի հատ ու հրամայեց ծառաներին բոլոր նաւատների աչքի առաջ թափեն ծովն, ասելով. «Չնչին, խաբուսիկ նիւթ, որ պիտի պատճառ լինիք այնքան մարդու կեանքից զրկուելուն և այնքան սքանչացողների հոգիների կորստեան»: Նաւատակները մնացին սար-

ատիաճ, ապուշ կարած, կորագլուխ և զղջացին իրենց չարամտութեան վերայ:

— Ս Գրքի «Ի վայր քաղում՝ ցնծացէք հոգի, եւ ոչ նայէք բարիութեան, անդ լինալ է կռիւ» խօսքերը այսպէս է բացատրել հայրերից մէկը. կրակի, ըսկզ պատճառը վայրի չտուութեանն է, եթէ վայրա չլինի, կրակը կը հանգչի. այսպէս են և ախտերը. ով որ ախտերի պատճառը կտրէ, կը վերջանան և ախտերը. անտուտութեան մի պատճառն էլ վարթամ ուտել խմելն է, քնից յաւիրանալն է, պարապ մնալն է, դատարկ խօսակցութիւնն և վատ ուղեկից հատնելն է:

— Ամէն բանի մէջ մենք պէտք է դատենք և մեղադրենք մեր անձը, այն ժամանակ հանդիստ կլինենք. այդ է ճշմարիտ ճանապարհը քրիստոնէի:

— Նոր կրօնաւորը նման է կաւեղէն անօթի, որ դեռ կրակի մէջ չի ընկել, եթէ նրա մէջ ածես պինդ, ձէթ, իւղ ևն., կը քայքայուի և միջի եղածը կը թափուի, բայց կրակի մէջ թրծելուց յետոյ՝ կը դիմանայ. այսպէս էլ երիտասարդը տակաւ առ տակաւ պիտի իրեն պատրաստի տիրուներութեան: Մարմնի և հոգու կրակի բովից անցնելն է աշխատութիւնը և ժուժկալութիւնը. չափաւորութիւնը կանոնաւորում է մարդու ուտելու խմելու գործարանները, հեռու է պահում մարմնական և հոգեկան հիւանդութիւններից, սրբում է ուղեղը վարթամութեան աղտեղի դոյզչիներից, աւելի պայծառանում է աչքերի սրատեսութիւնը, ցամաքում է խուխը, որն աւելի լմիչքներից է դոյանում. այդպիսով մարմինը թեթեւանալով, ոչ յոգնում է և ոչ հիւանդանում, շատ է ապրում:

— Սերոյ նշանները սրանք են. ցանկանալ լսուել իւր սիրելի վրայ, շատ անգամ յիշել նրան. առանց ձանձրանալու ծառայել նրան. անձրդ ու կայգդ չկնայես նրան զոհել, դգուշանալ նրան վիրաւորելուց, եթէ ուրիշին նեղացրած լինի, աշխատես հաշտեցնել նրա հետ. ցաւակից լինես նրա վշտի ժամանակ. լռդալ նրա մտածելու ժամանակ, ցաւել նրա հեռանալու վրայ, սիրել նրա սիրելիներին, ջանալ հաճոյանալ նրան, վախենալ նրան դիւր չգալուց, դրաւել ուրիշներին, որ նրան սիրեն, նրանից առացած պարգևներն ուրիշին չտալ, նրա խրատները հաւանել, համարձակ յուսով խնդրել նրանից, ինչի որ պէտք ունես:

— Լաւ է մի տուն սազմոս ասես հասկանալով, ըմբռնելով, քան թէ հազար տուն առանց հասկանալու և միտքը քննելու:

— Կրօնաւորի մեծ պարծանքը աղքատութիւնն է *:

Նիկոդայոս արեղայ Տ. Աւետիքեանց

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՃԻՌՆԵՐ

(Fried. Wagner)

Հնդանուական եւ բիւսոնական քարոյականութիւն. Քրիստոնէական քարոյականութեան դերադոյն սկզբունքն է կամքի բարութիւն, հեթանոսականինը՝ կամքի կորուստ: Սակայն այս չի նշանակում, իբր թէ այնտեղ կորուի կամքը և այստեղ բարի կամքը անտարբեր կամ անյայտ բան է. այլ, թէ քրիստոնէական քարոյականութեան մէջ «գործեղութեան» չափը երկրորդական է համաբուտ «բարութեան» չափի հանդէպ, և թէ հեթանոսական քարոյականութեան մէջ հակառակ չափն է ներում:

Բայց և այնպէս սրտի բարութիւնն ու բարուրը գործելու ձգտումը քրիստոնէի աչքում առաջին առաքինութիւնն է միւս առաքինութիւնների մէջ և գլխաւոր պայման քարոյական հաւանութեան համար: Իսկ ընդհակառակ հեթանոսաբար մտածողը առջինից աւելի նշանակութիւն կուտայ ուժին և կորովութեան, այն ևս հաւատարապէս, որդեօք լմնի թէ վատ նպատակների համար գործածուի: Հետևապէս քրիստոնէաբար խորհողն առաջ—բարի՝ բայց թոյլ կամքը թողութեան կարժանանայ, իսկ—զօրեղ՝ բայց չար կամքը - ոչ. մինչդեռ հեթանոսը վերջինը կը գերադասէ առաջինից աւելի:

Թէպէտ այս երկու կարգի գնահատութիւնը չեն սահմանուել հեթանոսական և քրիստոնէական կրօնների, այլ այնչափ հին են, որչափ քարոյապէս դատելու մարդկային սովորութիւնը. սակայն մենք կարող ենք որպէս հեթանոսական ոգու ըղձած անուանել, իսկ միւսը՝ որպէս քրիստոնէական ոգու ներգործութիւն կոչել, որովհետև առաջինն այնտեղ է լշտում, երկրորդն այստեղ:

---

* Ա.ր.ժ. Տ. Նիկողայոս արեղայի «ծաղկաքաղը» կարծում ենք շատ հաճելի եւ մատչելի կլինի մեր բահանաների եւ հասարակ ընթերցողների համար, ուստի եւ այս նիւթի սպառուելուց յետոյ, որ մի քանի համար կշարունակուի, կպատրաստենք ծաղկաքաղներ աւելի նշանաւոր հեղինակների եւ քարոյախօսների երկերից:

Խմբ.

Դատաստանի կամ արդարութեան առաջ, ինչպէս և կրօնական կղզի առաջ, հաւասար միշտ աւելի կշիռ է ունեցել կամքի բարութեան չափը։ Բայց մարդկանց բարքերի մէջ, արամադրութիւններին, հակումներին, համակրութիւնների և առհասարակ այս բաներից կախուած անձնական կարծիքների և դատողութիւնների մէջ՝ մինչև այս օր շարունակ կենդանի են մնում երկու տեսակ համարումները, անդադար իրար մէջ են խառնվում և կցորդվում, ուստի և շատ անգամ դժուար է լինում մեզ շրջապատող մարդկանց և իրանց գործերի մասին՝ միակերպ կարծիք կազմել։ Վասն զի իւրաքանչիւրն իւր բնութեան համեմատ աւելի այս կամ այն կողմը կը հակուի։ Ով որ աւելի կամքի այժ ունի, նա այդ յատկութիւնն էլ ուրիշների մէջ աւելի բարձր կը դասէ. իսկ որոնց առաւելութիւնը սրան չերմութիւնն է, նոքա մարդկանց մէջ ևս նախ և առաջ կը նայեն, թէ ինչ է նոցա սիրտը։ Իսկ ով որ ստոյգ է աւելի առարկայական հայեցակէտով տեսնել և գնահատել աշխարհքը, ուրեմն բանաստեղծներն ու արուեստագէտները կամ առհասարակ գեղարուեստամբ զգացողները, նոքա գործել աւելի դերադասում են կամքի այժը, քան լոկ միայն անոր բարութիւնը, վասն զի նոքա այն չեն հարցնում, թէ մարդս ինչ տեսակի է պատկառում (չար է թէ բարի), այլ թէ իւր տեսակի մէջ որչա՞փ կատարելութեամբ է բացուել և ծաղկել։

Վիճակ եւ բնաւորութիւն. Ճշմարիտ է, որ կեանքի մէջ շատ անգամ «բնաւորութիւն» են անուանում, երբ որ ուզում են մէկի վիճակը, պարապմունքը կամ դատակարգը յայտնել—«զինուորի, վաճառականի, գործնեայի բնաւորութիւն»։ Այս դարձուածների նոյնացումը անշուշտ այն ենթադրութիւնից չի ծագում, թէ մարդկի վիճակ են ընտրում իրանց բնաւորութեան համեմատ, այլ հիմնուած է միտքի վրայ, թէ շատերի բնաւորութիւնը կազմվում է իրանց ընտրած վիճակով, որովհետև իրանց նեղքին մղումները հարկաւ ընտրած պարապմունքի կողմն են հակվում. այս բանի վերայ յատոյ աւելանում է ամբողջ միջավայրի հաւատարեցուցանող դերշմն ու ներգործութիւնը, որ ամենայն դատակարգի կամ տոհմանի յատկութիւն է կազմում։ Ով որ իւրն ինքնուրոյն յատուկ մղումներով օժտուած չլինի, նոքա բնաւորութիւնը հէնց սկզբից այնչափ անորոշ, թոյլ և փոփոխական կը լինի, որ միայն յետոյ կը կազմակերպուի, այս կամ այն ընտրած ճիւղի կամ պարապմունքի ներգործութեամբ՝ վերջապէս ընկերութեան յատուկ անդամ դառնալու հաւանորդուի, որոշ կնիք, ուղղութիւն և ձև կը ստանայ։ Շատ սակաւ մարդիկ առաջուց այնքան բնաւորութիւն են ունենում, որ ոչ թէ պատահական բախտի տակ ճկվում և պատշաճանում են, այլ ընդհակառակ ամէն բանի լուծին ներգործաբար կամ կրաւորաբար ընդդիմանում են, իսկ եթէ առերևութապէս արտաքուստ ընկճուին ևս, դարձեալ իրօք անփոփոխ են մնում ի ներքուստ և իւրեանց բնակից մղումները աւելի ևս զօրացնում և բարգաւաճեցնում են։

Այժմ լինքնին հարց է ծագում, արդեօք մարդու վարքն ու գործերը իւր բնաւորութեան պատուղ են, թէ բնաւորութիւնը գործերի արդիւնք է։ Տարակոյս չկայ, որ մարդու մէջ երկուսն էլ կատարվում է, այսինքն թէ բնաւորութիւնն ու վարքը փոխադարձաբար իրար վերայ ազդում են։ Եւ այս դէպքում վարքի ներգործութեամբ հատ հատ մարդկանց հակումները փոխվում են շատ զանազան աստիճանով, վասն զի նոյ բնաւորութիւնը գործերի արդիւնք է դառնում մէկի մէջ պակաս, միւսի մէջ աւելի չափով, և ընդհակառակ բնութեան նախնական կնիքը մի մարդու վարքի վերայ աւելի զօրութիւն է ունենում, քան միւսի կեանքում։ Այնտեղ ուրեմն բնաւորութիւնը առաւելապէս բնական է, այստեղ առաւելապէս ստացական է։

Ուրեմն իսկապէս առնելով սխալ չէ այն կարծիքը, թէ բնաւորութիւնը կարելի է կրթել։ Ա՞յ ապաքէն այդ ենթադրութեան վերայ է հիմնուած դաստիարակութեան յոյսը, կամ թէ զանազան վիճակի, դասերի և մարմինների անդամ դառնալու հնարաւորութիւնը։ Սակայն այսպիսի գործերը յաջողութիւն կարող են ունենալ միայն այն դէպքերում, ուր որ կամքի նախնական ուղղութիւնը այն մնաբանութեանց մէկի կամ միւսի սկզբունքներին համաձայն է ընթանում. բայց այն ժամանակ այդպիսի ազդեցութեամբ բնաւորութիւնը ոչ թէ փոխվում է, այլ զօրանում, որոշվում և ձևանում է։ Մանաւանդ որ այս դէպքում ձգտում կայ ոչ թէ անհատական բնաւորութիւն կազմելուն, այլ հանրական կամ տիպարական բնաւորութիւն ընդունելուն, այսինքն այն՝ որ համապատասխան վիճակի կամ պարապմունքի որոշ կնիքն ունի։ Իսկ որոնց վերայ որ ջանքը ապարդիւն է մնում և որոնք վիճակակից ընկերներին համար անտանելի են իրանց բնաւորութեամբ, իրօք արդէն օժտուած են լինում անհատական ինքնուրոյն հակումներով, ուրեմն և ընդ աւելի բնաւորութիւն են ունենում, քան որոնք դիւրութեամբ են յարմարանում։ Այդպիսիք մի երկ ունին. կամ բացէիրաց ընդդիմանալ փոխոխութեան փորձերին և աւելի իւրեանց անհատական ինքնատիպ բնաւո-

րութեամբ զօրանալ, և կամ նւրեանց նախնեաց անհատականութիւնը կոտրել և յամենայն դէպս ընկերների բնաւորութիւն ոտանալ։ Հարկաւ այս վերջինը մեծ մասով չի յաջողվում. ստացած բնաւորութիւնը լոկ դիմակ է դառնում, կամ եթէ երկրորդ բնութիւն ևս դառնայ, առաջին բնութիւնը միշտ ի ներքուստ կըմբոստանայ, և ուրեմն այն ներքին երկպառակութեան հետքերը երբէք ևսպառ չեն ջնջուի։

Նորոգ ծնունդ. Ճշմարտապէս նորոգ ծնունդ համար հարկաւոր է ոչ թէ մի յաղթութիւն գործել, այլ մեր ներքին բնութիւնը ազատել այն սևալ պահանջներից, որ աշխարհքի սովորութիւնները մեր առջևն են դնում և մինչ էլ անմռունչ ընդունում ենք, որպէս բարոյական պատուէրներ։ Ուրեմն այստեղ յաղթող է հանդիսանում ոչ թէ պարտաւորութեան զգացումը, այլ պարտութիւն է կրում սևալ պարտաւորութիւնը, որով և նորոգ ծնվում ենք։ Մեր ամէն տեսակ վատթար հակումները և մանր անձնապաշտական շարժառիթները, որոնք մեր բնաւորութիւնը միշտ և հանապազ աղաւաղում և մեր հոգին ճնշում են, մի և նոյն ժամանակ պատճառ են դառնում, որ մեր մէջ սկսում է լչվել թիւը պարտաւորութեան զգացում։ Ում մէջ որ արտաքին պահանջները հաշտ և հաւան են ներքին կարիքներին և պիտոյքներին, նա կարող է պարտաւորութեան զգացում չունենալ, կարօտ չէ այդ բանին։ Բայց հէնց այդ պատճառով մեր բնութեան ազնուագոյն բաժինը կը վիրաւի և նորոգ կը ծնուի, երբ որ այն աւելորդ պահանջմունքների լուծը թօթափուի։

Օրինաւոր եւ անբասիրական քաղաքացիի սահմանը. Քրիստոնէութիւնը մարդկութեան վարդապետեց, թէ մեր հոգու մէջ ուրիշ բարոյական զօրութիւններ ևս կան, քան լոկ միայն մաուրը զուարճութեան պահանջն և անձնապաշտութեան նրբագոյն ձևերը, որով նախնեաց փիլիսոփայութիւնը կամենում էր լչվել բիրտ բաղձանքների և մոլութիւնների վերայ։ Կրօնական հայեցողութիւններով զարթուցանելիք աւելի բարձրագոյն հասկումները աւրիշ խորհուրդ չպէտք է ունենան, բայց եթէ անձնասիրական, ցանկական կամքը յաղթահարելու։ Իսկ որովհետև անհնարին է այս վերջինը իսպառ ոչնչացնելու, ապա ուրեմն հարկաւ ջնջնորական և ապարդիւն պիտի լինի այն ամենայն ջանքը, որ աւելի հեռու է ձգտում, քան ճնշելու միայն վնասակար և անբարոյական բաղձանքը։ Բայց արդեօք անմեղ և վնասաբեր ցանկութեանց մէջ սահմանը որտեղ դնուի, այս մասին քրիստոնէական վարդապետները երբէք բացայայտ և որոշ չեն խօսել։ Եթէ ուզենանք քաղաքութեան վայելումը՝ որպէս մարդու բարձրագոյն ծայրագոյն ցանկութիւն՝ որոշել լոկ ներելի չափով բաղձանքը դոհացնելուց, այն ժամանակ կարելի է առարկել, թէ անհնարին է քաղաքութիւնը անջատել կարիքի տպչորումը մեղմացնելուց կամ դադարեցնելուց, զոր օր. ծարաւի ոսկ պապակը կտրելուց, և ուրեմն անկարելի է որոշել, թէ այդպիսի դէպքում արդեօք քաղաքութիւնը մարդու ուզած մոլի ձգտում է դառնում, թէ առանց ուզենալու ինքնին մէջը խառնվում է։ Ով որ կերակուր է առնում, նա իր սովը յագեցնելով՝ մի և նոյն ժամանակ քաղաքութիւն է վայելում, բայց և այնպէս այս կարիքին լրումն տալը չպէտք է նախատուի, որովհետև հարկն այդպէս է ստիպել։ Ուրեմն ինքն ըստ ինքեան քաղաքութեան ձգտմամբ՝ ոչ մի բաղձանք անբարոյական չի դառնայ։ Այլ եթէ մէկը իր փորը աւելի է լցնում, քան որչափ որ սովը պահանջում է, այնպէս որ նա քաղաքութեան ճաշակումը միակ շարժառիթ է դարձնում, այդպիսի ցանկութիւնը միայն համարում ենք դորա մէջ պարսաւելի։ Բայց ինչպէ՞ս է պանդանվում այսպիսի մերժելի քաղաքութիւնը անմեղ քաղաքութիւնից։ Պարզ է, որ երկուսն էլ նոյն բնութիւնն ունին, միայն թէ տեսչանքի աստիճանը զանազան է։ Անշուշտ խարութիւնը ծագում է ներգործութիւնից չափով վայելումը պահպանում, մնանում և զօրացնում է դործող այժերը, որ նոյն է թէ բարոյական այժերը, իսկ չափազանցութիւնը թուլացնում է անոնք, և ահա այսպիսի վարձից կազմվում է մեր դատավճիռը։

Ճշնաւորները սևալ կերպով ըմբռնեցին այն սահմանը, որ կայ օրինաւոր՝ ըստ որում կարևոր՝ և չափազանց պիտոյքների մէջ, և նոքա վերջինների պէս առաջիններն էլ հալածեցին և արմատով ջնջել ուզեցին։ Նոքա նաւազագոյն չափի վերածեցին կեանքի պահպանութեան համար անհրաժեշտ կարևոր պիտոյքները և այդ բանով իրեանց ֆիզիքական այժերը թուլացուցին։ Իսկ մի քանի կարիքներն իսպառ ճնշել վարձեցին, նոյն իսկ հոգեկան վայելքները անհնարելի համարեցին, որով վնասեցին իրանց ներքին աշխարհն նաև այն զօրութիւնները, որոնց վերայ որ հիմնուած են մարդու մաքուր հակումները։ Մենք այսպէս տեսնում ենք, որ չափազանց ժուժկալութիւնը նոյնչափ վնասակար կարող է լինել, որչափ և մոլի ցանկութիւնների շուայտութիւնը։

Բաղձանքների յաղթութիւնը միայն այն դէպքում օրինաւոր սկզբունք կարող է դառնալ, երբ որ վարձով և խղճով բարւոք ճանաչուած չափ է պահպանվում, ուր հարկաւ առաջին նշանակութիւն պիտի ստանան բարոյական և կրօնական հայեցողութիւնները կամ կարիքների բնական զօրութիւնը։

Եղբայրախոհական պատուերը Եթէ սէրը ծագում է այն բանի ազդմամբ և համոզմամբ, ինչ որ մէկը մեզ հետ հաւատով հաւատարմութեամբ ունի, որով մենք նորան նման և համասեռ ենք հանդիսանում, ապա ուրեմն հնարաւոր պիտի լինի խրատով և մեր մէջ սէր զարթուցանել, և եղբայրասիրութեան պատուէրը այնուհետև հակառակական գաղափար չի լինիլ, ինչպէս որ ոմանք կարծում են, երբ թէ սիրել ընկերը շատ անգամ նշանակում է սիրել առելի արատները։ Միայն հարկաւոր կը լինիլ, որ սովորութիւն առանձնք ներքանչիւր մարդու մէջ միմիայն այն բանի վերայ միտ դնել և այն աչքի առաջ պահել, ինչ որ նա մեզ հետ հաւատով նմանութեամբ ունի, նոյնպէս և անվսեմ թողնել այն ամենայն, որով որ մենք նորանից խորութիւն ենք կազմում։ Ի հարկէ այս բանի համար յատուկ ատղանդ պիտի ունենալ, բայց և այնպէս, թէ և շատ անպատ դժուար է, ոչ որի համար անհնարին բան չէ այդ պարծը, որովհետև շատ ու քիչ բարոյ ներքանչիւր մարդուն նման ենք, դէթ այն հանդամանքով, որ ամէնքս էլ մարդ ենք։

Հարկաւ մենք չենք կարող կամաւ խափանել, որ չտեսնենք այն ամէնը, ինչով որ ուրիշը մեզանից խոտորվում է և ինչ որ այդ պատճառով մենք առում ենք. բայց եթէ այն պատուէրը և պատուէրը կատարելու խղճը մեր մէջ կենդանի լինին, մենք միշտ կաշխատանք այդպիսի վարուգերթիւնները երկար դիտելու դէպքերից խորշել և առելի և առելի սովորութիւն դարձնել միշտ վառ պահել մեր մտքում միայն նմանութիւնները և առհասարակ մեր ընկերների ուրիշ ամենայն սիրելի յատկութիւնները, որով այնուհետև համապատասխան դարձք և վարք ու բարք լոյս կու գան։

Բայց այժմ խնդիր է դառնում, արդեօք սէրն երբ ուրիշների հետ նման լինելու նմանութիւն է ծագում։ Մեթէ չէ պատահում, որ մարդուն սիրենք այնպիսի յատկութեան պատճառով, որ հէնց մեր մէջ չի գտնվում։ Եւ ընդհակառակ՝ մեթէ չենք կարող առել մէկին, որի մէջ նշմարվում են հէնց մեր ունեցած յատկութիւնները։ Արդեօք նախանձողը միշտ նախանձողին է սիրում, կամ մեծամտինը՝ մեծամտին։ Եւ առաջինը պիտի առէ անհնահանձին, իսկ երկրորդը՝ համեստին։ Անհատ անական չէ, թէ իւր ընկերի մէջ այնպիսի արատ նշմարողը, որ ինքն էլ իւր մէջ ունի, հէնց այդ պատճառով համակրական աչքով կը նայէ նորա վերայ։ Իսկ եթէ մէկին ազատ դանէ այդ արատից, նորանից իւր երեսը կը դարձնէ, որովհետև նորա առաջ նուաստացած կզգայ իւր անձը։ Այն առածը, թէ «որը նմանին՝ միսքանին» կամ «նմանն զնմանն սիրէ», ճշմարտանում է ոչ միայն ընտրեալ դէպքանցների մէջ, այլ և հատարակ մարդկանց կեանքում։ Իսկ ուր որ հակառակ նկատումն է նկատվում, այն ինչպէս պիտի է մեկնուի։ Եթէ ես մէկին սիրում եմ մի բարեմասնութեան պատճառով, որից որ ինքս զուրկ եմ, մի խօսքով այն պատճառով, ինչով որ նա ինձ նման չէ, այս դէպքում սիրոյ հիմքն ինչ է կազմում։ Ակնյայտնի է, որ ես այն յատկութիւնը արդէն հանկաւ սիրել եմ, կամ ուրիշի մէջ տեսնելով, կամ in abstracto—վերացական պատկերով. իսկ այս բանն էլ հնարաւոր կը լինէր միայն այն դէպքում, եթէ իմ մէջ այն բանի որոմագրութիւնը եղել է լինէ, թէպետև թոյլ աստիճանով, այնպէս որ այն ինձ համար հարցանելու և անձկալու ձգձ է դարձել։ Բայց այս նշանակում է, թէ այդ դէպքում էլ սէրը մի ուրիշ անձի ինձ հետ ունեցած նմանութեան ծանօթութեան վերայ է հիմնաւած, և ուրեմն իմ սրտի պահանջ է այն նմանութիւնը։

Ձշմարիտ վարդապետութիւն քարոյականութեան. Եթէ ոմանք մարդկային ընութեան մէջ ամենայն արդարութեամբ զանազանում են կեանքի մէջ դործելու և կեանքի քաղցրութիւնները վայելելու կարիքները, և առաջինը համարում են բարոյականութեան արմատ, իսկ երկրորդը անբարոյականութեան դուռ, այդ այն նշանակութիւն չունի երբ թէ քաղցրութիւն ճաշակելու հակումները պէտք է ընկճուին կամ ընաջնջ լինին, այլ այն միայն, թէ անոնք պէտք է ծառայեցնել գործելու պահանջներին, ուրեմն պէտք է լոկ միայն առորակարդել վերջինների ներքոյ։ Անոնք պէտք է միայն այնչափ լրումն առանան, որչափ որ այդ քանը օդտաւէտ կարող է լինել ներգործական հակումների շահերին. մինչև անգամ քարոյական պատուէրն է, որ առողջութեան և զօրացման համեմատ անպատճառ անոնց լրումն տուն է։ Բարոյականութեան մաքուր և չպղտորած վարդապետութիւնը միայն այն է պահանջում, որ Գործելը միշտ ամէն պատուէրների վերագոյն սկզբունքը դառնայ և ոչ թէ քաղցրութիւն ճաշակելու ծառայութեան կոչուի։

Ընդհակառակ անբարոյական սկզբունքների կամ մոլար վարդապետութեանց յատուկ դրոշմն այն է, որ քաղցրութիւն վայելելը կամ, ինչպէս որ աւելի յարմար են դատում ասել, հաճութեան և զուարճութեան ղգացումները՝ հաչակում են որպէս դործելու նպատակ կամ շարժառիթ, որով բաղձանքներն այլ ևս ոչ թէ ներգործական հակումներին են ապատաւորում, այլ ամենք առանց արբանեակ են դառնում։ Այս սկզբունքը հասկնում է կամ միայն դէպի անձնասիրական գործունէութիւն, կամ, եթէ քաղցրութիւնը հնարաւոր լինի ճաշակել առանց մատի ծայրը շարժելու, ապա ոչ մի գործունէութիւն։

ժելու, նաև դէպի մի վիճակ, ուր որ մարդս քնաւ թողնում է տակուռնութիւնը, այսինքն ուր ոչ նա անշարժութիւնից լճանում է։

Իսկ քաղցրութեան ճաշակման բոլոր կարիքների իսպառ ընկճումը կամ քնաջինջ առնելը նախ անհնարին բան է, և երկրորդ՝ վնասակար է բարոյական հակումներին, վասն զի կը թուլայնէ, ղլանալով հարկաւոր անունդը։ Ինքն ըստ ինքեան մի ուղիղ սկզբունքի այսպէս ծայրայեղ չափազանցութեամբ գործածութիւնն էր ճգնաւորների սխալը։

Ուրեմն ճշմարիտ վարդապետութիւնը պահանջում է քաղցանքները սիրապետել, և ոչ թէ մեռցնել, և անոնց թշնամի է հանդիսանում միայն այն դէպքերում, ուր որ անոնք խոչընդոտ են դառնում և նուազեցնում են ներգործական հակումների կանոնաւոր պաշտօնն և առողջութիւնը։

Ո՛չ թէ թախտաւորութեան ձգտիլ։ Եթէ մենք ի նկատի առնունք, թէ ինչպէս քնութիւնը ամեն նեւրն միտք չունի մարդու բարեկեցութեան և բախտաւորութեան մասին, հապա մենք պէտք է հասկանանք, թէ երկրի վերայ մեր կոչումը այն չի կարող լինել, որ բախտաւոր լինինք, և թէ սխալ է բախտաւորութեան ցանկութիւնը՝ մեր բոլոր գործոց սիրող նպատակ դարձնել։

Մանաւանդ որ տեղերքի ընթացքն և իրա-քանչիւր մարդու կեանքը կարծես թէ մեզ քարոզում են, որ պէտք է հրաժարուինք բախտաւորութիւնից և թէ մարդկային կենաց խորհուրդն այն է, որ խոր թախանձենք այդ հայեցքով և ըստ այնմ ապրինք։

Արդարև այդ բանից անբաժան է և այն կարծիքը, թէ ուրեմն մենք ծնուած ենք չարչարուելու համար, վասն զի բախտից միշտ և անդադար հրաժարումը անհնարին է առանց ցաւերի։ Բայց մի և նոյն բան է ուսուցանում մեզ և այն ըմբռնուն կեանքը, որ չի կամենում հպատակուիլ այդ վիճակին։ Բախտաւորութեան ձգտումը ծագում է ցաւերից, կարօտութիւններից որոնք ոչ մի բախտաւորութեամբ չեն ծածկուում. ուստի բախտը ցնդում է խոյին, հենց որ հշտանում ենք, խոյն կորցնում ենք ունեցածը. ուստի և նորից սկսում է տենչը և հետը դարձեալ դիտողութեան նոր դգացումը, այսինքն նոր չարչարանքը։

Եւ երբ չարչարանքից փախչելու ջանքը՝ նոյնչափ դուր վատակ է, որչափ և բախտաւորութեան ձգտումը. կամ թէ երկուսն էլ խոսպէս նոյն են։ Բնութիւնն էլ հաւատարակէս դգուշացնում թէ մէկ և թէ մեա գաղափարից, որ և անդադար մեզ դգացնել է տալիս, թէ ինքը մեր չարչարանքների դէմ բոլորովին անտարբեր է։

Բայց բնութիւնը ուրիշ բան էլ է սովորեցնում. այն է, թէ մենք կանք և ենք բան անելու, գործելու, ստեղծելու, կեանք տալու համար։ Թէպէտ այս էլ չարչարանքով է կատարվում, բայց մէջտեղից բառնում է ուրիշ չարչարանքներ. բնութիւնն ուրեմն մի և նոյն ժամանակ սովորեցնում է չարչարանք տանելը։ Եւ ինչո՞վ է սոիպում մեզ գործելու. ի հարկէ, հէնց նեղութիւնները կրել տալով։ Առանց այս բանի՝ դժուար թէ մենք շարժուէինք և եռանդով յարատև գործէինք. մանաւանդ որ անգործութիւնը նեղութիւն է մեզ համար, ուստի և միշտ դրդուում ենք գործելու։ Ապա ուրեմն բնութեան վերջին նպատակն այն չէ, որ մեզ չարչարէ. այս կը լինէր անխորհուրդ անգթութիւն։ Ընդհակառակ. չարչարանք կրել տալով սովորեցնում է մեզ գործել և այնու ծառայել անյայտ՝ կամ լոկ միայն աղդմամբ դուշահելի՝ նպատակներին։ Հէնց՝ որ մենք մեր գործերով ուղում ենք, ընդհակառակ, մեր անձնական նպատակներին ծառայել, բնութիւնն իւր ընթացքով խափանում է մեր ծրագիրները և մեր վատակը զրաւատակ է դարձնում։ Ուրեմն մեր կոչումն է—և այս քարոզում են մեր կեանքի փորձերը հապար լեզուներով—ոչ թէ այն, որ բախտաւոր լինինք, այլ որ գործենք և ստեղծագործենք, առանց բախտաւորութեան վոյթ ունենալու։

Սակայն բնութիւնը մեզ մասամբ վարձատրում է այն բանի փոխարէն, ինչ որ մենք անտրտունջ հպատակութեամբ տուժում ենք։ Մենք միայն այն դէպքում կը կարողանանք հրաժարուիլ բախտից, կամ որ նոյն է արտաքին նիւթական բարիքներից, եթէ մեր մէջ կենդանի լինին այլ կարիքներ, այլ խորհուրդներ և այլ զգացումներ, որոնք մաքուր սրտով կամենալու և գործելու համար կարող են մեզ զօրութիւն տալ։ Բայց այս նշանակում է, թէ մեր մաքի մէջ արդէն փայլած պիտի լինի գաղափարական վսեմ բարիքների դերագոյն արժէքն ու կշիռը։ Հէնց որ մեր գործոց նպատակ են դառնում ոչ թէ նիւթական՝ այլ հոգեկան հանգամանքներ, մեր զգացական կեանքը, մեր հաւանութեանց մըթնոլորտը բացէիբաց փոխուում է և նոր կարգի բախտաւորութիւն է ստեղծում, որ մենք երջանկութիւն ենք կոչում և որ աւելի տևական է և ոչ թէ այնպէս անցաւոր։

Բարոյական ճշմարտութեանց խարիսխ. Ամենայն հրեշտակական և փիլիսոփայական բարոյականութիւն հաւատարակէս կոչումն է անում մարդկային հոգու մաքրագոյն՝ ոչ քաղցրութիւններին և ցանկականին ուղղուած՝ հակումներին։ Այդ վարդապետութիւնները մարդուն շրջապատում են այնպիսի պատկերացումներով, խորհուրդներով և

մասնաւորութիւններով, որոնք զօրութիւն պիտի ունենան մեր ընութեան այդ կողմը զարթուցանելու, որոնք կարիք պէտք է ճնանեն միշտ վեհ կերպով վարուելու, առանց օգուտ կամ հաճութիւն ստանալու անկախութեան։ Այսպէս մասնաւոր մէջ զոր օր. հերոսի պատկերը նկատի պէտք է շարժէ, որ ինքն էլ այդպէս մարդ դառնայ, այդպիսի գործքեր կատարէ, այն ևս ոչ թէ փառքի կամ որևէ շահի համար, այլ միայն այն պատճառով, որ իւր հանանձն այդ բանն է, որ դիւցազնական յատկութիւններն նրան անկեղծ ուրախութիւն կը պատճառեն, երբ որ իւր գործքերում յայտնապէս երևան գան։

Հարկաւ այնպիսի բարոյախօսութիւններ ևս կան, որ մարդկային անխտիր բոլոր գործունէութիւնը լոկ հաճութեան շարժառիթով ծագած են համարում. սակայն այդպէս վարդապետողներն էլ վերջ ի վերջոյ ստիպվում են գանազանել բարձրը և ցածր հաճոյքներ կամ բաղձանքներ, և ըստ այնմ մինն աւելի գովելի համարել, քան միւսը, զոր օր. Եպիկուրը հոգևոր հաճոյքը բարձր էր դասում, քան մարմնաւոր զուարճութիւնը։ Բայց հէնց այս հանգամանքով յայտնի է դառնում այդ վարդապետութեանց սկզբունքների անմիաբանութիւնն և թիւր հետևութիւնը. վասն զի եթէ մարդկանց հակումների մէջ խորութիւնը լոկ ստոիճանական համարենք և ոչ թէ արմատական, այնուհետև մեր բարոյական պատուէրները կամայական կը լինին, քանի որ մի մարդու զգացածը երբէք այն ստոյգութիւնն և այն ստիճան զօրութիւն չի ունենայ, ինչպէս որ ուրիշն է զգում։ Ինչ որ բախտաւորութիւն քարոզող փիլիսոփայութիւնները բարձր կամ ազնուագոյն հաճութիւն են համարում, վերջ ի վերջոյ ոչ այլ ինչ է, բայց եթէ մեր վերը յիշատակած մաքուր և անշահասէր հակումների զգացումը, որ մեր ընութեան մէջ կայ։ Ուրեմն բոլոր փիլիսոփայութիւնները այսպէս կամ այնպէս խոստովանում են, թէ մարդու մէջ իդէալական ձգտումներ կան, որ պէտք է անշէջ պահպանել։

Բայց ի՞նչպէս գանազանենք այն պատկերացումներն ու մտածութիւնները, որոնք այդ հակումներն են շարժում, միւսներից, որոնք լոկ ցանկական մասն են շօշափում։ Քանի որ մի և նոյն առարկան կարող է գրգռել թէ ցանկական և թէ գործնական հակում (զոր օր. ախորժանալու տենչ, բայց և լոկ միայն ձգտում, որ առարկան հնարամիջ գնենալ, ընդօրինակուել կամ նմանադործուել), ապա անշուշտ ամենայն առարկայ գանազան կողմ ունի, որոնք իմանալի են դառնում մարդուն։ Եւ իրօք ամենայն լրի մէջ, լինի ընութեան թէ մարդկային արտադրութիւն, միշտ երկու կողմ կայ, որոնցից իւրաքանչիւրն առանց միւսի թէպէտ անմտածելի է մեզ համար, բայց դատ դատ խմացվում է մեր դիտակցութեան մէջ։ Առհասարակ այդ կողմերը մենք գանազանում ենք Նիւթ և Ձև անուններով, բայց աւելի լաւ է ասել Բնագրոշմ և Երևոյթ։ Արդ ամենայն առարկայ կարող է ազդել մեր Ներսը իւր գրոշմով, այսինքն իւր հոգեկան կողմով, և իւր Նիւթական երևութով, այսինքն մարմնական կողմով. Վերջին կարգի ազդումը չօշափում է ցանկական, բաղձական կարիքը, իսկ առաջինն ընդհակառակ գործելու, խորհելու, գննելու սրամադրութիւնը. առաջինն ուրեմն գոյացնում է կրաւորականութիւն, երկրորդը՝ ժրութիւն, ներգործականութիւն։ Մի իրի իդէալական կողմն էլ անշուշտ կարող է անմիջական հաճութիւն պատճառել, բայց այս հաճութիւնը ուրիշ կարգի է, նոր տեսակի բերկրութիւն է, որովհետև ընաւ ցանկական կողմից չի ծագում, ուստի այս վիճակը, որ մենք հայեցողական կարող ենք կոչել, ցանկական վիճակի համեմատութեամբ՝ մի նոր ձևի ժրութիւն և կենդանութիւն է։

Այս իրողութիւնը, թէ ամենայն առարկայից մարդու բանականութեան հաղորդվում է երկու տարբեր ազդումն, որոնցից մէկը, այն է իրի իդէալական կողմը, արդիւնաւորական է, ժրութիւն զարթուցանող է, իսկ միւսը՝ ցանկականը՝ կրաւորական վիճակ բերող է, ասում ենք այդ իրողութիւնը մի և նոյն ժամանակ հաստատ հաւաստիք է, թէ ինչ որ մենք կոչում ենք իրի քնագրոշմ կամ իրի հոգի, այսինքն իդէալական կողմը, այն մի անկախ, ստեղծագործող և կենդանի զօրութիւն է ամենայն մարմնի մէջ։ Եւ այս հաւատը, այս համոզումը, թէ իրօք կայ մի գերբնական կամ բնազանցական զօրութիւն, որ ամենայն կենդանութեան արարչագործ հիմք է կազմում, խորհուս է ամենայն կրօնական և բարոյական սկզբունքների, որոնք աշխարհքում տեւական նշանակութիւն են ստացել և արդիւնաւոր են հանդիսացել։ Բարոյական վարդապետութեան էական սկզբունքն է, որ այդ ճշմարտութիւնը դառնայ մարդկային գործոց խթան։

Ս. Մ.

ՀԱՅՀԱՅՏԻԿՆԵՐԸ ԵՒ ՅԱՆՁԸ *

Սերմնացան մշակ ոչ միայն պէտք է օսար ակռներ ցորնահատիկ գաղտ, այլ եւ նոյն իսկ վնաս եւ ցամքած հատիկներ եւս որոշէ կրկին եւ կրկին մաղելով, յատակելով այնպէս որ մաքուր հատիկներ մնան գետ եւ չեզուն:

ՀԱՅՐԻԿ

Տեսնում եմ, իմ սուսեր բոնիկ, որ մեր գիւղական ժողովրդի հողագործութեան վիճակը նոյն հնութեան խաւնարուրին մէջն է, դեռ հին հին դարերու մէջ կը բախտաւորի. մեր հողագործութեան ամեն աշխատութիւններ դառնաբիւրեղ տանջանք է, մեր բանեցուրած գործիքներ՝ անյարմար, անարուեստ եւ կոպիտ շինուածներ են, որ չէրէ միայն զմեզ կտանջեն, այլ առաւել մեր խեղճ անիծսուն անասուններ:

ՀԱՅՐԻԿ

Ինձ թուում է, որ մենք պէտք է յարմարեցնենք մեր ուսմունքները մեր ներկայ բարերի դրութեանը, եւ ուսումնասիրենք այն խնդիրները, որոնց պահանջ ունի հասարակութիւնը:

ՅԱՆՕՐԻ

Թուենք հացաբոյսերի սերմերը մաքրելու համար այժմ գոյութիւն ունեցող բոլոր միջոցները:

Թիակով էրնելիս հացաբոյսերի սերմերի մէջ եղած ամենաթեթեւ աղբը՝ ինչպէս, օրինակ՝ թեփը, յարդը, դագարկ սերմերը միայն կարելի է հեռացնել, իսկ ինչ որ ծանր է, այն մնում է:

Այս կերպ էրնելու համար գիւղացին ոչ թէ իւր յարմարութեանը պէտք է նայէ եւ ըստ այնմ ձեռնարկէ գործի, այլ երբ այդ թոյլ է տալիս եղանակը: Իսկ յարմար եղանակ շատ քիչ կպատահի. երբեմն քամի չի լինում, երբեմն էլ եթէ սկսում է, շատ սաստիկ է լինում կամ անձրեւ-խառն եւ այլն: Վատ է նոյնպէս, երբ թիակով էրնելիս քամին քշում, տանում է առատ դարման, եւ թեթեւ հատիկները դէպ հեռաւոր տեղեր:

Ամենից յարմար է էրնել առանձնապէս այդ նպատակի համար պատրաստած քամելու մեքենաներով (вѣялки): Նոցանով կարելի է ամէն ժամանակ, ինչպիսի եղանակ կուզէ լինի, քամելով դարմանը նուազ դատարկ հատիկները զատել, այն ժամանակ կստացուի մաքուր եւ բաւականին ծանր հացահատիկ, բացի դրանից յարդն էլ ամբողջապէս կհաւաքուի մեքենայի առաջ՝ կմնայ տիրոջը, աւելի լաւ մաքրելու համար հատիկները քամում են երկու, երբեմն և երեք անգամ: Ռուսաստանի և նոյն իսկ մեզանում Կովկասի շատ տեղերում գիւղացիները սկսել են արդէն գործադրել այդ օգտակար մեքենան, որի համար և քանի գնում աւելի և աւելի արժանանում է: Այսպէս, օրինակ, ամենալաւ քամելու մեքենան (ярославская вѣялка) արժէ 20-25 ռուբլի: Կայ նաև հասարակ տեսակը, որ աւելի արժան է, մօտ 16 ռ. արժողութեամբ. Կարծում եմ որ իւրաքանչիւր գաւառական վարչութիւն կաշխատի օգնել գիւղացոց մի այդպիսի մեքենայ բերել տալիս թէ գործով և թէ խորհուրդներ տալով. Կովկասում ամենից յարմար է դիմել և խորհուրդ հարցնել կովկասեան գիւղատնտեսական ընկերութեանը, որը վերջերս քանի գնում աւելի և աւելի ընդարձակում է իւր գործունէութեան շրջանը: Այո, մեր գիւղացիները մանաւանդ պարտաւոր են խորհուրդ հարցնել այսպիսի հանգամանքներում, և ըստ այնմ բերել տալ յարմարաւոր մեքենայ, որովհետև գուցէ նոցա համար պարզ չէ այն, որ մեքենայով կատածը և մեր Կովկասի առանձնապէս հայերի գործ ածած կամերի տակից սովորական ձևով ստացած թեղը նոյն տեսակի մեքենայով չպէտք է քամել. Որովհետև մեր սովորական ձևով ստացած թեղը միշտ աւելի գարմանուտ է լինում. դորա համար գործադրում են քամելու տարբեր մեքենայ. Ծիշտ մեքենան խիստ արագ է կատարում իւր գործը. Այսպէս, օրինակ, լաւ տեսակ մեքենան կարող է 500 խուրձից բաղկացած մի ժեղ քամել կէս ժամուայ ընթացքում, որի համար հարկաւոր է երկու աշխատող ձեռքեր՝ մէկը կոթը պտտեցնող, միւսը հացահատիկը ձագարի մէջ լցնող և գարմանն ու հացահատիկը տրմղող: Մեքենան պտտեցնել կարող է մի կին և կամ տասնուչորս տարեկան մի պատանի. Այսպիսի մի գործիքով կարող են կառավարուել չորս և դեռ աւելի ընտանիք, որոնցից և մի քանի ընտանիք կարող են միասին փոդ հաւաքելով գնել մի այդպիսի օգտակար գործիք:

Ցանելու լաւ հատիկները ոչ միայն մաքուր պէտք է լինեն, այլ նաև խոշոր ու ծանր քաշ ունենան մի և նոյն տեսակից լինին. Խոշոր հատիկի մէջ՝ եթէ միայն դատարկ չէ մատաղ բոյսի համար աւելի սնունդ կլինի. Խոշոր հատիկի հացաբոյսը աշխոյժ և համաձայն կերպով է բարձրանում վերև, արագ և ուժեղ կերպով աճում է և աւելի լաւ ճիւղաւորում. Նորա հասկը մեծ է լինում և բովանդակում է իւր մէջ խոշոր հատիկներ. Հատերը փորձի համար մի և նոյն հողի մի օրավարի վերայ հաւասար չափով ցանել են խոշոր և ծանր հացահատիկներ, իսկ միւսում,

---

* Տես «Արարատ» 1900 թ. հատոր Բ. եր. 71:

ընդհակառակը, մանրը և նիհարը։ Բանից երևացել է որ առաջին օրավարը երեք անգամ աւելի արդիւնք է տուել քան միւսը։ Խոշոր և ծանր հացահատիկի օգուտներից մէկն էլ այն է, որ այլ ևս կարիք չի լինի այնքան խիտ ցանել, ինչպէս մանրահատիկը։ Գիւղացիները շատ անգամ ստիպուած են խիտ ցանել նրա համար, որ ցանուելիք սերմերի մէջ շատ են լինում բուսնելու ընդունակութիւնից զուրկ, նիհար և զանազան վնասակար խոտաբոյսերի սերմեր։ Վատ հատիկները հողի մէջ կամ բոլորովին ծիլեր չեն արձակում և կամ յառաջ են բերում նուազ բոյսեր, որոնք ի զուր տեղը տարածութիւն են բռնում։ Սրանից հետևում է, որ սովորական եղանակով կատարած գիւղական ցանքսը չատ սերմեր ի զուր կորցնում են, մինչդեռ մանր և նիհար հացահատիկը, եթէ մաքրուած լինի, կարելի է ալիւր դարձնել և կամ տնային մի այլ բանի համար գործադրել։ Փորձերը ցոյց են տուել, որ ցանքի համար փոխանակ 12 կամ 14 կոտ հաճարի կարելի է գործածել խոշոր և մաքուր տեսակից 10 կոտ։ Երեք չետվերտ վարսակի տեղ բաւական է նաև $2^1/_2$ը և այլն։ Կարծեմ ամէնի համար էլ պարզ է, թէ որքան մեծ կլինի այսպիսի հանգամանքներում գիւղացու օգուտը։

Ահա այս նպատակին հասնելու համար պէտք է ամէն ժամանակ ամբողջ ստացուած բերքից լաւ և խոշոր հատիկները ջոկել։ Այդ բանը կարելի է տարբեր կերպով կատարել։ Օրինակի համար բոլորին յայտնի է, որ խուրձերը մաքրելիս գլխաւորապէս ամէնից առաջ ցած են թափւում ամենախոշոր հատիկները։ Լաւ կլինէր ցանքսի համար գործ գնել այդ կերպ ստացուած հացահատիկները, եթէ միայն մի հանգամանք չխանգարէր։ Բանը նրանումն է, որ հացարոյսերը մանրելիս, եթէ սերմնաձակոյը կամ թաղանթը թոյլ է, գետին են թափւում ոչ միայն խոշոր այլ և մանր հացահատիկները։ ԵՒ եթէ այդպիսի հացահատիկները ցանենք, այն ժամանակ կստացուի հատիկների մի սերունդ, որ գարձեալ կունենայ թոյլ և անզօր ծածկոց, հետևապէս և հատիկները հեշտութեամբ կսկսեն վայր թափուել։

Շատ անգամ քամելու ցորնի կոյտի գլխից կամ երեսից ջոկում են ցանքսի համար յարմար հացահատիկներ։ Այս եղանակն ունի այն պակասութիւնը, որ թիով հերնելիս երբեք կոյտի գլխից բաւականին մաքուր հատիկ չի կարող ստացուել, անպատճառ խոշոր հատիկների հետ կխառնուին քիչ քանակութեամբ նիհարը և չբուսնողը։ Աւելի մաքուր և ընտիր տեսակի հատիկ կստացուի, երբ քամուի մեքենայով։ Եթէ մէկ անգամ թիով հերնած հացահատիկը երկրորդ անգամ քամելու մեքենայի միջով անցկացնենք, այն ժամանակ ստացած ամբողջ հացահատիկը կարելի կլինի երեք մասի բաժանել, այն պայմանով, որ առաջին տեսակի հատիկները, որ է և ամենախոշորը, գործ ածենք ցանքսի, իսկ միւս երկուսը ուրիշ այլև այլ կարիքների համար։

Այսպիսով, եթէ ամենայն տարի այս կերպ, նախ հասարակ կերպով, ապա քամելու մեքենայով մաքրուին և ջոկջոկուին հացահատիկները և ցանքսի համար սկսեն գործ ածել միայն առաջին տեսակը, քիչ ժամանակից յետոյ սերմնացուները կլաւանան և բերքը կբարձրանայ։

Աւելի շուտ կարելի է այդ նպատակին հասնել, եթէ ջոկջոկելու համար սկսեն գործ ածել նաև մի առանձին տեսակ զատիչ մեքենայ (сортировка)։ Այս մեքենան քամած հացահատիկները աւելի լաւ և աւելի հեշտ ու մաքուր կերպով կարող է բաժանել տեսակների քան միւս քամող մեքենան։ Եթէ գիւղացիք ունին քամող և զատիչ մեքենայ, կարելի է առաջինով հեռացնել բոլոր աղբը և դատարկ հատիկները իսկ միւսով մնացածը վերջնականապէս մաքրել և բաժանել տեսակների։

Ներկայումս սկսել են պատրաստել բաւականին արժան գնանոց զտիչ մեքենաներ։ Այդպէս, օրինակ, չվետականը կարժենայ ընդամենը 25 ռ. Ռուսաստանի մի պանի քաղաքներում, ինչպէս օրինակ, Մոսկուայի նահանգի մի քանի գաւառներում պատրաստում են չվեդականից ոչ վատ երեսով—ջոկջոկող (вѣялки-сортировки) մեքենաներ 20 ռ. արժողութեամբ։ Ընդամէն գնի արժանութեանը, այնու ամենայնիւ չպէտք է մեծ յոյս ունենալ նոցա վերայ, միշտ պէտք է առաւելութիւն տալ չվեդականին։ Թէև ինքն ըստ ինքեան իւրաքանչիւր տանտիրոջ համար մի այդպիսի մեքենայ ուներելը խիստ կարևոր է, բայց որովհետև նա (չվեդականը) 100 օրուայ մէջ ձմեռնային չորս ամսուայ ընթացքում կարող է զատել մինչև 4000 չետվ. հացահատիկ, ուստի և մի այդպիսի մեքենայ, որ կարող է բաւականութիւն տալ 200 ընտանիքի, կարելի է գնել ընդհանուրի հաշուով, որովհետև իւրաքանչիւր ընտանիք զանազան հացարոյսերից միջին հաշուով կարող է ստանալ միայն 30 չետվ., որի համար չարժէ որ մի ընտանիք 25 ռ. ծախսէ։ Եթէ նոյն իսկ ձմեռուայ աշխատելու օրերը վերևը ցոյց տուած օրերի թուից երկու անգամ պակաս հաշուելու լինենք, այն ժամանակ մէկ մեքենան կբաւէ 100 ընտանիքի և կամ մի ամբողջ նոյն իսկ մի մեծ գիւղական հասարակութեան։ Այսպիսի դէպքում իւրաքանչիւր տանտիրոջ ծախսը հաւասար կլինի մի քանի կոպէկի։ Մնում է միայն որոշ կարգով ձեռնարկել գործի։ Մեքենայի համար հեշտութեամբ կարելի է տեղ գտնել և եթէ հասարակութիւնը մի որոշ վճար նշանակէ, կարծում եմ որ ամէն ոք սիրով յանձն

կառնի պահել-պահպանել։ Ուր որ համագիւղացիների մէջ սէր և համերաշխութիւն կայ, այնտեղ շատ յաջող կերպով կարող է յառաջ գնալ այս գործը։

Բայց քանի որ գիւղական հասարակութիւնները դեռ չեն ըմբռնել զատող (сортировка) մեքենայի տուած օգուտները, լաւ կլինի, եթէ գոնէ, քիչ թէ շատ նորամուծութիւն սիրող ձեռնարկներից գիւղացիները դնեն մի այդպիսի մեքենայ և արժան գնով սկսեն մաքրել, ջոկելով ամբողջ հասարակութեան հացահատիկները։ Նոքա իւրաքանչիւր մի կոտ հացահատիկ մաքրելու վարձ վեր առնեն մէկ-մէկ կոպ. անգամ, դարձեալ մեծ կլինի տիրոջ օգուտը. իսկ հասարակութիւնն օգտուելով այդ հանգամանքից, կսկսէ այսուհետև լաւ և խոշոր հացահատիկներ ցանել։

Վերոյիշեալ բոլոր միջոցները սկսել են արդէն գործադրել համարեա ամբողջ Եւրոպայում Ռուսաստանի մի քանի նահանգներում և մասամբ էլ Մեզանում Կովկասում, որ լաւ հասկանալով դոցա հասցրած օգուտները, աշխատում են անպատճառ գործ ածել ոչ միայն մաքրած, այլ նաև ամենախոշոր և ծանր հացահատիկներ։ Այդպիսիները լաւ են ըմբռնել և փորձով տեսել, թէ որքան մեծ նշանակութիւն ունեն զատիչները հողագործութեան մէջ։ Կրկնում եմ, որ հողագործը ցանելով միայն լաւագոյնը՝ խոշորը, ծանրը, կարող կլինի մի քանի տարուց յետոյ վերջացնել իւր արտի բոլոր վնասակար, անպէտք և վատ սերմերը, որի համար և ցանկալի է զատիչների գործադրութեան տարածուիլը մեր նահապետական գիւղատնտեսութեան մէջ։

Այժմ արդէն մենք տեսանք, որ ընտիր սերմերի ամենակարևոր և աչքի ընկնող նշաններից ամենագլխաւորը պէտք է համարել խոշորութիւնը, եթէ միայն խոնաւութիւնից փքուած չէ։

Սակայն օգտակար է ստուգել սերմերի յատկութիւնը նաև կոտի (мѣра) քաշով։ Լաւ սերմնացու ցորնի մէկ կոտը քաշում է 1 փ. 10 ֆ.-ից ոչ պակաս, վարսակի մի կոտը 30-35 ֆ., հաճարինը (չավդար) 1 փ. 5 ֆ.[1]

Ամէն տեսակ սերմացուի մէջ էլ մաքրութիւնը, հացահատիկների խոշորութիւնը և ծանր քաշ ունենալը խիստ կարևոր է։ Բացի դրանցից վարսակի և գարու սերմնացու հատիկները պէտք է ունենան նաև բարակ կճեպ։

Երբ ամէն մի գիւղացի կարողանայ այս կերպ կանոնաւորել սերմնացու հատիկները, սրան մընում է միայն կանոնաւոր ընթացք տալ ցանքին։

Այսպէս, օրինակ, մինչև ցանք սկսելը անհրաժեշտ է ստուգել, թէ արդեօք սերմնացու հատիկները փչացած չեն կարող են բուսնել։[1] Սորա համար միջոցներ շատ կան։ Օրինակ՝ կարելի է վեր առնել մի կտոր թաղիք, ջրով թրջել, համարել առանց ջոկելու մի հարիւր սերմնահատիկ և լցնել կիսով չափ ծալուած թաղիքի վերայ, ապա թաղիքը սերմնահատիկների հետ միասին դնել մի տաք տեղ և այդպէս թողնել մի քանի օր միայն շատ շուտ պէտք է նայել, որ թաղիքը չչորանայ։ Թաղիքի տեղ կարելի է գործ ածել նաև խոնաւ փալասներ։ Կարելի է ցանել նաև հարիւր սերմնացու մի որ և է փոքրիկ ոչ խոր արկղում, որի մէջ լինի հողի մի բարակ շերտ և ամէն անգամ ջրել։ Վեց օրից յետոյ բողբոջներ արձակելու ընդունակ սերմերը անպատճառ գլուխ կբարձրացնեն և եթէ լաւ տեսակի սերմեր են 100-ից 90 ը անպատճառ կբուսանեն։

Երբ սերմերն արդէն պատրաստ են, հարկաւոր է ձեռք զարնել ցանքի։ Նախ և առաջ պէտք է ցանքի համար յարմար ժամանակ ընտրել. թէ որքան կարևոր է իրա ժամանակին ցանք սկսելը, այդ կարելի է տեսնել հետևեալ օրինակից։ Գիւ-

---

[1] Ջոկելու և մաքրելու համար վերցրած հացահատիկների 1 լիտրը միջին հաշիւ է՝ 710 գրամ. մաքրելուց յետոյ ա. տեսակի 1 լիտրը հաշում է 760 գր. եւ պարունակում է իր մէջ՝ 29000 հատիկ. բ. տեսակի 1 լ. հաշում է 710 գր. եւ պարունակում է՝ 29000 հատիկ. գ. տեսակի 1 լ. հաշում է 620 գր. պարունակում է՝ 44110 հատիկ ա. տեսակի 100 հատ. 4,765 գր. 1 հատ. 47,5 միլիգրամ. բ. տ. 100 հ. 3,375 գր. 1 հատիկ. 33,7 մ. գ. տ. 100 հ. 2,266 գ. 1 հ. 22,6 մ. Նոյն յարաբերութիւնը բնական է եւ միւս հացահատիկներին եւ բակլայի բոյսերին։

[1] Ակնկալող չի լինի այստեղ համառօտակի յիշել, որ աւելից ընտիր սերմերն անգամ իւր մայր բոյնից զատելուց որոշ ժամանակից յետոյ աներևոյթ կերպով են դառնում թուլ ընկղու, ծիլեր առժամկտրուկ այսպիսի օրինակ՝ ուռենու եւ սօսկենու սերմերը 5—6 օրից յետոյ այլ հուս չեն կարող առնել. կեչու, բեղոչու. կաղնու, կնձևենու սերմերը 1/2 տարուց յետոյ. տանձենու, չիւարու, լորու, խնձորենու եւ հացընդու սերմերը 1 1/2—2 տ. յետոյ. խաշխաշի, արեւածաղկի, կորեկի, ձակնդեղի, ծխախոտի եւ այլ բոյսերինը 2 տարուց յետոյ սեւ ցորնի, մայր ծառի, կանեփի, վուշի գազարի, վարսակի, ցորնի, հաճարի, գարու եւ ուրիշներինը 2—3 տ. յետոյ: Վարունգի եւ դդումի սերմերը 6—8 տ. յետոյ եւ այլն։ Ի հարկե խնամքով պահելը կարող է դարեդար ազդեցութիւն ունենալ սերմերի վերայ: Այսպես օրինակ փորձերը ցոյց են տուել, որ բուսաբանների սերմերը. որոնք այսեղի հարիւր տարուայ աւելի ընկած մնացել են յաջող բոյս տուին: Իրեն օրինակ յառաջ են բերում նաև մումիական ցորնի հատիկները, որոնք հազարաւոր տարիներ ընկած մնացել են եգիպտական շիրմների մէջ. բայց այս վերջինը ի հարկէ այլմոի էլ հետաքրքրական չէ։

զատընտրութեան քաջ ծանօթ մէկը երկու տարբեր ժամանակներում մի և նոյն հողի վերայ իրար մօտ վարսակ ցանեց, հէնց որ դաշտերի վերայի ձիւնը հալուեց, առաջին մասում սկսեց ցանել. համեմատելու համար՝ երկու շարաթ յետոյ՝ երբ դեռ ցանքի ժամանակը չէր անցել, ցանեց միւս մասն ևս. Երկու մասումն ևս վարսակը սկսեց հասնել, բայց երկրորդ կտոր հողը, որ ուշ էր ցանուել, երկու անգամ պակաս արդիւնք տուեց առաջնից. Տեղի ունեցան շատ ուրիշ այդպիսի փորձեր, երևաց, որ ոչ միայն երկու շաբաթուայ տարբերութիւնը, այլ և իւրաքանչիւր ուշացած օրուայ վնասը նկատելի է բերքի մէջ. Ահա թէ որքան անհրաժեշտ է ժամանակին ցանք սկսելը. Մինչ դեռ մեր գիւղացիները ամենայն տարի սուանում են իւրեանց յարմար ժամանակին, որպես զի սկսեն ցանքը. Սովորաբար նոքա կարծում են, թէ վաղ և ուշ ցանելու տարբերութիւնը միայն նրանումն է կայանում, որ քանի վաղ է սկսւում ցանքը, այնքան աւելի վաղ էլ կհասունանայ, ընդհակառակը, որքան ուշ սկսուի, այնքան ուշ կհասունանայ: Մինչդեռ վնասը միայն դրանում չէ, այլ օրինակները ցոյց են տալիս, որ բերքի մէջն էլ տարբերութիւն է լինում.

Ի հարկէ, տարբեր հացաբոյսեր տարբեր ժամանակներում պէտք է ցանուեն. Այսպէս, օրինակ՝ սև ցորենը կորեկը վաղ չի կարելի ցանել, որովհետև մինչև անգամ ամենաթեթև եղեամը և գարնան սկզբի ցրտերը կարող են վնասել նրանց. Այն ինչ համարեայ բոլոր միւս գարնանացանքի հացահատիկները պէտք է ցանել որքան կարելի է վաղ: Ամենից շուտ պէտք է ցանել վարսակը, ապա գարնանացանի ցորենը, հաճարը (չաւդար) և գարին. Հէնց որ երկիրը կսկսի մի քիչ չորանալ և տաքանալ, իսկոյն պէտք է սկսել ցանքը: Թէև շուտ կատարուող ցանքերի հետ էլ, ի հարկէ, կարող է վնաս պատահել, բայց այնու ամենայնիւ չպէտք է ուրանալ, որ մեծաւ մասամբ վաղ ցանած հացաբոյսի տուած արդիւնքը աւելի է:

Ինչ կվերաբերի աշնանային ցանքերին՝ դարձեալ կասեմ, որ վաղ կատարուած ցանքը աւելի արդիւնաւէտ կլինի: Շատ վաղ ցանելով աշնանացանը կարողանում է մինչև ձմեռն սկսուելը բաւականաչափ բարձրանալ, այդ պատճառով էլ խլմբով և շատ կարճ ժամանակի մէջ գարունն սկսելուն պէս զոռ կկազմէ.

Առանց հաշուի առնելու ցանքի վատութիւնը չպէտք է այնպէս ձեռք զարկել ցանքի. Մեր գիւղացիք սովոր են չափից դուրս խիտ ցանել. Դա ինչ նշանակութիւն կարող է ունենալ, երբ սերմնացու հատիկների համարեա կէս մասը աղր է և մանր հատիկներ: Եթէ սերմնահատիկները լաւ մաքրած է և եթէ հողն անգամ ամենաուժասպառ դրութեան մէջ է, դարձեալ պետական մի օրաւար հողի մէջ կարելի է ցանել (երկարութեամբ 80. լայնութեամբ 30. կամ երկարութեամբ 60, լայնութեամբ 40 սաժէն) 20 կոտ վարսակ, 12 կոտ ցորեն և հաճար և 14 կոտ գարի. Եթէ սերմի հատիկները ոչ միայն մաքրած, այլ և ջոկկած է խոշոր և ծանր տեսակները միմեանցից, այն ժամանակ կարելի է ցանել աւելի սակաւ 10 կոտ հաճար, իսկ վարսակ 20 կամ 18 կոտ. Սոցա համեմատութեամբ կարելի է պակասցնել նաև միւս հացահատիկների ցանքի խտութիւնը.

Պէտք է միշտ աչքի առաջ ունենալ, որ ինչքան էլ վատ և ուժասպառ եղած է հողը, այնքան աւելի խիտ պէտք է ցանել, ընդհակառակը, պարզաբեր և արդիւնաւէտ հողի մէջ նոսր պէտք է ցանել. Որքան վաղ կատարուի ցանքը, այնքան աւելի նոսր պէտք է ցանել.

Պէտք է աշխատել, որքան կարելի է ցանքի համար հողը լինամքով պատրաստել. Որքան հարմարաւոր լինի դաշտը, որքան պակաս լինին նորա վերայ հողակոյտեր, այնքան աւելի օգտակար է.

Սերմեր ցանելու մասին մենք այստեղ երկար չենք կարող խօսել: Միայն այսքանը հարկաւոր է յիշել, որ ամենահաւասարաչափ կատարած ցանքը՝ նաև ամենալաւն է: Եթէ արտի մի մասում խիտ ցանուած լինի, իսկ միւսում նոսր, նոյն կերպ ևս կսկսին աճել բարձրանալ հացաբոյսերը, որը, ի հարկէ, այնքան էլ հաճելի բան չէ. Այս կերպ ցանած հացաբոյսը անպատճառ անհաւասար կերպով կհասունանայ, մի մասում հատիկներն արդէն հասած կլինեն և լողորովին պատրաստ քաղելու, մինչդեռ միւս մասում հասկերը դեռ կանաչին են տալիս և նրանց միջի հատիկները դեռ մածուն են. Այդպիսի հացահատիկներ հաւաքելը մի կատարեալ տանջանք է. սպասում ես, որ կանաչոտ մասը հասունանայ, մինչդեռ միւս կողմը հասկերի միջից դուրս են թափուում հատիկները. Եթէ վաղ սկսեն հաւաքել հացահատիկների կէս մասը տհաս դուրս կգայ և այս բոլորը՝ արդիւնք է անհաւասարաչափ և անճոռնի կատարած ցանքի և սեղմերը անհաւասար հաստութեամբ ծածկելու, որի մասին մենք այժմ կաշխատենք մանրամասնօրէն բացատրել. Ի հարկէ ամենից լաւ է հացահատիկները ցանել առանձին մեքենաներով-սերմնացաներով, (сѣялки) որ շատ հաւասար ցանէ, ուստի և ապագայում հաւասար կերպով կը բուսանեն և հաւասար չափով կծծեն հողից իրենց սնունդը. Բայց ափսոս որ գիւղացոց նիւթական կարողութիւնը չի ներում. Պէտք է մի կերպ աշխատել ձեռքերով հաւասարաչափ ցանել: Զէ՞ որ հին ժամանակներում, ասում են, եղել են այնպիսի ցանողներ, որ դժուար թէ մեքենան այժմ նրանցից լաւ կարողանայ ցանել, ուրեմն ի՞նչու չաշխատել, երբ մեր սերմնա-

ցանների ձեռքերը բաւական վարժ են ցանելու համար. բայց այսքանը պէտք է խոստովանել, որ ինչքան էլ վարժ լինի սերմնացանի ձեռքը, այնու ամենայնիւ նրա համար դժուար է համահաւասար կերպով սերմերը ցրուել արտի երեսին. Ուրեմն եթէ մէկի համար դարձեալ դժուար է գնել մի այդպիսի անհրաժեշտ մեքենայ, կարելի է վերև յիշուած միջոցը գործ դնել. այն է ընդհանուր հասարակութեան և կամ գիւղում միջոց ունեցող մէկի հաշուով գնել:

Կարծում եմ, որ ցանքսի ամբողջ գործաւորութեան մէջ ամենադժուար գործը սերմեր ծածկելն է. Ցարւելը հողի և տարրեր եղանակի մէջ սերմերը տարբեր խորութեամբ պէտք է ծածկել, որպէս զի այս գործը մանրամասն քննենք, հարկաւոր է ուշադրութեամբ հետևել թէ ինչ կպատահի սերմերի հետ, երբ նա ընկնում է հողի մէջ.

Հողի մէջ ընկած սերմը կարող է բուսնել և առողջ բոյս տալ միայն այն ժամանակ, երբ նա գեռնի մէջ կգտնի բաւական չափով ջուր, որպէս զի խոնաւութիւնից փքուի, բաւականաչափ տարողութիւն՝ ծիլեր յառաջացնելու և նոյնպէս բաւականաչափ օդ՝ շնչառութեան համար. Գուցէ վերջինը տարօրինակ թուի շատերի համար, մինչև բոյսն էլ կշնչէ: Թէ սերմը, երբ նա սկսում է աճել և թէ ամենայն մի բոյս ոչ միայն կերակրւում է, այլ նաև շնչում է. այդ պատճառով սերմիկը կարող է խեղդուել օդի պակասութիւնից, Իսկ օդը կարող է պակասել այն ժամանակ, երբ սերմիկը շատ խորն է գտանւում և կամ եթէ գտանւում է օդ դժուարութեամբ անցկացնող կաւային պինդ շերտի մէջ. Նոյն բանը կպատահի, երբ սերմերը ծածկելուց յետոյ հողի երեսը չորանում է և ծածկւում կարծր կեղևով. Երբեմն էլ թէև սերմերին բաւականաչափ օդ հասնում է, բայց տաքութեան սակաւութեան պատճառով նոքա կըրկին մնում են անշարժ ընկած և ծիլեր չեն արձակում: * Նկատդրենք թէ մեր հողը այն տեսակի է, որ հեշտութեամբ է տաքացնում և իր միջով օդ անցկացնում. Այն ժամանակ սերմը լողբոլ կարձակէ և դուրս կգայ հողից. Բայց մեծ խոչընդոտութիւնից դուրս գալը այնքան դժուար կլինի, որ մատաղ բոյսը մինչև լոյս աշխարհ դուրս գալը արդէն նուաղած և թուլացած կլինի. Դորա համար հարկաւոր է այնքան ոյժ և սնունդ, որ կարողանայ պատռել իր ծածկոցը, իսկ գործադրելով իր պաշարը այդպիսի մի տեղում նա ապագայում նուազ յարդ և սակաւ հատիկ կտայ. Պատահում է երբեմն, որ բոյսը լոյս աշխարհ դուրս գալու կարողութիւն չունենալով կորչում է անհետք հողի տակ: Ուրեմն պէտք է եզրակացնել, որ հատիկի խորն ամփոփել է վնասակարը, ընդհակառակը, երբ նա հողի մակերևոյթին մօտ է գտանում նշանակում է օգտակար է այնքան: Բայց ոչ, այդ սխալ հասկացողութիւն է: Նշանակում է, ամենից լաւ կլինէր, եթէ սերմերը բոլորովին փռէինք բայց երկրի տակ, հողի երեսին, Երևը կտաքացնէ, օդն էլ խոմ առատ է: Այո՛, այդ այդպէս կլինէր, եթէ սերմին հարկաւոր լինէր միմիայն օդ և ջերմութիւն: Բայց չէ՞ որ նորան հարկաւոր է նաև խոնաւութիւն. Հողի մակերևոյթը շատ շուտ է չորանում-նորա վերայ ընկած սերմը երկար ժամանակ առանց բողբոջ արձակելու կարող է ընկած մնալ և կամ բոլորովին ոչնչանալ: Բացի դրանից թռչուններն ևս կարող են կոտցահարել, իսկ քամին վշելով տանում լցնում է միւս տեղեր. Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ սերմը անպատճառ պէտք է հողով ծածկուի, բայց թէ ինչ խորութեամբ, այդ բանը մէկին ի մէկ որոշելը քիչ դժուար է: Որքան բարակ ծածկուի սերմը, այնքան աւելի ջերմութիւն և օդ կստանայ բոյսը, բայց սակաւ կլինի խոնաւութիւնը. ընդհակառակը, որքան խոր լինի, այնքան առատ կլինի խոնաւութիւնը, բայց սակաւ ջերմութիւնը և օդը և մատաղ բոյսի համար դժուար կլինի հողի տակից դուրս գալ. Այստեղ, ի հարկէ, մեզ համար դժուար կլինի մանրամասն և առանձին-առանձին տեղեկութիւններ հաղորդել ամէն մի դիպուածի համար, որովհետև հողը, եղանակը և այլն—ղանաչան տեղերում զանազան են լինում. Որքան պինդ է հողը, այնքան աւելի բարակ պէտք է ծածկել հատիկը, ընդհակառակը, որքան փխրուն և աւազոտ լինի, այնքան աւելի խորը պէտք է թաղել *,

---

* Թեև գիւղատնտեսական բոյսերից շատերը սկսում են ծիլեր արձակել ոչ պակաս քան 3,8⁰ ռ. տաքութեան ազդեցութեան տակ (բոլոր հացաբոյսերը, կանեփը, վուշը, ձակնդեղը, պտեղը, սոխը, խաշիաշը եւ այլն. եւ մեյայն շատ բերը պահանջում են աւելի բարձր տաքութեան աստիճան. 8,5⁰ ռ. եւ դեռ աւելի (ծխախոտ, դդում, սեխ, վարունգ եւ այլն), բայց ընդհանրապես, որքան բարձր լինի տաքութեան աստիճանը, այնքան աւելի արագ կերպով ցեղի կուռնեսայ սերմերի ծիլը եւ մատաղ բոյսերի երեւան գալը: Այսպես, օրինակ, եթէ 4—6⁰ ռ. լինի ցորենը եւ գարին 40—45 օրից յետոյ կրուսին, 10—12⁰ ռ.—20—25 օրից յետոյ եւ 28—30⁰ ռ. 10—12 օրից յետոյ: Սիսեռը՝ 8—10⁰ ռ.—50—60 օրից յետոյ, 10—20⁰ ռ.—30—40 օրից յետոյ եւ 18—20⁰ ռ.—15—20 օրից յետոյ:

* Երբև հետաքրքիր տեղեկութիւն առաջ ենք բերում այստեղ մի աղիւսակ իմանալու, թէ յաջող բերը ստանալու համար որ աստիճան խորութեան մէջ պէտք է թաղել հացահատիկները.

Միջակ վարելահողի մէջ ցանած էր 1000 հա-

Գարնանային ժամանակ երկրի արտաքին կեղևը շատ շուտ է չորանում, իսկ աւելի խորը երկար ժամանակ մնում է խոնաւութիւն-ուրեմն գարնանային ժամանակ սերմերը գարձեալ չպէտք է բարակ ծածկել։ Բոլորովին այլ բան է ներկայացնում աշնանացանքը։ Երկիրը յուլիսեան շոգերից յետոյ բաւական խորութեամբ չոր է լինում։ Պէտք է հաշուի առնել այդ անձրևային խոնաւութիւնը, որը մեծաւ մասամբ թրջում է հողն շերտից կէս վերշոկ և կամ աւելի։ Հետևապէս և աշնանային ցանքի ժամանակ առանձնապէս պէտք է աշխատել, որքան կարելի է քիչ ծածկել հատիկները։ Բայց պարարտացնող նիւթերով հարուստ հողերի մէջ ընդհակառակն է, պէտք է աշխատել խորը թաղել սերմնիկները, որովհետև այդպիսի հողերը շնորհիւ վերին աստիճանի խոնաւութիւն ծծելու յատկութեան ուռչում, փքւում են ցրտերից և չանկարծ դգալի կերպով իջնում են հալվելի ժամանակ։ Այսպիսի

ցահատիկ։ այն հացահատիկներից, որոնք ընկել էին $6\frac{1}{2}$ մատ։ խորութ։ մէջ, ծիլեր արձակել 50 եւ տալիս 315 հատ

$5\frac{1}{2}$	»	»	113	» 711
5	»	»	151	» 951
$4\frac{1}{2}$	»	»	289	» 1820
4	»	»	491	» 2093
$3\frac{1}{2}$	»	»	630	» 3969
3	»	»	855	» 5392
$2\frac{1}{2}$	»	»	882	» 5566
2	»	»	945	» 5953
$1\frac{1}{2}$	»	»	951	» 5991
1	»	»	900	» 5670
$\frac{1}{2}$	»	»	441	» 2746
0 (Ուղղակի հողի հետևի։)			151	» 951

Այս հետազօտութիւնը ցոյց է տալիս, որ հունձի համար լաւ չէ, երբ հատիկը ընկած է լինում հողի մակերևոյթի վերայ և նոյնպէս երբ շատ խորն է ընկած լինում։ Աւելից լաւ է, եթէ խորութիւնը հաւասար լինի $1\frac{1}{2}$ մատ։, որը մօտաւորապէս երկու սովորական մատի հաստութեան է հաւասար։ Սա մի ընդհանուր տեղեկութիւն է։ Հետևեալ աղիւսակը արդէն ցոյց կտայ, թէ արդեօք որոշ յատկութիւն ունեցող հողի մէջ, հացաբոյսերի այս կամ այն սերմի համար, որ աստիճանի խորութիւնն է օգտակար։

	Մաքուր հողի մէջ	Թեթեւ հողի մէջ կէս կեղտ։ խառն։	Ւաւազահողի մէջ
Ցորեն . . ոտնաչափ . .	$\frac{3}{4}$	$1\frac{1}{2}$	$2\frac{1}{2}$
Վարսակ . . » . .	$\frac{3}{4}$	$1\frac{1}{2}$	$2\frac{1}{2}$
Գարի . . » . .	$\frac{3}{4}$	$1\frac{1}{2}$	$2\frac{1}{2}$
Սիսեռ . . » . .	1	2	3
Բակլայ, լորի ևլն » . .	1	2	3
Սև ցորեն (Ֆիակորևկ) . .	1	$1\frac{1}{2}$	3
Վիկն . . » . .	1	$1\frac{1}{2}$	3

հանգամանքներում սերմնիկների բարակ ծածկոցը այլ ևս անկարող է պահել ոչ խոր արմատացած բոյսը և նա շուտով փչանում է։ Այսպիսով ուրեմն վերջ ի վերջոյ կարելի է գալ հետևեալ եզրակացութեանը, երբ հողը շատ չորացած չէ եւ հոսիցից ու ցրտերից վախենալու բան չկայ, այլ ժամանակ հատիկների աննպատակ ծածկոցը միաժամանակ կրճատ աննպատակ։ Փորձը ցոյց է տուել, որ ամենից ձեռնտու է պինդ հողի մէջ սերմերը ծածկել մօտաւորապէս երեք քառորդ վերշոկ հաստութեամբ, իսկ հեշտ վարուող և ոչ ապուռ հողի մէջ մէկ և մի քառորդ հաստութեամբ։ 1

---

1 Հայաբոյսերի սերմերը արագ կերպով բուսացնելու համար կարելի է առաջնորդուել հետևեալ գործնական միջոցներով, որ պէտք է կատարել նօթրեի գործիքով։ Այս գործիքն առհասարակ աւելի գործնական է և բաղկացած է լաւ թրջած կաւեայ քառանկիւնաձև թիթեղից, 20 քառ։ սանտ։ մեծութեամբ և 5 սանտ։ հաստութեամբ։ Յատակը ծածկուած է ապակէ նիւթով, որի մէջտեղը շինած է մի կլոր, ծանծաղ բաժակ, ուր պէտք է վետղել նախօրօք ջրում թրջած փորձի ենթարկուող սերմերը և որը շրջապատուած է ուղղաձիգ պատեր ունեցող ջրփողով, որի մէջ լցուում է ջուրը։ Վերջինս, շնորհիւ կաւի ծակոտկենութեան, այնքան է թափանցում բաժակի մէջ որ խոնաւ է պահում սերմերը և նպաստում նոցա բուսնելուն։ Այս գործողութեան ամբողջ ընթացքում գործիքը չպէտք է ամուր ծածկոցով փակել, որպէս զի սերմիկները գտանուին մթութեան մէջ և նորանում կազմուող ածխաթթուն կարողանայ ազատ կերպով դուրս գալ։ Ահա այս նպատակի համար գործիքի անկիւններում թիթեղի մէջ շինուած են չորս ոչ մեծ փոսեր, որոնցում գտանում է զօրեղ այրեցական կալաքար (ёдкое кали), որը ածխաթթուն ծծելով աստիճանաբար փոխում է նորան ածխաթթլումային կալաքարի (углекислое кали)։ Սերմեր բուսնելու ժամանակ եղած տաքութիւնը գիտելու համար ծածկոցի անցքից գործիքի մէջ կարելի է տեղաւորել մի չերմաչափ։ Նախօրօք գտած ջրի մէջ 12-24 ժ։ երբեմն նոյն իսկ 48 ժ։ թրջելուց պէտք է կատարել այս գործողութիւնը, 24 ժամուայ ընթացքում և դեռ աւելի պակաս ժամանակում կարող է բանել կոճղեզաւոր սանկի և ոսպի սերմերի 50%։ Նոյնքան տոկոս կարող է բուսնել կաղամբի, առոյտի, կոտեմի սերմերից 3-3 օրուայ մէջ, վիգնի, ցուխնի, հաճարի, սովորական սունկի սերմերից 3 օրում, սիսեռի, խաշխաշի և գարու սերմերից 4-5 օր։, վարսակի սերմերից 3-4 օր։, սև ցորենի, դաշտային ունդի, վուշի, եգիպտացորենի և լորու սերմերից 5-6 օր։, վարսակի սերմերից 5-6 օրում, գազարի, ճակնդեղի, սամիթի սերմերից 6-7 օր։, մոլանի (гребенникъ)։ անբսոնի սերմերից 7-9 օր։ և այլն։ Կան նաև ուրիշ սոյնանման գործիքներ, որ գտնձեալ կաւից է շինուում։ Որպէս զի որոշենք արտերում սովորական եղանակով ցանուող սերմերի բուսնելու ժամանակը, հարկաւոր է վերոյիշեալ թուանշանների վերայ աւելացնել 1-3 օր։, որովհետև սերմերը որոշ հաստութեամբ հողով ծածկուելով առժամանակ ուշացնում են դուրս գալ,

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ինչ խոր-
րութեամբ էլ ուզենանք սերմերը թաղել, այնու
ամենայնիւ պէտք է աշխատել որքան կարելի է
հաւասար հաստութեամբ ծածկել։ Այս դէպքում
անհաւասարաչափութիւնը աւելի վնասակար է,
քան ցանքի ժամանակ։

Բայց միայն այս բոլորը իմանալը բաւական
չէ, հարկաւոր է ի կատար ածել։ Այսպէս օրինակ՝
ինչով կարելի է ծածկել սերմերը։ Արօրը (չուքը)
ծածկում է շատ անհաւասար կերպով և վատ։ Գու-
թանը ցանքի համար աւելի լաւ է, որովհետև
որքան ուզենանք, կարող ենք խորը վարել։ Սեր-
մերն աւելի բարակ ծածկելու համար կարելի է

լոյս աշխարհ և եթէ տաքութեան աստիճանը
զգալի կերպով պակաս լինի (16—18⁰ ցելս.) պէտք
է աւելացնել 2—4 օր։

Այսպիսով մենք բաւականաչափ խօսեցինք
սերմնացուների և ցանքի մասին, այժմ թէև
մեր նպատակից քիչ հեռու գնացած կլինենք բայց
աւելորդ չի լինի եթէ հաղորդենք նաև մի համա-
ռօտ, բայց օգտակար և անհրաժեշտ տեղեկութիւն,
որ վերաբերում է գաշտերի մատաղ հացարոյսե-
րին։

Մատաղ բոյսերը որ և է անհամապատասխան
կլիմայական ազդեցութիւններից, հողի այս կամ
այն տեսակ կազմութիւնից, անպէտք խոտերից,
հիւանդութիւններից, միջատների վնասներից պաշտ-
պանելու և նորա գիւղատնտեսական նպատակայար-
մար զարգացման ուղղութիւն տալու համար, պէտք
է դիմել հետևեալ միջոցների։ ա. Մատաղ բոյսերի
արմատները հողով ծածկելու համար գարնանը
աշնանացանքերը պէտք է հարթել, նոյն կերպ
պէտք է վարուել նաև գարնանացանի արտերի և
մարգագետինների հետ, այդպիսով հողն մէջ սեղ-
մել և նորանով ծածկել մատաղ բոյսերի ցօղունի
կապերը։ Հարկաւոր է հարթել նաև վուշի և մլուս
բոյսերի արտերը, որպէս զի հողի կոշտերը փշըր-
բելով, նոցա միջի վնասակար միջատը—լուն ոչըն-
չացուի։ բ. Արդէն լաւ արմատացած մատաղ բոյ-
սերը պէտք է տափնել, եթէ միայն չպոկուի։ որ-
պէս զի այդպիսով միամեայ երբեմն և երկամեայ
անպէտք խոտերը ոչնչացուին։ գ. Երբ առաջին
անգամ նկատուի մատաղ բոյսերի չորքերը, հողի
կեղևը քանդելու և անպէտք խոտերը ոչնչացնելու
համար պէտք է 1-2 դիւյիմ հաստութեամբ հողը
մարկոսել։ դ. Վերոյիշեալ գործողութիւններից յե-
տոյ, երբ հողը բաւական չափով ծածկուած կլինի
բաւական մեծացած բոյսերով, պէտք է հողով
փաթաթել իւրաքանչիւր բոյսի բունը։ ե. Բորակով
(ископая рійселитра), ծծմբաթթուային աւշակով
(сѣрнокислый амміока), գաճով (гипсъ), մոխ-
րով և կամ աղբահիւթով պէտք է երեսանց գար-
նանը պարարտացնել աշնանային ցանքերը, երբեմն
նաև գարնանացանքերը, իսկ աւելի յաճախ ճա-
րակախառերը։ զ. Պէտք է նոսրացնել խիտ բու-
սած տեղերը։ է. Սովորաբար պէտք է աշխատել
քաղհանել որքան կարելի է վաղ, թէև այդ դժ-
ուարին է մի քիչ, որովհետև մատաղ հասակում
հացաբոյսերը ուրիշ անպէտք բոյսերից վանաղա-
նելը քիչ դժուար է,

գործ ածել տափան (бороно)։ բայց տափանը լաւ
և հաւասարաչափ կերպով կարող է ծածկել սեր-
մերը, երբ հողը արդէն փափկացրած է։ Այնու
ամենայնիւ այսպիսի դէպքում աւելի լաւ է գործ
դնել տափան քան արօրը։ Սերմերը հողով ծած-
կելու համար շատ լաւ է գործ ածել նաև առանձ-
նապէս պատրաստած սերմնածածկիչներ (запашники),
նոքա, ինչպէս և հասարակ տափաններըս, ունին մի
շրջանակ, որին ամրացրած է մի տեսակ ատամների
ծայրին երկաթեայ թաթ, այդ պատճառով էլ այդ
սերմնածածկիչները (запашники) երբեմն անուան-
ւում են թաթաւոր տափաններ (лопчатая борона) և
որովհետև շատ քիչ է տարբերում ցրտահարուած
իւր խոփիկների ձևով, ուստի և երբեմն էլ կոչւում
են նաև բազմախոփ (скоропашки) գործիք։ Այդ
գործիքները օգտակար են և կարևոր ոչ միայն սեր-
մերը ծածկելու համար, այլ նաև հարօսի երկրորդ
և երրորդ երիսը վարելու համար, որպէս զի նա
աւելի լաւ փափկուի և հողի երեսին կոշտեր
չմնայ։ Այդ թաթաւոր տափաններից իւրաքան-
չիւրը, որ պատրաստում են ռուսաստանի մի քանի
նահանգներում, արժէ 6-8 ռ։

Վերջապէս ինչով էլ որ ծածկուեն սերմերը,
այնու ամենայնիւ վերջը պէտք է մէկ երկու ան-
գամ հաւասարեցնել և հարթել չարմար տափա-
նով։ Ցարմար տափանը կարող է նաև բուսած ան-
պէտք խոտերը դուրս հանել և ոչնչացնել, որով
նպաստած կլինի մաքուր հացաբոյսին ազատ և յա-
ջող աճելուն։ Ցանած արտի երեսը ծածկելու հա-
մար, բացի տափանից, գործ են ածում նաև
հարթիչ մեքենայ ((катокъ)։

Վերջացնելով ցանքը, գիւղացին պէտք է
իսկոյն ձեռնարկէ գաշտային միւս պարապմունք-
ներին, որոնց մասին կաշխատենք խօսել մի ուրիշ
անգամ։

Գ. Ղ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԴՐ. Կ. ՌԻՆԿԱՄԻ.

Ա.

ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԸՄՊԵԼԻՔ։ *

(Շարունակութիւն)

Սալուը (համարեա, ցորենը, վարսակն և գա-
րնան) բաղկացած է գլխաւորապէս օսլայից, որ

---

* Տես «Արարատ» 1900 թ. համար Բ. եր. 92։

նորա կշռի կիսովցն աւելի է: Եթէ մի փոքր ալիւր խառնենք մի բաժակ ջրի մէջ, սկզբում ջուրը կը պղտորի, իսկ յետոյ բաժակի տակին մանր սպիտակ փոշի կը նստի. եթէ յետոյ այդ փոշին քամենք, կ'ստանանք օսլայ: Ինչպէս որ հացահատիկներից է ալիւրը ստացուում, նոյնպէս էլ կարելի է ստանալ բրնձից, պաղինձաւոր պատղներից, կարտոֆիլից, դանդաղան արմատներից, վայրի շագանակից և էն. կերակուր եփելիս և ճերմակեղէն լուանալու համար օսլայ պատրաստելու միանգամայն միևնոյն բանն է ցորենի կամ կաստիլից ալիւր և օսլայ դուրս առնելը: Այս երկ պատճառով բոլորովին կ'զուրկ են առաւելութիւն տալիս ապուսաստանի օսլաներին (օր. սագոյին, որ արմատենու օսլայ է, կամ առավուտային) երեխաներին կերակրելու համար, որովհետև ընդհանրապէս կոմից օսլայն այլ և այլ տեսակները հաւասար արժէք ունին:

Բացի օսլայից հացաբոյսերը պարունակում են մի ուրիշ ընդհանրապէս նիւթ էլ, որ շատ նման է սպիտակուցի և ֆիբրինի (որ մի թել թել նիւթ է մսի բաղադրութեան մէջ) և կոչուում է ասպնձուտ. սա թեփոնի չափաւ և ոչ բոլորովին սպիտակ ալիւրի տարերքում մասն է կազմում: Եթէ մարդ բերանն առնէ մի քանի հաճարի կամ ցորենի հատիկ և լաւ ծամէ, լոքնունքի միջոցով կը բաժանուի օսլան, իսկ բերանում կը մնայ մի դեղնաւուն մածուցիկ (կպչուղ) նիւթ, որ և կոչուում է ասպնձուտ. սորանից պատրաստում են շատ համեղ դգմաճ (մակարոն) և արշտայ: Նոյն այդ ասպնձուտն է որ սև հացին տալիս է նորան յատուկ գոյնը, համը և փոքր ինչ լռնաւութիւն: Սպիտակ հացը պատրաստուում է լաւագոյն ալիւրից, այսինքն այնպիսի ալիւրից, որ թեփահան է արած և միջինը ասպնձուտը հանած է: Պաղինձաւոր պատղները պարունակում են մի նիւթ, որ բոլորովին համապատասխանում է ասպնձուտին և կոչուում է լեգումին. սորա չնորհիւ է որ պաղինձաւոր լոյսերն (լեգումինոզ են կոչուում բուսաբանութեան մէջ) այնքան սննդարար են:

Հացը, որ պատրաստուում է հացաբոյսերի ալիւրից, բաղկացած է մեծ մասամբ օսլայից և ասպնձուտից: Եթէ ալիւրն հանեցնենք ջրով, հեռը խառնենք թթխմոր և տաք տեղ դնենք, խմորը կը դայ և միջին օդ կը մնայ (ածխի գազ) բաղմաթիւ փուչիկների ձևով. այդ օդը մինչև վերջն էլ խմորի մէջ մնում է, և օդերէն փուչիկները մնում են իրենց գոյացած տեղերում, որովհետև հացի միջուկը ասպնձուտի չնորհիւ գառնում է առաձգական ու մածուցիկ: Այսպիսով խմորի ծաւալը մեծանում է (խմորը դալիս է) և թխած հացը փուխր է լինում ու ծակոտիներով, օդերէն փուչիկների չնորհիւ: Լաւ հացը պէտք է բաւականաչափ փուխր լինի և նորա միջուկը պէտք է շատ օդերէն փուչիկներ ունենայ, որովհետև դոցանից է կախուած հացի դիւրամարս լինելը: Միջուկի մէջ բնաւ չպէտք է պատահի դունդ դունդ չոր ալիւր կամ չեփած խմոր, որովհետև այդպիսի հացը կարուում է ստամոքսում և մատամբ չմարսուած է դուրս գալիս ստամոքսից: Այստեղից պարզ է որ մի փոքր թեփախառն սև հաց ամէն օր գործածելն աւելի օգտակար է, քան սպիտակ հացը, մասամբ որովհետև թեփի պակասելովը պակասում է և ասպնձուտը, որով և հացը կարգնում է իւր սննդարարութիւնը, մասամբ էլ որովհետև թեփը օսլան աւելի դիւրամարս է դարձնում, եթէ մարդ չուր էլ խմէ հացի վրայ և վերջապէս՝ որովհետև թեփի վայտեղէն մասը աւելի է լարել տալիս ստամոքսն ու աղիքները և դորանով դիւրացնում է արտաթորութիւնը: Նօթն ամառականից ոչ պակաս երեխաներին օգտակար է տալ ծամելու սև հացի կեղևը, որովհետև այդ նախ՝ ամրացնում է ծամելու գործարանները և երկրորդ՝ արտաթորութիւն է յառաջ բերում: Մեծ երեխաների համար սև հացը թէ լաւ սննդարար նիւթ է և թէ ստամոքսը կանոնաւորապէս մաքրելու միջոց, բայց պէտք է ուշ գործնել որ նոքա հացը կամաց կամաց և լաւ ծամեն: Նմանապէս օգտակար է սև հացը և հասակաւոր մարդկանց համար, որոնք նստակեաց կեանք են անց կացնում: Հացի չափից դուրս թեփոտ լինելը վնասակար է, որովհետև թեփի շատութիւնը պակասեցնում է հացի սննդարարութիւնը և կարճես լուծողական է դարձնում նորան. այսպէս ուրեմն շատ թեփոտ հացը լաւ կերակուր է տանուլին, ձիուն, ճագարի համար, բայց ոչ երբէք չների և առաւել ևս մարդկանց համար, որովհետև մեծ քանակութեամբ թեփը նոքա չեն կարող մարսել և նա գրեթէ անփոփոխ դուրս կը գայ:

Հարիւր ֆունտ ցորենի ալիւրից ստացուում է համարեա 125 ֆունտ լաւ սպիտակ հաց, իսկ 100 ֆունտ հաճարի ալիւրից՝ 130 ֆ. լաւ սև հաց: Ուրեմն մի ֆունտ հաց ստանալու համար պէտք է վերցնել 48²/₃-ից մինչև 52 լոտ (145-ից մինչև 156 մասալ) խմոր, որովհետև թխելիս ջուրը գոլորշիանում է: Լաւ թխած հացը պիտի պարունակէ ոչ աւելի քան 35—40% ջուր, հետևաբար դէպքում հացը վնասակար է դառնում և շուտով քարթուանում է (հնանում է):

Պաղինձաւոր պտուղները (տատ, սպիտակ լոբի, դեղին ու կանաչ սիսեռ) մեծ քանակութիւններից աւելի մօտ են մսեղէն կերակրին, հարուց են մինչև անգամ նորա տեղը տալ և շատ դերազանց են դեռևս ընդունուած (կարտօֆիլից);

Նոքա գործատարմարս են, մանաւանդ երբ լաւ չեն պատրաստուած կամ երբ առանց հարկաւոր համեմունքի են ուտում։ Նոցա պատրաստութեան համար շատ կարևոր է, որ եփուին կակուղ ջրում (այսինքն՝ որ քիչ կրային մասեր է պարունակում)։ Պտուղները եփելուց առաջ պէտք է մի ամբողջ գիշեր ջրի մէջ պահել, հետևեալ օրը ջուրը փոխել, նոր եփել, եփելու ժամանակն էլ շատ շատ կառնել։ Եթէ ջուրը կակուղ չէ (սարթ է), մէջը կարելի է շատ քիչ սոդա քցել։ Լօրենս սխեռը ալեւ. աւելի դիւրամարս դարձնելու համար պէտք է որորել և մոմի մէջով անց կացնել, որ կճեպը, կաշին, չմնայ կերակրի մէջ. երբեմն համեմունք սովորաբար դործ են ածում քացախ և պղպեղ։ Այս պտուղները օգտակար է ուտել և մսեղէն կերակիրների հետ և պէտք է ուտեն թէ ադքատները և թէ հարուստները, մանաւանդ ձմեռ ժամանակ. ծանր ֆիզիքական աշխատանքով ծանրաբեռնուած ծնողների համար, կարելի է ասել, անփոխարինելի կերակուր են։

Աւելի օգտակար նիւթ է սիմինարը (եդիպտացորենն), որ իւր ախորժելի համի և անդադարար լինելու պատճառով առանձին ուշադրութեան է արժանի. սիմինարն էլ կարելի է պատրաստել լոլու և միւսների նման։

Բրինձը իւր բաղադրութեամբ բնում է պատիճաւոր պտուղների և դեռնախնձորի մէջ տեղը. թէպէտ նոցա մէջ շատ քիչ կայ ազնուացուցանման ոսնձաւոտ, բայց խոտ շատ օգտակար է պարունակում. բայն դորանից զրկինը շատ դիւրամարս և թեթև կերակուր է։ *

Դեռնախնձոր. Սորա օգուտը մեծ չէ. ճիշդ է, շատերի համար դեռնախնձորն իրեւ անուշ համեմունք անհրաժեշտ է դարձել, բայց միայն նրանով կերակրուելն անկարելի է, որովհետև դեռնախնձորն առհասարակ շատ քիչ կարող է ոյժ և առողջութիւն տալ։ Ուստի քանի երևութիւն ուժան դեռնախնձորն իրօք աւելի թանգ է քան պատիճաւոր պտուղները, սիմինարն ու բրինձը։ ** Դեռնախնձորն ուտում են ոչ միայն համի պատճառով, այլ և նորա համար, որ նա ոտամոքսի մէջ երկար մնալով՝ աւելի շատ ժամանակ մեզ կուշտ է պահում։ Իսկ եթէ դեռնախնձորը ծառացում է որպէս գլխաւոր կերակուր, այն ժամանակն անհրաժեշտ է որ և է բան նով համեմել նորան, որով անդադար և ուժան կերակուր է դառնում. այսպէս օրինակի համար, շատ օգտակար է դեռնախնձորն եփել կաթով կամ ուտել պանրի ու կարագի հետ (կամ իւղով)։

Ծաչա եղէգները շատ քիչ են անդադար, բայց լաւ ու կարևոր համեմունք են, որովհետև պարունակում են բուսական թթուներ ու հանքային աղեր։ Եթէ արմատները (գազար, շաղգամ) եփուին դեռնախնձորի հետ, երկուսի համն էլ կը լաւանայ և աւելի դիւրամարս կը դառնան։ Տերևաւոր բանջարեղէնները (կաղամբ, սպանախ, աւելուկ և այլն.) ինչքան մատաղ (քորփայ) լինին, այնքան աւելի անդադար կը լինին։ Առհասարակ բանջարեղէնները անդի համար քիչ նշանակութիւն ունին այն պատճառով, որ նոցա ինը ատենորդական մասը ջուր է, որի մէջ շատ քիչ անդադար նիւթ կայ։ Ինչ էլ որ լինի, բանջարեղէնները շատ լաւ սիտի եփուին և շատ փափուկ լինին, որ մեծ քանակութեամբ ուտելիս հեշտութեամբ մարսուին։ Ամենաանդադար բանջարեղէնը մեզ համար կանաչ լոլին է։

Պտուղներն էլ (մրգեղէն) գլխաւորապէս ջրից են բաղկացած, ուստի և միայն զովարար, ախորժահամ և օգտակար համեմունք կարող են լինել. ինքն ըստ ինքեան նոքա քիչ անդադար են։ Եփած պտուղները միշտ դերադասելի են հումից, մանաւանդ երեխաների, հիւանդների և թոյլ մարդկանց համար։

Սուկը շատ ազնուացուցանման բաղադրիչ մասեր է պարունակում և կաթով ու դեռնախնձորով եփած որ լինի՝ շատ անդադար է ու կարող է բուսական չափով մարդու կշռացնել նոյն իսկ ատամիկ ֆիզիքական աշխատանքի ժամանակ։ Սուկը գործածարմարս է դառնում միայն այն ժամանակ, երբ լաւ չեն ծամում ու կտոր կտոր են կուլ տալիս։ Մի բանի վրայ պէտք է խոտ ուշադրութիւն դարձնել, այդ այն է, որ անկերի մէջ շատ են պատահում թթուներ տեսակները, ուստի և պէտք ուտել այն սուկը որ մարդ լաւ ճանաչում է իրրև անվնաս. միւսներից պէտք է հեռու մնալ, նոյն իսկ երբ նոցա հոտն ու տեսքը գրաւիչ են երևում։

Համեմունք. Այսպէս են կոչում մի քանի հատուկեաց նիւթեր, որ աւելացնում են ուրիշ ուտելիքների վրայ՝ նոցա համ ու հոտ տալու համար, օր. սոխ, սխտոր, պղպեղ և այլն։ Համեմունքները նպատակ են հատուկ տարների մարսողութեանը, իսկ երեխաների համար վնասակար են։

Աղը ամէնքի համար անհրաժեշտ է, օգտակար է նաև երեխաներին, երբ նոքա գլխաւորապէս օտլայ պարունակող նիւթերով են կերակրուում (հաց, պատիճաւոր պտուղները)։ Քացախը

---

* Բրնձի գործածութիւնը մեր ժողովրդին լաւ յայտնի է, ու նորա եփելու կամ ինչով ուտելու մասին բան ասելացնելը աւելորդ է։ Ծ. Թ.

** Խոսքն հասկաւ մեր երկրի մասին չի, ուր կարտոֆիլն աւելի բանիգ է, քան ասպր, պիսկորդ, լոբին։ Ծ. Թ.

Լբրև լաւ համեմունք կարելի է դարձ ածել պատրաստ կերակրների համար. նա փափկացնում է մկրը, աւելի գիւրամարս է դարձնում պատրաստուղ պատուղները, իսկ ամառուայ շոգերին քացախով Ջուրը հեշտ է ծարաւ կտրում. Երեխաներին քացախ պէտք չէ տալ, մեծերն էլ ամէն օր ու շատ շատ պիտի դարձ չածեն:

Ջուրը խիստ անհրաժեշտ բան է ամէն կենդանի արարածի համար, որովհետև առանց նորան նիւթերի փոխանակութեան գործողութիւնն անհնարին է. ինչպէս որ բոյսերը վչտանում են եթէ կարատեն երաշտութիւնից, նոյնպէս էլ մարդիկ ու կենդանիները չեն կարող ապրել առանց Ջրի և աւելի յաճախ ծարաւից են մեռնում, քան սովածութիւնից: Բոլոր ըմպելիքների մէջ, կաթից, պարէջրից, արգանակից (սուպ), ինչպէս նաև պինդ կերակրից, բանջարեղէնի և մրգ մէջ Ջուրը լաւ նշանակութեամբ առաջին տեղն է բռնում՝ գլխաւոր բաղադրիչ մասից յետոյ: Մեր մարմնի մէջ Ջուրը ամբողջ կշռի երեք քառորդն է կազմում:

Ջուրը մեզ համար ամէնից անհրաժեշտ սննդարար նիւթն է, և մենք առանց նորան չենք կարող մեր առողջութիւնը պահպանել: Շատ օգտակար է, եթէ մարդ առաւօտ քնատեղից վեր կենալուց յետոյ, և ամէն երեկոյ՝ քնելուց առաջ: Նոյնը շատ օգտակար է անել ամէն օր կուշտ հաց ուտելուց մի ժամ կամ կէս ժամ յետոյ. գերադասելի է սառը Ջուրը, որովհետև զովացնում է: Տենդով բռնուած հիւանդներին ամէն ժամանակ կարելի է Ջուր տալ խմելու, բայց Ջուրը պիտի շատ սառը չլինի: Ամէն մարդ գիտէ, թէ ինչքան վնասակար է սառը Ջուր խմելը՝ մանր գալուց, վաղվզելուց, պաղ գալուց, լօսնելուց և այն. քրտնած ժամանակ: Շատ խօսող ու քրտնող մարդը կարող է աւելի Ջուր խմել, քան ուրիշները.

Խմելու համար պիտանի Ջուրը մշտ պատրաստում է որոշ բանակութեամբ ածխաթթու գազ և օդ, պարզ է լինում և ոչ մի հոտ չէ ունենում: Բուսական կամ կենդանական նիւթեր պատրաստող Ջուրը վնասակար է. այդպիսի նիւթերի Ջրի մէջ լինելը կարելի է իմանալ՝ Ջուրը բաժակով կամ շշով մի քանի օր մի տեղ անշարժ թողնելով. մի քանի ժամանակ անցնելուց յետոյ ամանի յատակին գոնաւորը բաներ են նստում և Ջրիցն սկսում է անախորժ հոտ գալ: Այդպիսի Ջուրը մաքրելու համար անց են կացնում մանր ծեծած փայտի ածուխի Ջրով:

Պաշտ (սարթ) է կոչուում այն Ջուրը, որ շատ հանքային նիւթեր է պարունակում, իսկ փափուկ (կակուղ) Ջուրը այդպիսի բաղադրիչ մասեր չէ ունենում, օր. անձրևաջուրը, մի քանի աղբիւրներն և գետերի Ջուրը, պատ Ջուրը: Կակուղ Ջուրը գնահատելի է տնտեսութեան մէջ, որովհետև նորանով աւելի լաւ է շոր լուացուում, չէ լուծում ոտպանը և աւելի շուտ է եփացնում պատրաստուղ պատուղները: Պաշտ Ջուրը կը կակղի, եթէ մէջը փոքր ինչ սոդա քցուի:

Ածխաթթու Ջուրը (կամ քնական, հանքային Ջուրը, որ ածխաթթու գազ է պարունակում, կամ արհեստական) վերջին ժամանակները շատ տարածուած է և յայտնի է սելտերի, սոդայի կամ ածխաթթու Ջրհորի Ջուր անունով: Այդ Ջրերից առաջինը ներգործում է գրեթէ որպէս լուծողական, երկրորդը աչնչացնում է տատմոքսում հատաքուած չափից աւելի թթուութիւնը, իսկ երրորդը գրգռում է ախորժակ և միզահատութիւն: Այդպիսի Ջրերը կարելի է դարձ ածել ինչպէս գինի և մխանդամայն աւելորդ է սովորական, հատարակ Ջրի պէս գործ ածելը, որովհետև նոցա հետ մեր կազմուածքի մէջ մտնող ածխաթթու գազը ստամոքսից ու աղիքներից անց է կենում արեան մէջ և եթէ շարունակ գործ ածուի, վերջ ի վերջոյ ի՛սպէս ինչպէս թոյն. արեան մէջ այդ գազը շատանալով՝ վերնատուում է նիւթերի փոխանակութիւնը և յառաջ է գալիս թուլութիւն, դունատութիւն և արեան պակասութիւն

(Կը շարունակուի)

ԱՅԼԱՅԼ

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

Շարժուող լուսանկարներով լրագիրներ. Պարիզի հրատարակիչներն այժմ նոր ձևի լրագիրներ էլ են հնարել, որոնք ընդհանրապէս «Sterlo—Revue» անունով են յայտնի և լոյս են տեսնում ամսական երկու անգամ: Այդ լրագիրներն իրենց բաժանորդներին շարժական լուսանկարների միջոցով հաղորդում են քաղաքական, բեմական, գրատատանական և մինչև իսկ վաղոցային կեանքի այն բոլոր պատահարները, որոնք որ և է կերպով նորութիւն են յայտնում և կամ մարդու հետաքրքրութիւնը շարժում: «Sterlo Revue»ներն իրենց բաժանորդներից շատ ժամանակ չեն խը-

լում, եւ որ ամենից գլխաւորն է, ամենևին չեն էլ ձանձրացնում։

Այդ նորելուկ լրագիրների բաժանորդներից ոմանում են մի մի հատ գեղեցիկ ու թեթև դործիք, որոնք իրենց կազմութեամբ նման են պատկերացոյցի և միևնոյն ժամանակ դիտակի ծառայութիւն էլ են մատուցանում։ Բացի դրանից լրագիրների համբագրութիւններն երկու շաբաթը մի անդամ ուղարկում են մի մի էլ կապոց, որոնք 15-ից մինչև 20 օրինակ շարժական լուսանկարներ են պարունակում և ներկայացնում են ժամանակից դեռևս դրաւիչ տեսարանները։ Պատկերները կից դնում են և նրանց բացատրութիւնները։

Հետևաբար այդ լրագիրների բաժանորդները կարող են առանց իրենց ընտիրասանների դուրս գալու, ներկայ գտնուել աշխարհիս մէջ պատահող բոլոր նշանաւոր դէպքերին։ Կքացուն նրանց աչքերի առաջ անգլիացիների և բուրերի մէջ ծագած պատերազմի տեսիլքն կատարածները, կտեսնեն մի բազմամբոխ ատեան և կամ կատաղի հրդեհի մատնուած մի տուն։ Եւ նոյնպէս, վերջերը հրատարակուած լուսանկարների մի ծրար ցանկացողի առաջն էր դնում Բէննի դատարանը, ժողովականները, նիստը, Դրէյֆուսի բանտից դուրս գալը և այլն։

Պարզվի ոտանկանապետը, որն առանձին յարգանքով է վերաբերում այդ նոր ձևի լրագիրների հրատարակութեանը, սիրով նպաստում է և նրանց տարածուելուն, իր աջակցութիւնը յայտ տալով, երբ հարկը պահանջում է։

* * *

Անիրել հետագրի կատարած ճարտարոյն յատկապիտութիւններ.—Պր. Մարկոնին, անթել հեռագրի հնարողը, երբ վերջին ժամանակներս Ամերիկայում էր գտնում, դեղեցիկ կերպով ապացուցեց իր դատած անթել հեռագրի ունեցած առաւելութիւնները։ «Grande Duchesse» նաւի վրայից, որի դլխաւոր կայմի վրան մի ուրիշն էր ամրացնել տուել, այնպէս որ երկուսի բարձրութիւնը և միասին վերցրած 120 ոտնաչափի հասնէր, և այդ տեղից հեռագրական գործիքները կային դրուած, դնաում էր Նիւ-Եօրքի ծովանոցում մրցող նաւերի շարժումները և նրանց հեռաւանքների մասին տեղեկութիւններ տալիս մի ուրիշ շոգենաւի, որը Sondy Hvok փարոսի մօտն էր գտնուում և ունէր նոյնպիսի գործիքներ, որոնք առաջուց կապուած էին Նիւ-Եօրքի հեռագրատան հետ։ «Grande Duchesse-ն» ուղեկցում էր մրցակից առագաստաւորը նաւերին և մրցութեանց մանրամասն նկարագիրն New—York Herald լրագրին ղեկուցանում։ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների ծովային վարչութեանց նդկերներին դիջանելով, պր. Մարկոնին հաղորդակցութիւն սկսեց հաստատել ինչպէս «Նիւ-Եօրք» յաճախաւէտ ու պատերազմական «Մատաչուպետս»-ի հետ, այնպէս և սկանդալը նաւերից մէկի հետ, որն նախորեակից 10 մղոն հեռու էր և ամենայն արագութեամբ առաջ էր գնում։ Բայց պր. Մարկոնին, որանից մի քանի շաբաթ առաջ ուելի գործնական հետաքննութիւններ է հաստել Ամերիկայից Եւրոպա վերադարձած միջոցին։ Նախ քան Նիւ-Եօրքից հեռանալը, նա հեռագրում է Լոնդոն իր ընկերութեան գրասենեակը, յայտնելով, որ ինքը «Ս Պօղոս» շոգենաւով Անգղիայի ափերի մօտերից անցած միջոցին մտադիր է խօսել Necdles-ի (Ուայդ կղզու հրատանդանը) հետ։

Հաշուով այդ շոգենաւը պիտի է Necdles-ի մօտից անցնէր ուրբաթ օրը, առաւօտեան ժամի 10-ին և կամ 11-ին. ուստի և հեռագրատան ուղղ պաշտօնեայ Գլուդ Պէժը այդտեղ հատաւ նախընթաց օրուայ երեկոյեան և ամէն բանի պատրաստութիւն տեսաւ անթել հեռագրով հաղորդակցութիւն սկսելու համար։ «Ուրբաթ առաւօտեան, այսպէս է դրում նա» Times-ին, մենք սկսեցինք մեր ազդարարութիւնները և յանկարծ հնչեց մեր զանգակը։ Այդ առաջին ազդը մեզ հասաւ նոյն օրուայ երեկոյեան ժամի 2-ից 45 րոպէ անց։—«Այդ ոմի է. Դո՞ւք էք արդեօք, «Ս. Պօղոս Շոգենաւ»։—«Այո՛». մեր հարցին իրրև պատասխան ստացանք։ - «Որտեղ էք գտնուում»։—«Աւելից 66 ծովային մղոն հեռու (114 վերստ)։ Զդիտանք, թէ ինչպէս մեր զարմանքն ու ուրախութիւնը յայտնէինք. ուստի և բաւականացանք մի քանի րոպէի մէջ երեք չորս հեռագիր գրել և ուղարկել Նիւ-Եօրք, եւ շատ շատերն էլ Անգղիա և Ֆրանսիա, որոնց բոլորի բովանդակութիւնը մեր 50, 45 և 40 մղոնից ոտացած անթել հեռագրի տեղեկութիւններն էին»։ Եւ ընդհակառակը, «Ս. Պօղոս»-ի անդորդներն անմիջապէս ոտացան դեռ ևս յամառքին չհասած, Հարաւային Ափրիկայում տեղի ունեցող պատերազմի թարմ նորութիւնները, ինչպէս և Էդվի—Սմիթի, Կիմբերլէյի, Մեֆիկինդի և միւս քաղաքների մասին եղած տեղեկութիւնները։ Այս լուրերն շատ շուտով տպագրուեցան «Transatlantic Times» թերթի մէջ, որի իւրաքանչիւր համարը ծախւում էին մի դոլլարով յօդուտ չքաւոր նաւաստիների։ Մի անցորդ էլ, դեռ 40 մղոն մնացած մինչև յամարքին հասնելը, իրեն համար ընթերցել պատուէր տուաւ Լոնդոնի հիւրանոցներից մէկին, որ ճիշդ ժամանակին, երբ

հաոնելու. լինէին Վատերլոյի հայաբանը. ամէն ինչ պատրաստ լինէր։

***

Transatlantic Times յարգի առաջին եւ միակ համարի հրատարակութիւնը։ Ինչպէս հաղորդում է «Journal des Délats»-ն վերոյհշեալ լրագրի առաջնին և վերջին համարի լոյս աշխարհ գալը կատարուեցաւ մի բոլորովին բացառիկ և մինչդամայն անօրինակ պարագաներում։ Այդ լրագրի հրատարակութեամբ, որն յատկապէս կատարուեցաւ Անդղիայի և միացեալ Նահանգների մէջ երթևեկող «St. Paul» շոգենաւի անցորդների համար, հաշակաւեցաւ այդ նաւի վերջին գնացքներից մէկը, երբ ճանապարհորդների թիւը դանում էր և այլ։ Մարիանին, անթել հեռագրի հնարողը։ Նա՝ Ամերիկայում հաստատած իր կարճատև ճանապարհորդութիւնից յետոյ՝ եւրոպայ էր վերադառնում և որպէս դի իրեն ուղեկցող պարոններին, որոնք այդ միջոցին բոլորովին կարօտած էին ամբողջ աշխարհից, կարզանայ ձանձրոյթից ազատ հատուցանել, շոգենաւի վրայ իր գտած անթել հեռագրի շնորհիւ տեղեկատու հայտարան պատրաստեց և Նիւ-Եօրքում դանուող նոյն կազմութեան հեռագրի հայտարանից տեղեկութիւնները սկսեց ստանալ, թէ ինչ ընթացք ու վերջ ունեցաւ այդ օրերում Նիւ-Եօրքի ծովախորշում հաստատուղ անդղիական և ամերիկական առաջատար նաւերի մրցութիւնը։ Այդ տեղից ստացուած նորութիւնները իսկոյն տպագրում էին Մարկոնիի հէնց շոգենաւում բացած տպարանում և տպուած թերթերը բաժանում էին անցորդներին։ Իսկ երբ «St. Paul» շոգենաւը, դեռ ևս 110 հաղորդամիլս էր մնում մինչև Անդղիայի ափերին հասնելը, պր. Մարկոնին կրկին հաղորդակցութիւն սկսեց Նեգլոսի հայտարանի հետ, որին Ամերիկայից ազդարարել էր։ Օդի միջոցով արուած բոլոր հեռագրները անարգելք տեղ էին հասնում և «St. Paul» շոգենաւի բոլոր անցորդները, դեռ Եւրոպա չհասած, իմանում էին անդղիացիների և տրանսվալցիների մէջ ծագած պատերազմի վերջին նորութիւնները։

***

Ի՞նչպիսի են մարդիկ իրենց օրերն անց կացնում. — Մի ֆրանսիացի գիտնական ազգացուցանում է, որ մարդս օրական քնում է 8 ժամ, ուտում $2^1/_2$ ժ., աշխատում 7 ժ., զուարճանում 3 ժ., մանգալիս $2^1/_2$ ժ., հագնուում 1 ժ., անգործ մնում 1 ժ., Ուստի և մարդս, եթէ հաշուենք, թէ 60 տարի պիտի ապրի, քնի տուած կլինի 20 տարի, ուտել խմելու՝ 6 տ. 3 ամիս, մանգալու՝ 6 տ. 3 ամիս, հագնուելու՝ 2 տ. 6 ամիս, աշխատանքի՝ 17 տ., անգործութեան 2 տ. 6 ամիս։ Շատ պարզ է, որ այս թուերը մօտաւոր չափեր են։ Սակայն քանի՞ քանի՞ ողորմելի մարդիկ էլ կան, որոնք իրենց կեանքի մի մասը քնի, իսկ միւսը՝ պարապորդութեան են նուիրել։

***

Տաղանդաւոր մարդկանց տարիքը։ — Հանճարեղ գիտնականների և նշանաւոր մատենագիրների կեանքն առհասարակ շատ երկարատև է եղել։ Օրին. հետևեալ գիտնականներն ապրել են. Հումբոլտը՝ 89 տարի, Նիւտոնը՝ 84 տ., Պղատոնը՝ 82 տ., Կանտը՝ 79 տ., Գալիլէյը՝ 78 տ., Կոպերնիկոսը՝ 70 տ., Էյլերնիքը՝ 70 տ., Սոկրատէսը՝ 68 տ., Արիստոտելը՝ 62 տ., Հեգէլը՝ 61 տ., Դեկարտը՝ 53 տ.։ Բանաստեղծներն ու մատենագիրները. Սոֆոկլը՝ 90 տարի, Քսենոֆոնտը՝ 86 տ., Վոլտէրը՝ 84 տ., Գեօթէն՝ 88 տ., Վիկտոր—Հիւգոն՝ 83 տ., Կոռնէլը՝ 78 տ., Հեռոդոտը՝ 76 տ., Եւրիպիդէսը՝ 74 տ., Պետրարկան՝ 70 տ., Ռարլէն՝ 70 տ., Էսքիլէսը՝ 69 տ., Սերուանտէսը՝ 68 տ., Միլտոնը՝ 65 տ., Վայլաէր—Սկոտը՝ 61 տ., Ռասինը՝ 59 տ., Հորացիոսը՝ 57 տ., Դիկկէնսը՝ 56 տ., Դանտէն՝ 56 տ., Շէքսպիրը՝ 52 տ., Վիրգիլիոսը՝ 51 տ., Մոլիէրը՝ 51 տ., Շիլլէրը՝ 45 տ., Գեղարուեստագէտները. Տիցիանը՝ 99 տ., Միքել—Անջելոն՝ 89 տ., Ռուբէնսը՝ 63 տ., Վելասկէզը՝ 61 տ., Գոյլբէյնը՝ 57 տ., Վան—Դէյկը՝ 42 տ., Կորրեջիոն 40 տ. Ռափայէլը՝ 37 տ.։ Կրօնի հիմնադիրները. Կոնֆուցիոսը՝ 71 տ., Լիւտերը՝ 68 տ., Մահամմէդը՝ 62 տ., Կալուինը՝ 54 տ., Երաժշտագէտները. ամենից աւելի ապրել է Հայդնը՝ 77 տարի, Հենդէլը՝ 75 տ., Պելեստրինին 72 տ., Վագնէրը՝ 70 տ., Բախը՝ 65 տ., Բեթհովէնը՝ 56 տ., Շումանը՝ 41 տ., Վեբէրն ու Շոպէնը՝ 39., Մենդելսոնը՝ 38 տ., Մոցարտը՝ 35 տ., իսկ Շուբէրտը՝ 31 տարի։ Վերոյիշեալից պարզապէս նկատում է, որ ամենից աւելի կարճատև կեանք են ունեցել երաժշտագէտները։

***

Ծառերի երկարակեցութիւնը։ Հիւս. Ամերիկայում, Օնտարիօ լճի շրջակայքում, բարձրուղէշ ասպիներ են բնում, որոնց կեանքի տեւողութիւնը հաշիւ 40—50 տարուայ է հասնում. սակայն աշխարհիս այս ու այն կողմերում պատահում են և այնպիսի ծառեր, որոնց կեանքի տեւականութիւնը պատկառանք է ազդում։ Ինչպէս, օրին. կաղամախին ապրում է 300 տարի, նշդարենին՝ 335 տ., թխտենին՝ 576 տ., նարնջին՝ 620 տ., կիպարիսը՝ 800 տ., չինարը՝ 1000 տ., լորենին՝ 1100 տ., կաղնին՝ 1100 տ., Լիբանանի մայրին՝ 2000 տ., սմիզակը՝ (тисъ) 3200 տ.։ Անշուշտ կլինին սրանցից դեռ աւելի տարիքաւոր ծառեր էլ։

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանէն ստացել ենք մայրաքաղաքի Թաղայլեն (եկեղ. ծխական) դպրոցների վիճակագրությը 1900 թ. համար։ Այդ հետաքրքրական տախտակից հանում ենք հետևեալ տեղեկութիւնները։ Թաղայլեն վարժարանների թիւը 40 է 5351 աշակերտներով երկու սեռից, 282 (իսկապէս 256) ուսուցիչներով և ուսուցչուհիներով։ Ամսական ծախսը բոլոր այն 40 դպրոցի համար 83,556 ղրուշ է, որից 53,353 ղր. եկեղեցին է հոգում, 4,435 ղր. դանձանակներից, իսկ 26,935 ղր. թուշակագրամներից։ Այս հաշուի մէջ չեն առնուած այն 2,280 մանչ և աղջիկ աշակերտները, որ յաճախում են պետական (300), հայ և մահնաւոր (600 մանչ 340 աղջիկ), հայ-կաթոլիկ և բողոք. (200 մ. 85 աղջ.) և օտարազգի 380 մնչ.460 աղջ.) վարժարանները։ Չեն հաշուած նաև Կ. Պոլսոյ Հայոց մինչնախորդ դպրոցները։ Ուշագրութեան արժանի է և այն հանգամանքը, որ դպրոցները վերջին երեք տարիները յառաջադիմութիւն են արել ամեն կողմից։ 1897 թ. աշակերտների թիւը 3825 էր, ուսուցիչները 199, ամսական ծախսը 58383 ղր.՝ այն ինչ ներկայ թուին աշակերտների թիւը 5351, ուսուցիչները 282 և ամսական ծախսը 83556 ղր։

*
* *

Բազմավէպ-ի խմբագրութիւնն ուղարկել է մեզ «Օգնութիւն Հայ որբիկներին» վերնագրով մի յայտարարութիւն։ Այդ թերթից տեղեկանում ենք, որ խմբագրութիւնը մատդիր է մի առանձին պատկերազարդ տետրակ հրատարակել, $2^1/_2$ ֆրանկ $1^1/_2$ ր. արժողութեամբ, որից հասոյթը հայ որբերի պահպանութեան պիտի յատկացուի։ Գործն ինքնըստինքեան համակրելի է և արժանի խրախուսանաց, եթէ հայ կաթոլիկ որբերի խնամատարութեան համար գործադրուի։

Դէպքից օգտուելով սակայն յիշատակում ենք Հայաստանեայց եկեղեցու հարազատներին, որ Կ. Պոլսոյ Ամենապատիւ Պատրիարք Տէր Սրբազան Օրմանեան Արքեպիսկոպոսի անդուլ ջանքերով Ծաճկահայոց վանքերում և քաղաքներում բացուել են բազմաթիւ որբանոցներ։ Յորդոր ենք կարդում մեր քրիստոնեայ եղբայրներին չմոռանալ այդ քրիստոնէական ճշմարիտ բարեգործական հաստատութիւնները, որ մեր եկեղեցու հօտի պահպանութիւն և նորա անուան պայծառութեան լաւագոյն միջոցներից են։

ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆ

«Արժանի է մշակն վարձու իւրոյ»* Այս մի ճշմարտութիւն է, որ ամեն բարոյական անձնաւորութիւն պարտաւոր է խոստովանել։ Թէպէտ մշակները զանազանւում են իրանց կատարած գործերով՝ մէկը քիչ է աշխատում միւսը շատ, կամ մէկի աշխատանքը աւելի յարգի է քան միւսինը, բայց ընդհանուր ճշմարտութիւն է, որ ամեն մշակ անխտիր, լինի նա հողի մշակ, թէ մաքի և զգայմանքի, արժանի է իւր վարձին։

Այստեղ մենք պիտի խօսենք մի ժրաջան մշակի մասին, որ իւր գործերով պատկանում է վերև յիշած երկրորդ կարգի մշակներին, այսինքն այն աշխատաւորների կարգին, որոնք յանձն են առել ծանր և պատասխանատու գործ և ջանք չեն խնայել կատարելոյն չափ մեծ արդիւնք ցոյց տալու։ Այդ անխոնջ մշակը՝ ամենքիս յայտնի ժանկավարժ, պ. Ս. Մանդինեանն է։

Հասկացուի սակայն թէ այստեղ նորա մանրամասն կենսագրութիւնը կամ գործերի քննութիւնն ենք անում, այլ մեր նպատակն է շատ համառօտ կերպով գծել նորա կեանքի մի քանի հանգամանքները, և ցոյց տալ, որ նա իրօք մեր ազգի ջանասէր և արդիւնաբար մշակներից մէկն է։

Սեդրաք Մանդինեանը ծնուել է 1844 թ. Սղնախ քաղաքում։ Աղնուական ընտանիքի զաւակ լինելով, ընտանեկան լաւ կրթութիւն ստանալուց յետոյ՝ 1857—1863 թ. ուսել է Լազարեան ճեմարանում. յետոյ մի և նոյն ժամանակ ծառայել թատրոնական գործին և նպաստել նորա յառաջադիմութեանը այն ժամանակ, երբ մեր մէջ նոր էր երևան եկել թատրոն գաղափարը։ 1868—1869 թ. ուսանում է Պետերբուրգի համալսարանում. ապա անցնում է արտասահման և գերմանական այլ և այլ ուսումնավայրերում. (Հայդելբերգ, Լայպցիգ, Գոթա) և վիճնայում հիմնաւորապէս ուսումնասիրում է մանկավարժութիւնը։

Հայրենիք վերադառնալուց յետոյ՝ սկսում

* Ա. Տիմ. եր. 18։

է իւր մանկավարժական բեղմնաւոր գործունէութիւնը 1874 թ. մինչև այսօր։

Գերմանիայից եկած տարին նա սահմանուեմ է Ներսիսեան ուսումնարանի տեսչութեան պաշտօնը. նոյն տարին մասնակցում է Թիֆլիսում գումարուած հայ ուսուցիչների ընդհանուր ժողովին. ուր նա մի դասախօսութիւն է կարդացել, «Ուսման նախագիծ ազգային ուսումնարանների համար» վերնագրով։ Այդ դասախօսութիւնը յետոյ հրատարակուեցաւ առանձին տետրակով։ Ցեսչութեան և ուսուցչութեան պաշտօն է վարել նաև Շուշուայ և Նրևանի թեմական դպրանոցներում։ Իսկ գ. Ճեմարանում երկար ժամանակ ուսուցչութիւն է արել և բազմաթիւ ուսուցիչներ կրթել եւրոպական մանկավարժութեան պահանջների համեմատ՝ տեսականի հետ առաջնորդելով նրանց և ճեմարանին կից հաստատուած վարժոցի փորձնական դասերով։ Գ. Մանդինեանցի հմտութեան, եռանդի և ջանասիրութեան համար վկայել կարող են նորա բոլոր աշակերտները, որոնցից մէկը լինելու պատիւն ունիմ և ես։ Ս. Մանդինեանց այն սակաւաթիւ ուսուցիչներից մէկն է եղել, որ իւր աշակերտների մէջ կարողացել է ճշմարիտ յարգանք զարթեցնել դէպի իւր անձը, մի յատկութիւն, որ մանկավարժական գործունէութեան յաջողութեան էական պայմաններից մէկն է և որը վայելել է նա լիուլի իւր ճշմարիտ արժանաւորութեան համաձայն։ Դասարանի մէջ նորա վարմունքը աշակերտների հետ պարզ էր և անկեղծ, դաս պահանջելու ժամանակ, թէև ճիշդ, բայց վերին աստիճանի քաղաքավարի և մեղմ, որով և աշակերտները հարկադրուած էին նոյն տեսակ լինել, ամեն ջանք գործ դնելով՝ բաւականութիւն տալ յարգելի ուսուցչի ցանկութիւններին։ Գալով վարժոցի ղեկավարութեանը, գարձեալ այն պիտի ասեմ որ ամեն անգամ մարդ զգում էր, երբ նա դասերի վերայ քննութիւն էր անում, թէ՝ ինքը մի բան հասկացաւ, մի բան սովորեց, որովհետև իւր սխալները շատ պարզ և ակնյայտնի կերպով իր առաջ դրին ու ցոյց տուին, թէ նոցանից ինչպէս պէտք է զերծ մնալ։

Սակայն պ. Մանդինեանի գործունէութիւնը չի սահմանափակուում միայն հմուտ և եռանդուն ուսուցչութեամբ. նա դասախօսական գործին նպաստում է և գործով և խօսքով։ Նա չի բաւականանում իւր մանկավարժական սկզբունքները գործադրելով և ուսուցանելով միայն իւր աշակերտների շրջանում (որոնք ապագայում նոյնպէս նոյն սկզբունքների տարածողներն են լինում), այլ կանոնաւոր դասախարակութեան գործը աւելի ևս արագացնելու համար, ուսուցչութեան միջոցին էլ իրար յետևից հրատարակում է բազմաթիւ մանկավարժական գրուածքներ, դասագրքեր, մանկավարժական–հոգեբանական բովանդակութեամբ յօդուածներ մեր պարբերական հրատարակութիւններից «Մեղու»ի, «Փորձի» ի, «Վարժարանի», «Արձագանքի», «Նոր-դարի» և «Արարատի» մէջ։ Այս վերջինիս մինչև այսօր էլ շարունակում է աշխատակցել՝ տալով ամեն համարում թարգմանական կամ ինքնուրոյն յօդուածներ մանկավարժական կամ հոգեբանական բովանդակութեամբ։ Գ. Ս. Մանդինեանի առանձին գրքոյկն է 1875 թ. տպագրուած «Դպրոցական սահմանադրութիւն»-ը, որի մէջ նա տալիս է (մանկավարժական նոր մեթոդների վերայ հիմնուած) ուսումնարանական վարչութեան իրաւաքանչիւր անդամին վերաբերեալ կանոններ։ Այս փոքրիկ գրքոյկը ժամանակին մեծ ազդակ է հանել։ Գ. Մանդինեան իր հակառակորդներին պատասխանելու և շատ խընդիրներ աւելի պարզաբանելու համար, հրատարակում է իւր երկրորդ գործը՝ «Մանկավարժական տարակուսանքները» 1875 թ։

Հետևեալ տարին էլ լոյս է տեսնում «Ուսման նախագիծ ազգային ուսումնարանների համար» գրքոյկը։ Այս մի ծրագիր է մեր ուսումնարաններում աւանդելիք առարկաների, որի իրաքանչիւր կէտը մանրամասն բացատրութիւններով լուսաբանած է։ Այստեղ հեղինակը խօսում է նաև այն սկզբունքների մասին, որոնց հիման վերայ ազգային ուսումնարաններում աւանդելիք առարկաների ընտրութիւն պէտք է անել։ 1879 թ. էլ հրատարակեց «Կրօնք» վերնագրով մի հոգեբանական հետազօտութիւն,

որի առիթը եղաւ մի ինչ որ Կոստանեանի «Մեթոդի վրայ» գրքոյկը, որ բարձրագոյն կրօնի մասին թիւր և մեր ընթերցող հասարակութեան համար վնասակար գաղափարներ էր տարածում։ Պ. Ս. Մանդինեան իրրև աշխատող մանկավարժ, հոգով սրտով կանոնաւոր, բարոյական դաստիարակութեան գործին նուիրուած անձն, անմիջապէս նկատում է իւր կրթութեան դաշտում ցանած բարոյական սկզբունքների մէջ ընկած այդ չար որոմը և իսկոյն արմատախիլ անելու ձգտում։ Իւր հետազօտութեան մէջ նա խնդրի վերայ նայում է հոգեբանական հայեցակէտներով։ Ա. գլխում քննում է կրօնի գեղասիրական (էստետիքական) պատճառները, Բ. գլ. կրօնի գործնական պատճառները։ Գ. գլ. Կրօնի տեսական պատճառները, Դ. գլ. Կրօնի զարգացման արգիւնքը, Ե. գլխ. Ցայտնութեան կրօն Զ. գլխ. Կրօնի ձևանալը, հրապարակաւ։ Այսպէս բազմակողմանի հետազօտութեամբ և հոգեբանական հիմունքներով հաստատում է կրօնի անհրաժեշտութիւնը և միանգամայն բնաջինջ անում «Մեթոդի վերայ» գրքի մէջ քարոզուած այն վտանգաւոր սկզբունքները թէ կրօնը մարդկային յառաջադիմութեան համար վնասակար է, թէ հարկաւոր է ամբողջովին ջնջել կրօնականութեան զգացումը մարդկանց սրտից, կամ եթէ հարկաւոր է մի համեմատութիւն անել կրօնների մէջ խոստովանելու, որ մահմետականութիւնը քրիստոնէութիւնից բարձր է։ Այսպէս պ. Մանդինեանը իրրև ճշմարիտ մշակ մի կողմից զգուշութեամբ հսկում և պահպանում է իւր անդաստանը չար որոմներից, մի կողմից էլ շարունակում է բարի սերմեր ցանել։ Բացի վերոյիշեալ գրուածքներից պ. Ս. Մանդինեան հրատարակում է նաև շատ դասագրքեր մեր ազգային ուսումնարանների համար և զանազան առարկաների դաստատութեան ձեռնարկներ ուսուցիչների համար։ Ազգային ուսումնարանների համար նորա հրատարակած դասագրքերը հետևեալներն են. Ա) Հայերէնի ա. տարուայ դասընթաց Ազգային ընտանեկան աշխարհ. բ. տարուայ դասընթաց Դիւցազնական աշխարհ. գ. տ. Նահապետական աշխարհ Բ) Հինչելի բանաւոր և գրաւոր խնդիրներ ծխական դպրոցների համար, Գ) Կեանքի հանգամանքների համեմատ թուաբանութիւն ծխական դպրոցների համար, Դ) Համառօտ մանկավարժութիւն։ Այս բոլոր դասագրքերն էլ մի ժամանակ մեր ուսումնարաններում գործադրուում էին և համարուած էին ամենայարմար ձեռնարկները երեխաների համար։ Ուսուցիչներին դաստատութեան ժամանակ առաջնորդելու համար նա հրատարակել է իւրաքանչիւր առարկայի ուսանդման մեթոդը. Ա) Ռուսերէն դասատուութեան եղանակ, Բ) Կրօնի դասատութիւն, Գ) Իրազնական դասեր, Դ) Հայերէն լեզուի դասատուութիւն, Ե) Քերականութեան լուծումն, Զ) Մայրենի լեզուս Սորա բոլորն էլ այնպիսի գործեր են, որ ամեն հայ ուսուցչի անհրաժեշտ է ուսուցման գժուարութիւնները լուծելու համար։ Պ. Մանդինեան բացի այս ինքնուրոյն գործերից, արել է նաև շատ թարգմանութիւններ, որոնցից լոյս են տեսել միայն երկուսը. 1) Անժամանակ թատրոն 1896 թ. և 2) Նոյն թուին Դաստիարակութեան զօրութիւնը։ Այս երկու գործերն էլ սերտ կապուած են մանկավարժութեան հետ, որովհետև կրթութեան գործին են վերաբերում։

Այսպիսով ուրեմն մենք տեսանում ենք, որ պ. Ս. Մանդինեան ծառայում է միայն իւր մանկավարժական կոչմանն ու հաստատուն և անդողդոջ քայլերով, գործադրելով բոլոր հնարաւոր միջոցները, ուսուցչութեամբ թերթերի մէջ յօդուածներ տպելով և դասագրքեր պատրաստելով և մանկավարժական գիտութիւնը մատչելի դարձնելով հայ ուսուցչին։ Այս համառօտ կենսագրականն էլ կարծում ենք բաւական էր նորա բեղմնաւոր գործունէութեան մասին թեթև գաղափար տալու համար։ Նորա գործը աւելի արժէք է ստանում մեր աչքում այն պատճառով, որ նա մենակ է մեր դպրոցների մէջ մանկավարժական դաստիարակութեան մեթոդ մայրել և շարունակել մինչև այժմ։ Նորա պաշտօնակից բահանաները տարաբաղդաբար վախճանուեցան. հազիւ իւր գործն սկսած։

Այսպէս 25 ձիգ տարիներ իւր կեանքը, գրիչը, կրթութեան գործին նուիրելուց յետոյ՝ գառն հիւանդութեան պատճառով ա-

կամայ սակաւած է թողնել այս ամսի վերջին իւր սիրելի ասպարէզը։ Հիւանդութիւնը վտանգաւոր է դարձել մանաւանդ աչքերի համար։ Պ. Մանդինեանցը հեռանում է մանկավարժական գործունէութիւնից՝ ծանրաբեռնուած բազմանգամ ընտանիքով, նիւթապէս անապահով և հիւանդ վիճակի մէջ։ Ցանկալի էր, որ գոնէ Ծերութեան հասակում միջոց ունենար բժշկուելու իւր տանջող հիւանդութիւնից և փոքր ինչ խաղաղ կեանք վայելէր։ Նորա բազմաթիւ բարեկամների և աշակերտների համար անշուշտ թանգ է երկարամեայ անխոնջ մշակի առողջութիւնը։ Պ. Մանդինեանցը թէև հեռանում է ուսուցչական ասպարիզից, սակայն դեռ շատ սպասելիքներ ունինք մեր պատմական գրականութեան համար։ Բայց եթէ ոչինչ էլ չըսպասէինք, «արժանի է մշակն վարձու իւրոյ»։*

Պ. Ս. Մանդինեանի 25 ամեայ յոբելեանի առթիւ տիեզր. 26-ին ձեռնարանում կատարուած հանդէսը։

Նկատ վերջապէս այն օրը, որին այնպէս փափագով սպասում էինք բազմաշխատ ուսուցչի երախտապարտ աշակերտներս։ Փափագի և տենչանաց առարկայ էր մեզ համար այդ օրը, որովհետև առաջին անգամ առիթ պիտի ունենայինք հրապարակաւ երախտամտօրէն լինել մեր սիրելի ուսուցչին։

Երեկոյ էր, ճեմարանի վերին միջնադքը, հանդիսարանի ճակատը զարդարուած էր գոյնզգոյն լապտերներով։ Հանդիսարանը լուսաւորուած էր և զարդարուած։ Ուրախ էինք բոլորս։ Բայց այս ուրախութիւնը նման չէր, ճեմարանում կատարուած միւս հանդէսների միջոցին մարդու վրայ եկած, սովորական ուրախ տրամադրութիւնը։ Մի ուրիշ զգացում շատերի համար բոլորովին նոր հոգեկան վիճակ էր։ Ուրախ էինք, որ տօնում էինք մեր յարգելի ուսուցչի 25 ամեակը և տխուր, որ միևնոյն ժամանակ բաժանման հանդէս էր այն։

Հնչեց ճեմարանի զանկագի ձայնը։ Հաւաքուեցին աշակերտները հանդիսարանում։ Մտաւ հանդիսարան նաև պատկառելի ճեմկավարժը շրջապատուած իւր աշակերտ՝ ուսուցիչներով, յարգող միաբաններով և պաշտօնակիցներով։ Մատաղ սրտերը թռնդ եղան և ծափահարութեանց ու կեցցեների ձայնով թնդացրին ճեմարանը։ Նստեցին ամենքը։ տիրեց փոքրիկ լռութիւն և ապա սկսուեց Պ. Ս. Մանդինեանի կազմած գրական հանդէսը, «մեր սիրելի ուսուցչի վերջին դասը», ինչպէս բնորոշեց Հայր Կարապետ։ Դ. լսարանի ուսանողներից մէկը և Բ. լսարանից երկուսը կարդացին իրենց շարադրութիւնները, որոնց նիւթը հոգեբանութիւն էր։ Առաջինը կարդաց «Մանկանց յիշողութիւնը», Բ-ը ժողովրդական հոգեբանական արտայայտութիւններ և Դ-ը «Սովորութեան կարևորութիւնը բարոյականութեան և մանկավարժութեան մէջ»։ Շատ գեղեցիկ էին գրուած շարադրութիւնները և սիրուն էլ արտասանեցին։ Իսկ Հայր Կոմիտասի խումբը, որ այժմ ճեմարանում կատարուած բոլոր հանդէսների գլխաւոր շուքն ու զարդն է, այս երեկոյ ևս մեծապէս նպաստեց ընդհանուր ոգևորութեան ու կենդանութեանը իւր պատրաստած խորհրդաւոր և ներդաշնակ երգերով։

Վերջացաւ հանդիսի գրական մասը և սկսուեց Պ. Ս. Մանդինեանի պատուին նուիրած բաժինը։ Ես կարծում եմ այդ րոպէին ներկայ ամեն հանդիսատես Պ. Մանդինեանին յարգող իւրաքանչիւր մարդ լցուած էր մի բան ասելու, մի բան խօսելու. գէպի քրտնաջան գործիչը իւր մէջ յուզուած ազնիւ, անկեղծ զգացումները մի կերպ արտայայտելու տենչով։ Բայց որովհետև շատ պատճառներով այդ անհնարին էր, ուստի ինչպէս ամէն անգամ այդպիսի դէպքերում այնպէս և այս անգամ քչերին վիճակուեց իրենց զգացումները խօսքերով արտայայտելու բաղդն ունենալ։ Հանդէսը բաց արաւ ճեմարանիս տեսուչ՝ Հայր Կարապետը և Թարգման Հանդիսասցաւ ամբողջ ուսուցչական խմբի զգացմանց։ Նա պատկերացրեց մեր առաջ Պ. Մանդին-

---

* Այս յօդուածը պատրաստուած էր փետրուարի տետրակի համար, բայց տարաբաղդաբար մեզնից անկախ պատճառով ժամանակին հրատարակել չկարողացանք։ Սորան կցում ենք և պ. Մանդինեանցի 25 ամեակի առթիւ ճեմարանում կատարուած ընտանեական հանդիսի համառօտ նկարագրութիւնը։

ԽՄԲ.

հանի գործունեայ անձնաւորութիւնը և բեղմնաւոր կեանքը ազնիւ գործի համար, նպատակաւոր ընթացքով կառուցող վինուորի օրինակով յիշեցրեց ամենքիս մէկ անգամ ևս, որ Պ. Սէդրաքը եղել է մեր մէջ ճշմարիտ կըրթութիւն տարածող առաջին մանկավարժը, որ նա է եղել կանոնաւոր ուսուցման, օրինաւոր դաստիարակութեան գործին նուիրուած ուսուցիչների ուսուցիչը: Խօսքը վերջացրեց սրտագին բարեմաղթութիւններով, ամենքիս կողմից ցանկալով նորան շուտափոյթ ապաքինուիլ և կրկին գարձ դեպ իւր դաստիարակական ամրոնը: Ծարգելի մանկավարժին նուիրուած այս խօսքերը մեծ ոգեւորութիւն յառաջ բերին հանդիսականների մէջ և բուռն ծափահարութիւններն ու կեցցէները կրկին հնչեցին: Այնուհետև Հոգեւոր Տիրոջ գաւազանկիր Արժ. Կորիւն վարդապետը կարդաց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը, որով Ամենայն Հայոց Կաթուղիկոսը յայտնում էր իւր գոհունակութիւնը վաստակաւոր գործչին և տալիս է նորան իւր Հայրապետական օրհնութիւնը: Մեր յարգելի բանասեղծ պարոն Ծովհաննիսեանն էլ մի գողտրիկ ոտանաւոր նուէր բերից Հայրապետական կոնդակից յետոյ: Հանդիսին ներկայ էր նաև Երևանի Թեմական Դպրանոցի տեսուչ՝ Հայր Բենիկը, որ իւր հետ բերել էր դպրոցի ուսուցչական խմբի մեծարգոյ յօրելեանին ձօնած ուղերձը: Հայր Բենիկը այս ուղերձը անձամբ կարդաց և, որպէս Պ. Մանդինեանի նախկին աշակերտ, քանի մի սրտաշարժ խօսքեր էլ իւր կողմից աւելացրեց:

Զգացմունքների արտայայտութեան մէջ անմասն չմնացին նաև Պ. Մանդինեանի նորագոյն աշակերտները՝ Ճեմարանիս արդի ուսանողները: Բ. լսարանցիներից մին ի դիմաց բոլոր աշակերտների մի քանի խօսք ուղղեց իւր ուսուցչին և մատոյց ընկերների պատրաստած ընծան. ընծաներ մատուցին նաև Ա. և Գ. լսարանի սանները առանձին առանձին: Ստացել էին բազմաթիւ շնորհաւորական հեռագրեր Թիֆլիսից, Բագուից, Մոսկուայից, Շուշուց, Նոր—Նախիջևանից, Նուխուց և այլն, որոնցից միայն մի մասը կարելի եղաւ հանդիսականների առաջ կարդալու:

Պ. Մանդինեան այս բոլոր ժամանակը լուռ և մտազբաղ նստած էր իւր տեղը և մերթ ընդ մերթ միայն վեր էր կենում դէպ ինքն արտայայտուած ջերմ զգացմունքներին գլխի համեստ շարժմամբ շնորհակալութիւն անելու: Ամենից վերջը միայն նա բարձրացաւ ամբիոն և զգացուած ձայնով սկսեց խօսել: Նորա վերայ շատ խոր տպաւորութիւն էին արել ճառաբանները և ընդհանրապէս բոլոր հանդիսականների ջերմ վերաբերմունքը: Նա մանաւանդ պէս խօսքն ուղղեց իւր ամենակրտսեր սաներին ճեմարանի աշակերտներին և յորդորեց յառաջ գնալ, յառաջ անդադար, առանց յետ նայելու, որպէս ինքն աշխատել է անել: Մարթեց, սակայն, որ նորա իր վիճակին չհասանեն երբեք: այսինքն սահպուած չլինին իրեն պէս սկսած գործը թողնել և հեռանալ, երբ դեռ ոյժ են զգում իրենց մէջ: Մեր յարգելի ուսուցչի խօսքերից տեղեակ եղեւում էր, որ նորա համար շատ ծանր էր գործը թողնել և գնալը, թէև գուցէ առ ժամանակ միայն: Երևում էր, որ դեռ շատ վառ է նորա մէջ գործելու տենչը, աշխատելու փափագը:

Անշուշտ այդ զգացման շնորհիւ էլ նա 25 տարի շարունակ կռուել է իւր հիւանդութեան հետ. բայց ոչ մի անգամ նրա պատճառով գործը չի թողել: Սակայն այսօր այլևս անհնարին է գարձել այդ կռիւը և նա տեղի է հեռանալ:

Ես կարծում եմ նորան ճանաչող ամեն մի Հայի ցանկութիւնն է այժմ, որ նա գնայ առողջանայ շուտով և կրկին վերադառնայ իւր սիրած և մեզ ամենքիս համար օգտակար գործը շարունակելու: Թէև դժուար է, մեզ համար նորանից բաժանուելը, բայց նորա առողջ մարմնով վերադառնալու և նոր եռանդով գործ սկսելու դեղեցիկ յուսով «բարի ճանապարհ» ենք մաղթում:

Ք. Մ.

ՀԱՅԿԱԿԱՆՔ*

ԺԸ

Հայելու թարգմանութեան թուականից—1660—ընդամենը 8 տարի յետոյ, 1668-ին, Առաքելքեանը Ազուլեսագիրք վերատառութեամբ հրատարակւում է առաջին անգամ

* Տես. Արարատ, 1900 թ. համար Ա. եր. 28:

Այդպիսի կարճ միջոցում Հայելին հարկաւ չէր կարող մեծ ազդեցութիւն ունենալ Աղուէսագրքի վրայ, սակայն այսու ամենայնիւ ձեռագիր Առակաղրքերի և նման ժողովածուների վրայ շարունակւում է Հայելու ազդեցութիւնը։ Բերլինի հայ 2-երից № 90-ը ունի մի հրաշապատում, որ Մաուի հրատարակութեան մէջ կրում է «Ոսկեգրիալ սիրա» վերնագիրը։ Ինձ թւում է թէ այդ մի խըմբագրութիւն է Հայելու ի մի ձուլուած երկու անհամ պատմութեանց (ծէ գլուխ 4-րդ պատմ. և կդ գլ. 3-րդ պատմ.)*։ Աւելի բացորոշ է Հայելու մի ուրիշ պատմութեան ազդեցութիւնը։ Այս գնենք ամբողջութեամբ.

ՀԱՑԵԼԻ, ՖԼ. ԹՒ. ՎԱՍՆ ՆԱԽԱՆՁՈՒ, 3.

Ա՛յնչափ է չարութիւն նախանձուն, մինչ զի ո՛չ միայն այլոյմ, այլ և իւր անձին զվնաս կամի. քանզի Թագաւոր ոմն երբեմն խոստացաւ նախանձոտի ուրուման և միւսումն ածգահի, թէ զինչ և խնդրեացեն ի նմանէ՝ տացէ նոցա, սակայն այնու կերպիւ թէ՝ որ վերջին խնդրեացէ՝ կրկին տացի նմա։ Եւ յորժամ երկոքեանն յապաղէին զինդրելն, Թագաւորն հրամայեաց նախանձոտին՝ զի նա՛խ խընդրեացէ. և նա խնդրեաց զիւր մէկ ակն հանել, զի միւսոյն զերկուսն հանիցեն, քանզի ոչ կամեցաւ զբարի ինչ խնդրել, զի մի՛ ընկերին կրկին պարգև տացէ (Ա ձեռագիր, էջ 119ᵇ)։

Նախանձոտի այս պատմութիւնը շատ ժողովրդական է մեր մէջ, և շատ յաճախ օրինակ է բերւում իբրև «հայկական առեղծագործութիւն»—«Հայի» նախանձոտութիւնը ապացուցանելու համար։ Սակայն ինչպես տեսնում ենք, այդ թարգմանուած է լեհերէնից, այս վերջինն էլ լատիներէնից։ Բերենք համեմատութեան համար և Առակագրքի փոխառեալ խմբագրութիւնը Մաուի հրատարակութեամբ.

ՄԼԱ. ԵՐԿՈՒ ՆԱԽԱՆՁԱԽՆԴԻՐ ԾԱՌԱԾՔ ԹԱԳԱՒՈՐԻ *

[19 A]

Թագաւոր ոմն գիտէր զղինուորքն իւր, զի ծածուկ նախանձ ունէին ընդ միմեանս. և ասէ Թագաւորն ընդ մինն, թէ զինչ կամիս՝ խնդրէ յինէն մեծութիւն, որ տամ քեզ, բայց քո ընկերին կրկին տամ քան զքոյդ. ասէ ի միտս իւր, թէ խնդրեմ ինձ մին բարի, նմա կրկին տա[յ] քան զիմն. և ասէ ցԹագաւորն, թէ զիմ մին աչքս հան, որ զմիւսոյն զ. Բ. ն հանիցէ» (Հատոր Պ. էջ 260։ Սոյն այս իջուամ նոյն պատմութիւնը աւելի ընդարձակ խմբագրութեամբ՝ ՄԼԱա. 102 D ՎԱՍՆ ՆԱԽԱՆՁՈՏԱՑ վերնագրով)։

Բայց աւելի ուշագրութեան արժանի է Հայելուց եղած մի ուրիշ փոխառութիւն։ Մաուի D ձեռագիրը (ՀՀմ. № 12, գրուած 1669–ին) Յովասափու և Բարլաամի յայտնի վիպասանութիւնից փոխ առնուած մի առակ ունի, որ Մաուն հրատարակել է «Ծիւռը Թագաւոր» վերտառութեամբ (I հատոր, § 279, 300, 302. II հատ. ՄՁԲ, 126 D)։ Նոյն այդ առակը փոքր ինչ տարբեր խմբագրութեամբ, ուրիշ ձեռագրից (Азіят. Муз. Arm. № 3) հրատարակել է Էլի Մաուը իւր մի ուրիշ գրուածքում (Армяно-Груз. Матеріалы для исторіи дух пов. о варлаамѣ и Іоасафѣ, 1897, արտատպ. Зап. Вост. отд. имп. рус. Арх. общ. Томъ XI-ից)։ Ծիւռը Թագաւորի նիւթը իսկ որ Յովասափու վիպասանութեան առաջին առակիցն է *, բայց խմբագրութիւնը շատ տարբեր է և ընդարձակ մանրամասնութիւններով։ Այնպէս որ Առակագրքի Ծիւռը Թագաւորի պատմութիւնը չէ կարող առնուած լինել Յովասափու վիպասանութեան հայ թարգմանութիւնից։ Նոյնը պիտի ասել Մաուի հրատարակած և միւս վարիանտի վերաբերութեամբ։ Մինչդեռ Մաուի երկու հրատարակութիւնները էլ շատ մօտ են իրենց բոլոր մանրամասնութիւններով հայելու հետևեալ պատմութեանը, որն անշուշտ իւր կողմից ծագում է Յովասափու վիպասանութեան արևմտեան բազմաթիւ վարիանտների մէկից**։

*) Բրիտանիայ գերու սիրտ ձեղուում են եւ գտնում են արտի մէջ Բրիտոսի պատկերը։ Միւս պատմութեան մէջ՝ 14 տարեկան կոյս աղջիկը մանուկ Յիւսուսի սիրուց մեռնում է եւ «բացեալ գսիրտ նորա՝ ընդ մէջ հատեալ գտին՝ եւ ի նմա ոսկի գրով գրեալ զայս ձեւ բանից, սիրեմ զիզ առաւել քան զիս եւրն.»։ Միջնադարեան կաթոլիկական հոգով, ինչպես որ է եւ ամբողջ Հայելին։

*) Վերնագիրը Մաուինն է։ «Նախանձախնդիրն» անյաջող է, շատ կը լինէր ասել «նախանձոտ»։

**) Տես Նկարագրութիւն Հոգեւորական Վարուց Յովասափու, որդւոյ թագաւորին Հնդկաց, հրատ. Մեսրոպ

ՀԱՑԵԼԻ, ՑԱՂԱԳՍ ԾԻԾԱՂԵԼՈՑ ԳԼՈՒԽ ԼԶ, 1.

Մատեանք ժամանակագրութեանց պատմեն սակս ուրումն թագաւորի, որ հազիւ կամ ոչ երբէք ոչ ծիծաղեր, Ջհանք և նախարարք աղաչեցին զեղբայր թագաւորին, զի տեղեկասցի և իմասցի զպատճառ տրտմութեանն արքային. Թէ վասն է՞ր հազիւ կամ ոչ երբէք ոչ ծիծաղի, այլ միշտ տխուր է և տրտում զօր անցուցանէ. Պատասխանի [ետ] թագաւորն եղբօրն իւրում՝ Թէ յայլ աւուր ծանուցից քեզ. Ցետ այսորիկ թագաւորն հրամայեաց խորագոյն վիհ փորել և մինչև ցկէսն զայն կայծակամբք հրոյ լնուլ. ի վերայ հորոյն ասաց զաթոռ դնել՝ հին և փտեալ, և ի վերայ աթոռոյն սուր երկայրի կախել զբարակ թելէ. Մերձ առ նմին հրամայեաց զսեղան պատրաստել լի ամենայն զանազան կերակրովք և անուշահամ գինովք. Եւ զեղբայր իւր նստոյց ի վերայ այնր աթոռոյն. Զօրս արս սուսերամերկս շուրջ զնովաւ կացուց. մին ի թիկանց, զերկրորդն յառաջոյ, երրորդն յաջմէ և չորրորդն յահեկէ, որք զսուսերս իւրեանց մերձ առ նմին եդին. Եւ հրամայեաց զամենայն քնարս և նուագարանս առաջի նորա երգել. Եւ ասէ թագաւորն ցեղբայր իւր. Ուրախ լեր և զուարճացիր, կե՛ր, ա՛րբ և բերկրեսցի սիրտ քո. Եւ նա ասէ ցթագաւորն. Զիա՞րդ կարիցեմ ուրախանալ կամ ծիծաղիլ, որ յամենայն կողմանց ի մեծի անձկութեանս եմ. Եթէ նայիմ ի խոնարհ՝ տեսանեմ զհուր, եթէ կամիցիմ մերձենալ առ սեղանս՝ աթոռս փտեալ բեկանի և ի հուրն անկանիմ, եթէ հայեցայց ի վեր՝ տեսանեմ զսուր մերկ կախեալ զբարակ թելէ, եթէ հայեցայց յառաջի իմ կամ յետոյս, յաջմէ կամ յահեկէ՝ յամենայն կողմանց պաշարեալ եմ մերկ սուսերօք. և այսպէս որովհետև անկեալ կամ ի մէջ այսպիսի նեղութեանց՝ ո՛չ ուտել, ո՛չ ըմպել, ո՛չ ուրախանալ կամիմ: Ցայնժամ թագաւորն ասէ ցեղբայրն. Որպէս դու կաս այժմ, նոյնպէս և ես յամենայն ժամ. Քանզի եթէ հայիմ ի վեր՝ անդ տեսանեմ զդատաւորն իմ, որ զիս դատելոց է և նմա համարս տալոց եմ յամենայն խորհրդոց, բանից և գործոց իմոց եթէ նայիմ ի խոնարհ՝ զմաւ ածեմ զհուրն դժոխոց և զտանջանս դատապարտելոց, ընդ որս ի յաւիտեան դատապարտելոց եմ, եթէ հանդերձ միով մահացու մեղօք յաստի աշխարհէս ելանիցեմ: Եթէ նայիմ զհետ իմ՝ տեսանեմ զմեղս իմ, զորս ընդդէմ Աստուծոյ կատարեցի և զժամանակ վայրապար անցուցի. եթէ նայիմ յառաջև իմ՝ ի միտ ածեմ զմահ իմ, առ որ մերձենամ զօր հանապազ և ո՛չ գիտեմ զժամ և զտեղի մահուն իմոյ, եթէ նայիմ յահեկէ՝ տեսանեմ զդէս, որք ի տուէ և ի գիշերի ինդրեն զանձն իմ և հակառակ կան փրկութեան իմոյ, եթէ նայիմ յաջմէ՝ տեսանեմ զՀրեշտակս Աստուծոյ, որք միշտ զբարի խորհուրդս լինձ տային և ի չար ճանապարհէ զիս զարձուցանէին, որոց աւա՜ղ ո՛չ արարի բաւական և ո՛չ գնացի զհետ բարի խրատուց նոցա. Արդ՝ յորժամ զայս ամենայն յիս և շուրջ զինեւ խորհիմ, զիա՞րդ կարիցեմ ուրախանալ յայսմ աշխարհիս, կամ ի՞նչ իւիք զուարճացի սիրտ իմ՝ (Ա ձեռ. էջ 74ա—75ա):

Ոչն փտած աթոռը, տակը կրակ, վրևիցն կախուած սուր, չորս կողմից չորս ցցուած սրեր ևլն. ևլն. ունին Մատի երկու վարիանտներն էլ, բայց այդպիսի մանրամասնութիւններ չունին հայ Ծովասափի ոչ ընդարձակը, ոչ համառօտը, ոչ չափականը: Անկասկած է, որ Առակագրքի Ցխուր Թագաւորի և նրա միւս վարիանտի մայրը Հայկին է: Ուրիմն այդ պատմութիւնն եկել է մեզ Արևմուտքից լեհական ճանապարհով:

Հայկուս ազգեցութիւնը այսչափով կ՚ի վերջանում: Ցոյս կայ որ ապագայ ուսումնասիրութիւնները դեռ շատ բան բաց կանեն մեր զանազան ժողովածուներում այս ճանապարհով Արևմուտքից եկած և անշուշտ այդ միջնադարեան արևմտեան ազդեցութիւնը անհամեմատ աւելի մեծ է եղել, քան թէ մինչև այժմ կարելի էր ենթադրել:

Հայկուս բնագիրը թարգմանչի վկայութեամբ, ինչպէս տեսանք, եղել է լեհերէն, իսկ լեհերէնը իր կողմից թարգմանութիւն է լատիներէնից: Մեր ձրագրից դուրս է օտար բնագրերով զբաղուիլ, այլ արդէն առանձին հետազօտութեան նիւթ պէտք է կազմէ, մանաւանդ որ մենք պէտք եղած բոլոր գրքերին էլ զուրկ ենք և ոչ մի հնարաւորութիւն չունինք, գոնէ կարևորները ձեռք բե-

---

վրդ. Տ. Մովսեսեան, Վաղարշ. 1898, էջ 19: Նոյն վիպասանութեան համառօտը, յայտնաւորների վերջում՝ շատ անգամ հրատարակուած, այդ եւ Առ. Բաղիշեցու տաղտպտիկաւոր Տէր Մովսեսեանի հրատ.-եան վերջում, էջ 139:

բլոյս, ուսաի և սահպուած սահմանափակեցինք մեր հետազօտութիւնները միմիայն հայ բնագրերով։ Սակայն աւելորդ չէ մի քանի համառօտ տեղեկութիւն օտար բնագրերի մասին, առնելով Բառքհաուզի և Ծֆրոնի Հանրագիտակ Բառ.-ից (Տես Вилкое Зерцало բառը)։ Առանց օտար բնագիրը տեսնելու, ենթադրութեամբ միայն, նոյնացնելով մեր Հայկին Зерцало-ի հետ, պէտք է աւելացնել, որ լատին սկզբնագիրը 1480 թուի մօտերքը հաւաքուել է մի անծանօթի ձեռքով 80-ից աւելի հեղինակներից, յետոյ այդ սկզբնագիրը ընդարձակուել է եզուիտ (յիսուսեան կարգից) Ծովհ. Մայոր'ի և նմանապէս եզուիտ Անտոն Դաւրոլչիոսի ձեռքով (Іоаннъ Майоръ, Антонъ Даврольцій)։

Եզուիտ Սիմէոն Վիսոցկին (Симеонъ Высоцкій) լատիներէնից թարգմանել է լհեբէն և երբորդ տպագրութեամբ հրատարակել 1633-ին։ Ինչպէս տեսանք, երևի այդ Վիսոցկու լհեբէն բնագրից թարգմանուել է Սա. Լհհացու ձեռքով հայերէնը 1660-ին, իսկ եօթը տարի յետոյ միայն ռուսաց ցար Ալեքսէյ Միխայլովիչի ցանկութեամբ և հրամանով 1667-ին թարգմանուել է լհեբերէնից պոլինո—ռուսերէն, Ռուս Զերցալո'ն (Հայելին) պահուած է զանազան խմբագրութեամբ և չափերով, մէկը 652, միւսը 781, երրորդը 821 գլուխներով ևն. (Համ. նաև Н. Владиміровъ, Чтен. Общ. Ист. и Др. 1883, նաև առանձին)։ Կաթոլիկական-եզուիտական դրոշմը պահպանուած է ոչ միայն յատնագաւան ուսմանցի թարգմանութեան մէջ, այլ նաև հայերէնում նոյնութեամբ, անխախտ, երևի առանց որ և է փոփոխութեան։ Եւ այդ պզելք չէ եղել, որ ոչ միայն շատ կանուխ հրատարակուեր հայ թարգմանութիւնը, 1702 թուին*, այլ և լիներ շատ ժողովրդական։ Մանկութիւնից ինձ ծանօթ են եղել երևի ժողովրդական առակ հայկլու պատմութիւններից մի քանիսը։ Վերևում էլ տեսանք շատ ժողովրդական Նախանձոտի պատմութիւնը։ Նմանչի համար պէտք այստեղ այդպիսի նորից երկու պատմութիւն.

ՀԱՑԵԼԻ, ՑԱՂԱԳՈ ԿԱՄ ԱՊԱՀՏՈՒԹԵԱՆ ԳԼ. Լ։

Ա. Այր ոմն ընդ կնոջ իւրում երթայր երբեմն ընդ արտորայս և ասէ ցնա՝ Տեսանե՞ս զիարդ գեղեցկապէս և պատշաճաբար արտս հնձեալ է, և կինն ընդդիմաբար ասէ՝ Ոչ է հնձեալ։ 5. այլ խուզեալ, հակառակ կալով բանիցն առն իւրոյ։ Եւ յորժամ այրն ասէր թէ հնձեալ է և կինն ասէր թէ խուզեալ է, բարկացեալ այրն ընկէց զնա ի ջուրն։ Արդ իբրև այլ ոչ կարաց խօսիլ՝ եհան զձեռն ի 10 ջրոյն նշան տալով մատամբ ի կերպ մկրատի՝ ցուցանելով մինչև ի մահ թէ արան խուզեալ է»

Բ. Դարձեալ այլ ոմն ունէր կին խիստ ինքնահաւան և կամապաշտ և յորժամ անկաւ ի գետ և խեղդեցաւ, այրն խնդրէր զնա ընդդէմ ջրոյն գնալով։ Հարցին զնա մարդիկք, 5 թէ Ո՞ւր ընդդէմ ջրոյդ խնդրես, պատասխանի եառ. Կին[ն] իմ հանապազ էր ինձ հակառակ բերանով և ար[դ]եամբք, արդ՝ զորօրինակ առնէր ի կենդանութեանն՝ նոյնպէս կարծեմ թէ զկնի մահուանն արար, և 10 այսպէս հաւատամ (Հ. հաւատալով), զի գնաց ընդդէմ ջրոյս» (Ա. 2. էջ 75ա-բ)։

Այս պատմութիւններից առաջինը, իբրև զուտ ժողովրդական անեկդոտ, ղրկի է առնուած մինչև իսկ զոկերէն, տես Ս. Սարգսեանցի Ագուլեցոց Բարբառը, Մոսկ. 1883, մասն II, էջ 49. «Մ'ոյն մարդի մոյն շօտ հուջամ կնակ այ'նելամ ևն.»*, Զանազան ազգագրական յօդուածներում տպագրեալ ժողովածուներում օրացոյցներում էֆեմերիտներում և այլ նման հրատարակութեանց մէջ**, առանց մեծ բիսկի կարելի է գուշակել, որ անտարակոյս կլինին Հայելուց ուղղակի կամ անուղղակի փոխառութիւններ, բայց այդ արդէն մեր ուսումնասիրութեան ծրագրից դուրս է։ Մեր նպատակն էր խոշոր գծերով հիմնական կէտերին մատնանիշ լինել, մանրամասնութիւնները թողնելով յետագայ ուսումնասիրողներին։

Բայց վերջացնելուց առաջ՝ մի ոչ անկարևոր դիտողութիւն։ Հայելու սկզբնագիրն

*) Նահապետ կաթողիկոսի օրով, երբ Թիւռնական տօնաւորները գործում էին Երևանում. (Այրարատ, էջ 233)։

*) Նոյն անեկդոտը շատ է տարածուած ևս ռուսաց մէջ, ծագելով ոտո Մեծ-Հայկլուց. спорь мужа со женою покошена ли земля или пострижена, տես վերևի յիշուած Հանրագ. Բա-ի յօդուածը։

**) Օրինակի համար Վատաալիրայի և Թագաւորի ապտմ.-ը (Հայելի գլ. ԻԶ. 1)։

ինքը կազմուած լինելով իրրև հաւաքածու զանազան հեղինակներից, անշուշտ կունենայ և ունի շատ պատմութիւններ վարք հաբանցներից, յոյն-հռովմէական անեկդոտներից, փիլիսոփաներից և այլ նմաններ, որոնք բոլորովին անկախ Հայելուց, բոլորովին ուրիշ աղբիւրներից՝ շատ կանուխ արդէն յայտնի են հայ մատենագրութեան մէջ, մանաւանդ աստսերէնից և յունարէնից հին և միջնադարեան թարգմանութեամբ, ուստի և նիւթի նոյնութիւնը միայն բաւական չէ՝ որ և է պատմութիւն կամ առակ հայերէնում՝ Հայելուց բղխած համարելու համար: Նիւթի նոյնութիւնը կամ նմանութիւնը բացատրւում է սկզբնական աղբիւրի նոյնութեամբ, առանց որ և է անմիջական կապի Հայելու և հայ բնագրի միջև: Որ և է կախումն կամ առընչութիւն ապացուցանելու համար անհրաժեշտ է բացի բովանդակութեան նոյնութիւնից նաև անժխտելի նմանութիւն խմբագրութեան և լեզուի մէջ: Առաջնորդուելով այս տեսակէտով մենք զանց առանք նշանակել Հայելու շատ կտորների բովանդակութեան նըմանութիւնը հայ այս կամ այն գրաւոր հատուածի հետ: Միայն իրրև նմուշ գնում ենք այստեղ մեր ուսումնասիրութեան վերջում այդպիսի երկու պատմութիւն Հայելուց: Նոյն բովանդակութեամբ, բայց շատ տարբեր խըմբագրութեամբ և անտարակոյս բոլորովին անկախ Հայելուց Աղուէսագիրքն ունի երկու առակ, որոնցից առաջինը կրկին խմբագրութեամբ: Աղուէսագրքի այդ առակներն են Մաոի հրատարակութեամբ՝

1 ՃԻ. ԹԱԳԱՒՈՐ ԵԻ ՓԵՒՈՐԴԻՆ ԵԻ ՆԱՃԻՊ
(120 V=31 ag=9 Գէորգ. ցուց. №՝ 792) *

ուրիշ խմբագրութիւն

ՃԺԹ. ԵՐԵՔ ԲԱՆՔ ԻՄԱՍՑԱՍԻՐԻ
(119 V=116 I=125 ag)

2 ՃԻԱ. ԱՂԱԻԹԱՍԷՐ ՊԱՏՃԱՆԻ ԵԻ ԿԱԽԱՐՊ
(121 V=117 I=126 ag=32 Գէորգ. Ցուց. № 792)

Բաղդատել ցանկացողը պէտք է դիմէ Մաոի հրատարակութեանը, մենք շատանում ենք տալով միայն Հայելու բնագիրը.

1. ՀԱՃԵԼԻ, ՑԱՂԱԳՍ ՆԱԽԱՆՁՈՒ ԳԼ. ԾԱ. 2.

Զօրական ոմն յոյժ սիրելի թագաւորին՝ տեսեալ զինքն մերձ իմաց, կոչեաց առ ինքն զորդի իւր և ասէ. Որդեա՛կ, ահա՛ ես ելանեմ յաշխարհէ աստի յուսացեալ յողորմութիւն Աստուծոյ, զքեզ թողլով միամօր որդի. աղաչեցի զարքայն՝ զի զքեզ կարգեսցէ ի տեղի իմ, զամենայն ստացուածս քեզ միայնոյ թողում զկրատա (ձ. զի խրատ) իմ, կամիմ զի ամենայն (ձ. զամենայն) զգուշութեամբ պահեսցես, որ քան զամենայն ոսկի եղիցի քեզ պըատաւոր և օգտակար. Նախ՝ որպէս կարող ես յամենայն աւուր զպատարագն մինչ ի վերջ լսիցես, երկրորդ՝ պահելով զսուրբ ամուսնութիւն՝ ամենասուրբ կուսին Մարիամ[ու]ջերժեւանդ սրտիւ ծառայեսցես զամենայն աւուրս կենաց քոց, և եթէ ո՛չ կամիցիս զայլ ոք հարսն ունել բայց ամենամաքուր Աստուածածնէն՝ ևս առաւել սիրելի և բաղձալի ծառայ նմա եղիցիս. քանզի կուսութիւն ունի պատուղ հաւիւրաւոր, (յ)ամուսնութիւն զերեսնաւոր և այր[ու]թիւն վաթսնաւոր: Իսկ եթէ [ոք] զատ յամուսնութենէ ի պղծագործութիւն անկանիցի, ոչ մի[այն] պտուղ ոչ ունի, այլ աւելի քան զհինը գլխոյն պատրաստեալ են նմա տանջանք յաւիտենական ի գժոխս. Երրորդ՝ միշտ խնդասցիս ընդ խընդալն արքային և տիկնոջն և ողբասցիս ընդ ողբալն նոցա. Զայս պահեսջիր որդեակ որչափ կարողութիւնդ բաւեսցէ և յիշեսջիր զհոգի իմ: Եւ զայս ասացեալ վախճանեցաւ.

Արդ՝ յորժամ եհաս (յ)որդին ի պատիւ հօր իւրոյ, ի մտի ունէր զկտակն և (զ)ամենայն զգուշութեամբ և ջերմեռանդութեամբ պահէր. ուստի սակս պարկեշտ և առաքինասէր շարժմանց իւրոց յաչս ամենեցուն էր սիրելի. Եւ այնչափ զամթ և զկուսութիւն սիրեաց, մինչ զի կուսանք նաժիշտք թագուհ[ւ]ոյն ինքնայօժար կամօք զանձինս իւրեանց նմա ժառանգանէին. յոյժ սաստիկ չանդիմանէր զնոսա և ի բաց վարէր: Բայց վասն զի նահանձ բարւոյն սովոր է չարչարել՝ մի ի ծառայից թագաւորին չարախօս եղև զնմանէ սակս կարծեցեալ սիրոյ ընդ թագուհւոյն, եւ յորժամ ոչ հաւատաց թագաւորն՝ ասէ այրն նախանձոտ բանսարկուն. Այս եղիցի քեզ նը-

---

* *Այս առակը կայ նաեւ՝ այլ հետազօտութեան ժամանակ իմ գտած՝ Առակների մի նոր ժողովածուի մէջ: Այս նոր ժողովածուն ունի ընդ ամենը 40 առակ, որոնցից 9-ն է այժմ մեզ հետաքրքրող առակը, իր խմբագրութեամբ շատ աւելի մօտ ag-ին քան թէ V-ին: Տես Գէորգ. ցուց. № 792, էջ 260ա—289ա: Մանրամասնութիւնները զանց ենք առնում:*

չան ճշմարիտ բանից իմոց, արա՛ ինչ պատճառ տրտմութեան տիկնոջդ և տեսցես զի առժամայն ընդ նմա մինչև յողբալ տրտմեսցի, Փանզի զայն բազում՝ անգամ ծանուցեալ էր ըստ խրատու հօր նորա։ Արար այնպես Թագաւորըն և ետես զի անմեղ ծառայն այն տրտմեցաւ։ Ապա եկն չարախօսն այն առ Թագաւորն և ասէ. Տէր իմ արքայ, ծանեա՛ր զտուգութիւն բանից իմոց, արդ՝ զի առանց խռովութեան մեռանիցի, քանզի [ք]նա ամենեքեանն իբրև ըզբարերարդ սիրեն, խրատ տամ քեզ՝ հրամայեա՛ ընդ երեկս մշակաց, Թէ ով ոք վաղ առաւօտն առ նոսա երթիցէ՝ զոր դու առաքեսցես, զնա ի հնոց բորբոքեալ կրի ձգեսցեն։ Հաճոյ եղև Թագաւորին խրատն և հրամայեաց որպէս չարախօսն ասաց։

Արդ՝ ընդ առաւօտն ասէ Թագաւորն ցանմիոյ ծառայն .Ե՛րթ ի հնոցն ուր զկիրն այրեն և ասա՛ցվարպետս՝ փութանակի կատարեցէք զհրամանս Թագաւորին, զոր յերէկ հրամայեալ է ձեզ։ Եւ նա առ ժամայն գնացեալ լուաւ զձայն զանկակի յեկեղեցւոջն առ ճանապարհաւն, եմուտ ի ներս զի աղօթեսցէ ի ժամ պատարագի և աղօթելով առ սուրբ Աստուածածնին՝ զհոգի իւր և զմարմինն ի նա յանձն առնէր։ Եւ իսկոյն ի խնամոցն Աստուծոյ եմուտ ի քուն և զրոլոր ժամ մի ննջեաց։

Ցայնժամ՝ չարախօսն նորա ասէ ցԹագաւորն. Հրամայեա՛ տէր իմ՝ արքայ, զի երթայց և տեսից Թէ զինչ եղև։ Եւ հրամայեաց Թագաւորըն և նա հեծեալ ի ձի, փութանակի վազեր ի փուռն կրի, ասելով՝ Կատարեցի՛ք զհրամանս Թագաւորին։ Եւ նոքա ասեն՝ Ո՛չ, սակայն ոչ յամեսցուք։ Եւ առեալ զնա ձգեցին ի բոց հրոյն։ Եւ ահա եկն անմեղն այն և խոնարհութեամբ ասէ. Կատարեցի՛ք զհրամայեալն ձեր յերեկեան աւուր, և նոքա ասեն՝ Այո՛։ Եւ նա ոչինչ գիտելով վասն խրատուն՝ դարձաւ ի տուն։ Ցերեկոյն յորժամ եհարց Թագաւորն ցմշակսն, Թէ Ընդէ՞ր ոչ ընկեցի՛ք զայդ զօրական ի հնոցն, ետուն պատասխանի՝ Այլ ոք յառաջագոյն քան զդա եկն և բոց եկեր զնա։

Ցայնժամ Թագաւորն յանդիմանեաց՝ զանմեղն սակս յապաղելոյն. և նա ասէ՝ Փոքր ինչ մոլ յեկեղեցի ի ժամ պատարագի յանձն առնելով զիս սուրբ Աստուածածնին, հայցելով ի նմանէ, զի պահեսցէ զիս ընդ հովանեաւն իւրով, զի զիմ խոստացեալ կուսութիւնս զոր մինչև ցայսօր ամբողջ ունիմ, մինչև ի վաղճան անարատ կարիցեմ պահել։ Յետոյ ակամայ այնչափ անոյշ քնով ըմբռնեալ եղէ, մինչ զի համարեի Թէ ի դրախտն փափկութեան տարեալ եղէ. ապա ի քնոյ զարթուցեալ ճշդով փութոյի կատարել զհրամանն արքայիդ։ Ցայնժամ Թագաւորն ասէ. Զինչ ասես սակըս խոստացեալ կուսութենդ, զի ես գիտացի Թէ ի վաղուց հետէ ջանաս հասանիլ յարժան բարեկամութեան Թագուհւոյն, զի Թէպէտ ոչ գիտեմ վասն անարժան գործոյդ, սակայն զնշան սիրոյ ընդ նմա ինքնին ծանեայ, մանաւանդ այնու, զի յորժամ Թագուհին տրտմի և դու պատմութիւն հանգերձ արտասուօք ցուցանես, Ցայնժամ զարմացեալ երիցասարդն ասէ՝ Լո՛ւր ինձ տէր իմ՝ արքայ, յորժամ հայրն իմ մերձ էր ի մահ, զորմէ և դու քաջ գիտես, զի էր աստուածապաշտ և արքայիդ հաւատարիմ ծառայ, զայս երիս խըրատս առի ի նմանէ փոխանակ կտակի—և ասաց զնոսա առաջի Թագաւորին—զայնոսիկ ըստ կարի իմում ջանայի կատարել։ Ցայնժամ Թագաւորն յոյժ ուրախացաւ և ասաց նմա զամենայն որպիսութիւն նախանձուն և զխրատն որ վասն մահուան նորա։

Ապա յայնմհետէ սիրեաց զնա Թագաւորն առաւել քան զամենայն ծառայս։ Եւ նա փառաւորիլով զԱստուած ջերմեռանդ սրտիւ ծառայէր նմա և ամենասուրբ կուսին Մարիամու և հրանելի մահուամբ փոխեցաւ ի Քրիստոս Աստուած յոյն ամենայնի, որ է օրհնեալ յաւիտեանս, Ամէն (Ա ձեռ., 117բ—119բ)։

2. ՀԱՑԵԼԻ, ՑԱՂԱԳԻՍ ԽԱՉԻ ԶՕՐՈՒԹԵՒՆ ԳԼ. ԼԱ, 1.

Զոմն քարտուղար իմաստուն և բարեսէր երբեմն խարեաց կախարդ և տարաւ զնա ի տեղին ուր կոչեալ էր զդևս, խոստանալով նմա մեծամեծ և բազում մեծութիւնս. և ահա ետես զեթովպացի մի մեծահասակ ի վերայ բարձրագահ աթոռոյ բազմեալ և շուրջ զնովաւ այլք եթովպացիք հանդերձ նիզակօք և գեղարդեամբք։

Ցայնժամ մեծ եթովպացին այն կոչեաց զկախարդն ասելով. Զինչ է այդ պատանեակ. և նա պատասխանեաց՝ Ձեր իմ ծառայ ձեր է։ Ցայնժամ դարձաւ սատանայ առ քարտուղարն և ասէ. Եթէ կամիս զինձ մնաուցանել զերկրպագութիւն աստուածային և իմ ծառայ լինել և զՔրիստոս ուրանալ, նստուցից զքեզ ընդ աջմէ իմմէ և բազում մեծութիւնս տացքեզ։ Իսկ քարտուղարն առժամայն խաչակնքեալ զինքն յայտնապէս խոստովանեցաւ զինքըն գոլ ծառայ Քրիստոսի Աստուծոյ։ Եւ իսկոյն ամենայն բազմութիւն գիւաց յերկիր կործանեցաւ։

25 Ցետ այսորիկ յորժամ քարտուղարն ընդ
տեառն իւրում եմուտ յեկեղեցին և առաջի
փրկչական պատկերին երկոքեանն կանգնած
էին, տէրն տեսանէր զի պատկերն այն ան-
թարթ նայէր ի քարտուղարն, զոր տեսեալ
30 տէրն զարմացաւ և հրամայեաց պատանւոյն
յաջմէ իւրմէ կանգնել և ահա տեսանէր զի
պատկերն յայն կողմն զերեսս դարձոյց և մե-
ծաւ զգուշութեամբ ի քարտուղարն նայէր։
Դարձեալ հրամայեաց պատանւոյն ի ձախմէ
35 իւրմէ կանգնել և ահա՛ պատկերն մխրանգամ
ի յայն կողմն զաչս իւր դարձոյց և մեծաւ
քաղցրութեամբ ի նա հայէր։ Ցայնժամ տէրն
երդմնեցոյց զնա զի պատմեսցէ նմա թէ ըն-
իւիք այսպէս հաճոյ եղէ Աստուծոյ, զի պատ-
40 կերն ի նա այնպէս քաղցրութեամբ հայէր։
Պատասխանի ետ թէ Ոչինչ բարի մասն ունիմ,
միայն զայն, զի ո՛չ կամեցայ զՔրիստոս ու-
րանալ առաջի սատանայի (Ա ձեռ. 63 ա-բ)։

---

*Ուշագրաւ որ անվիճելի կարելի է համա-
րել, որ այս երկու պատմութեանց հիմնական
միաքը նոյնն է Աղուէսագրքի վերեւում նշա-
նակուած առակների հետ, մեզ համար նոյն-
չափ հաստատուն է, որ որևէ առնչութիւն
չկայ այս կէսերում Աղուէսագրքի և Հայե-
լոս միջև, բացի ոգու, խմբագրական և այլ
տարբերութիւններից, կայ այն հանգամանքը,
որ Աղուէսագրքի այդ երեք առակները միմեանց
կից, մէկը միւսի ետևից, գտնուում են Մատթ. Ե
ձեռագրում, որ է Պարիզի Ազգային մատե-
նադարանի օրինակը, գրուած ՌԿԴ — 1615
թուին *, ուրեմն Հայելոս հայերէն թարգմա-*

---

* Ցիշատակարանի մանրամասնութիւնները տես Մատթ. երկաթիրութեան մէջ I հատ. էջ 104—5. գրչին է Նոռնաւարիցի Պետրոս երէց։ Նոռնաւարիցի տեղը յայտնի չէ, ենթադրւում է լինել Կիլիկիայում (տես նոյն տեղը էջ 105 ծանօթ. 2)։ Ստացողն է ոմն Սրապիոն արհիեպիսկոպոս, որ նոյն ՌԿԴ թուին ձեռնադրուել է Ցովհաննէս կաթողիկոսից. «Արդ ես Սրապիոն եպիսկոպոս գիարգ հայրապետութեան ի յանձն առի ի թուին Ռ. ԿԴ. տեառն իմոյ ի տէր Ցովհաննէս կաթողիկոսին»։

Այս 1615 թուին՝ կամ մի տասնեակ տարի առաջ կամ յետոյ այդ թուից՝ էջմիածնի Ցովհաննէս կաթողիկոս չկայ, թայց 1601-ին, 1606-ին, 1608-ին յիշուում է Ցովհաննէս կաթողիկոս Սասոյ (Ցովհաննէս Դ. Անթապցի ըստ Ալիշանի, տես Սիսուան էջ 218, 260 և յաւելուած 546, 540, նաև Տաշեան ցուց. էջ 358, 431, 526, 394, եւլն.) որ կարող էր ապրած լինել նաև 1615-ին եւ թերևս յետոյ էլ։ 1615-ին կարող էր այս Ցովհաննէս կաթողիկոսից ձեռնադրուած լինել եւ Սրապիոն եպիսկոպոսը, որն էլ նոյն թուին գրել տուեց մեզ զրադիցնող Առաքելիրը։ Ուրեմն ամենայն հաւանականութեամբ այս ամենը տեղի ունեցաւ նոյնթիւնից տասնեակ տարիներ առաջ։ Այսպիսով ուրեմն՝ մեզ համար է միակ հնարաւորը, այն է՝ ենթադրել, որ Հայելին և Առակագիրքը ունին այս պատմութեանց համար ընդհանուր աղբիւր, թէև այդ աղբիւրը լինի ոչ անմիջական, այլ շատ հեռաւոր։

Գալուստ Տէր Մկրտչեան
15 յունուարի 1900։

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԻՋ

(ԹՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍՈՒՑՈՒԹ)

(Շարունակութիւն) *

Զ.

ԱՆԳԵԼ. ՏՈՒՐՔԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Անգեղ տուն եւ Անգեղեայս։ — Ո՞րն է բուն առաստպելը։ Ղօրենացու մէջ ոչ մի ակնարկութիւն չկայ թէ նա ժողովրդական երգից կամ առաստպելից առած լինի Անգեղ

Կիլիկիայում։ Ուստի եւ Նոռնաւարիցի Պետրոս երէցի ՌԿԴ թուին յիշած կաթողիկոսը Ցովհաննէս Դ Անթապցին է։ Մատթ. բազմաթուականութեամբ դուրս է գալիս, որ Պետրոս քահ. Նոռնաւարիցին Վարդանայ առակները գրել է Աստնի քաղաքում. «Я, недостойный священникъ Петръ, много потрудился надъ этою книгою, когда писалъ въ Атенской пещери: у меня убогаго было много усердія (էջ 105). Ծանօթութեան մէջ էլ աւելացնում է Մատթ, որ Աստնի քաղաքը կարող էր գտնուել Աստնեան կրճում կամ ձորում (եր Атенскомъ ущелии)։ Կուր գետի հարաւային օժանդակ Աստեղ գետի վրայ, եւ թէ Վախուշտի վկայութեամբ Աստեղ աւանում ապրում էին նաեւ հայեր եղեն։ Այս քաղաքը հիմնուած է շիշատակարանի հետեւեալ խօսքերի վրայ, «ես անարժան Պետրոս երէցս յոյժ աշխատեցայ յայտ առնել, որ գրեցի յայրի աստեղիս, քաղաքիս շատ էր աղխատիս։ Իմ կարծիքով «յայրի աստեղիս» չատ կրնի յատուկ անուն չեմ կարող եւ հասկանալ ոչ թէ Աստեղի այր, քաղաքիս, այլ «այրի այրեցած աստեղս կամ աստեղիս» այսինքն այրի ժամանակ երբ իրիցկինը վախճանուած էր։ Նոռնաւարիցին շատ հզօր չէ ուղղագրութեան մէջ եւ գրում է «յուսուսմնայսէր=ուսումնասէր, զնդրերձումն=զգեստաւորում, բազմայշարաժ=բազմաշարաւոր, եւլն եւլն, ուստի եւ կարող էր գրել «յայրի—այրի», կամ իբրեւ նախդիրով՝ յայրի աստեղիս։

* Տես Արարած 1900 համար Բ. եր. 86։

ման նախարարութեան[1] անուան ծագումն Անգեղ Տուրքից։ Նա այդ վերցնում է գրաւոր աղբիւրից. «Բայց զԱնգեղ տունն ասէ նոյն պատմագիրը [Մար Աբաս] ի Պասքամայ ուղեմէ ի Հայկակայ Թոռն է լինել» (Ա. իգ.)։ Իսկ ապա (Բ. ը.) Տուրքի մասին խօսելիս կրկնում է նոյնը թէ Տուրքն էր «ի զաւակէ Պասքամայ, ի Հայկակայ Թոռնէ.... որ վասն առաւել ժահապիմութեանն ձայնէին անգեղեայ, ...հաստատէ կուսակալ արեմտից. և յիւրեացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն»։

Մ՚իւս կողմից ոչ մի ակնարկութիւն չունինք նոյնպէս և այն մասին թէ պատմագիրը երգից վերցրած լինի Տուրքի արաբին ազգութեան նկարագիրը, ինչպէս և այդ պատճառով հսկայի Անգեղեայ կոչուիլը։ Շատ հաւանական է, որ իրեն Յօրենացու, կամ իր դրաւոր աղբիւրին, չինածը լինի այդ։ Պէտք է նկատի ունենալ, որ մեր պատմագիրը սիրով կանգ է առնում մեզ նախապարների անունների բացատրութեան վրայ և այդ բացատրութիւններս, ինչպէս երևում է, ինքն է տալիս։ «Եւ զարծրունիսգ գիտեմ ոչ արծրունիս, այլ արծիւ ունիս, որք արծուիս առաջի նորա կրէին»։ «Գիտեմ զընտանիսգ գինի ունիս, որ առաջի թագաւորին պատրաստէր զըմպելիսն»։ «Ասեմ և զսպանդունիսգ ի վերայ զենարանացս, և զհատենունիսգ՝ բազէակիրս... Եւ եթէ առ ցոփս ոչ ունիցիս, զձիւնականսգ՝ ամենայնոցս պահակս և ձիւնակիրս» (Բ. է)։ «Աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա կոչեցան Աղուանք, զի ապուշ ձայնէին զնա» (Բ. ը)։

եթէ այս բացատրութիւնների կարգին է պատկանում և Անգեղ բառի ժխնութիւնը՝ «որ վասն առաւել ժահապիմութեանն ձայնէին անգեղեայ... և յիւրեացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն», այն ժամանակ անգեղեայ բառը նոյն իսկ կարող է մեր պատմագրի, եթէ ոչ իւր աղբիւրի, շինածը լինել։

Այսպէս ուրեմն իրրև Անգեղ Տուրքի առասպել մնում են միայն այն երկու համառօտ պատմութիւնները թէ Տուրքը քարեր է պատառում և թէ նա նաւերի եռեից քարեր է ձգում։ Պատմագիրն այս պատմութիւնները բերում է իրրև երգ և առասպել։

Առասպելը։—Չենք կարող ասել թէ Անգեղ Տուրքի առասպելի այս երկու համառօտ պատմութիւնները Յօրենացու աղբիւրն է և թէ նա առում է՝ ներկայացնելով այդ իրրև երգ։ Սուտ խօսողը մի կարիք պիտի ունենայ։ Իսկ մեր պատմագիրը Տուրքի առասպելը նոյն իսկ իրրև վկայութիւն չէ բերում Մար Աբասի պատմութեան համար։ Եւ նա կարիք էլ չունէր Տուրքի ուժեղութիւնն ապացուցանելու, ինչպէս և բնաւ կարիք չէ զգում այդ երկու (Բ. է. ը.) գլուխների մէջ յիշած այլ բազմաթիւ նախարարութիւնների նախահայրերի այս կամ այն յատկութիւնը ժողովրդական երգով կամ առասպելով հաստատելու։ Յօրենացու մտածողութեան եղանակը շատ պարզ է։ Սահակ Բագրատունին, ինչպէս առաջին գրքի յաւելուածից երևում է, առանձին «կամք ու փափաք», «տարփանք» է ունեցել հայոց պատմութեան մէջ կարդալու պարսից առասպելներից, որ պատմագիրը, ինչպէս գիտենք, «սուտ փծուն, անյարմար բանք» է անուանում։ Արդ, երբ նա մի քանի գլուխ յետոյ դրաւոր աղբիւրից առնելով խօսում է Անգեղ տան ծագման մասին, ասելացնում է ակնարկելով Սահակ Բագրատունու այս կամք ու փափագին. «բայց եթէ կամիս, սակայն և ես յաղագս նորա ասեցայ և փցուն, որպէս պարսիկք վասն Ռոստոմայ Սագճկի հարբեր և քան փղոց ոյժ ասեն ունել։ Քանզի կարի լեմն անյարմար թուէին նմա երգ բանիցն[1]

1. Բոլորովին ա երթող է վերջի ն յօղը, որ չկայ Ա. տպագիր ձեռագիրների մէջ։

1. Պ. Ա. Գառագաշեան, Քննական պատմ. Հայոց Ա. եր. 251, Եարեանցու բնութագրութեան մէջ գրում է. «Անգեղ տուն ոչ թէ ցեղի կամ նախարարութեան անուն էր, այլ Բարձր Հայք կոչուած նահանգին կամ մերոյ ի գաւառաց նորա։ Այսպէս կրցանենք զԱնգեղ տուն յաձախ յիշուած առ Բիւզանդայ եւ Ագաթանգեղոսի»։ Դժբախտաբար կարծիք յայտնողը նեղութիւն չէ կրում Ագաթանգեղոս նայելու, թէ չէ այնտեղ կրցաներ նայոց «գլխաւոր նախարարներէն», «կուսակալներէ» մէջ նոյն իսկ առաջինը «Գիտանի Անգեղ տան» (եր. 461), «զմէծ իշխանն Անգեղ տան» (եր. 502), իսկ «մեծատանեարդոյ իշխանն Սիւնեաց աշխարհին», որից պարզ երեւում է որ, ինչպէս Սիւնիք, այնպէս եւ Անգեղ տունն, միանգամայն երկրի եւ ցեղի անուն է։

վան ուժեղութեանն և արտեայ լինելոյն, որում ոչ Սամանի և ոչ Բրակլեայ և որ Սադձկին յարմարեն այս պրոյեքս»։ Եւ Խորենացին այնքան արհամարհում է այդ առասպելը, որ չէ բաւականանում «սուտ, փճուն, անյաջ, անյարմար» բառերով, ուսոի և ետևից աւելացնում է. «Ո՛հ, կարի է առասպելս, այլ և առասպելաց առասպել»։ Եւ մի րոպէ նոյն իսկ կարծում է թէ այդ առասպելի չափազանցութիւնն այն աստիճանի է, որ նոյն իսկ Սահակ Բագրատունին — որ այդպիսի առասպելներ սիրում էր, և որին մի հաճոյք պատճառելու համար միայն բերել էր այդ առասպելը — կարող է չհաւատալ։ «բայց քեզ պի՛ է։ քանզի էր արդարև սաստիկ հզօր, և այսպիսեաց պրուցաց արժանի»։

Կարծում ենք, մարդիկ և աւելի ևս Խորենացու նման մէկը, այնքան անմիտ չեն, որ ընդհանրապէս փճուն առասպելներն արհամարհելով հանդերձ՝ առանց կարիքի մի փճուն առասպել սարքեն իրենցից և նոյն իսկ սարքելիս այդպիսի հսկայական կերպով ծաղրեն իրենց սարքած բանը։

Պ. Խալաթեանի (եր. 26 հան.) առարկութիւններն այս առասպելի ժողովրդական լինելու մասին նշանակութիւն չունին բառի բուն իմաստով։ Նա իբր ժողովրդական ձևով Տուրքի և նորա առասպելի ծագման ժամանակագրութիւնն է քննում որի ինչ արժէք ունենալը դիտենք և ապա գրում է. Տուրքի արարքներից «առաջինը, իմ կարծիքով, բոլորովին անհեթեթ է», որովհետև «ըղընգամբք արծուիս և այլս այսպիսիս գրելը որձաքար վիմերի վրայ» ենթադրում է հսկայի մէջ որոշ աստիճանի կրթութիւն ու զարգացում (կուլտուրա), գեղարուեստների ծանօթութիւն, որ բնաւ յարմար չէ գալի Տուրքի նման հրեշաւոր ցուցանքին» (чудовищный уродъ)։ — Անշուշտ պ. Խալաթեանի կարծիքով մի մարդ, որ «խոժոռագեղ, բարձր, կոպտատարած, ատամքիմ, խորանի, գժնահայեաց» լինի, «հրեշաւոր ցուցանք» է։ Ճաշակի դէմ վիճելիք չունինք։ Բայց այդպիսի մարդուն մենք, Խորենացու հետ, միայն «ժահագէմ», «յերեսացն անպիտան» կամ ազեղ կանուանէինք։ Սակայն և այնպէս, ենթադրենք մի րոպէ, որ այդ մարդը «հրեշաւոր ցուցանք» է։ Բայց ո՞վ ասաց, որ երգի մէջ ևս այդ Տուրքն իբրև «հրեշաւոր ցուցանք» է ներկայանում։ Մի՞թէ ինքը պ. Խալաթեանը չէ, որ մի քանի տող վերևում գրել է. «Անգղի մեծ ուժին Խոսրենացին իրենից ետևլացրել է եւ անասելի հրեշաւորութիւն (уродство), Անգեղ անունը տգեղ բառով բացատրելու նպատակով»։ Բայց ենթադրենք մի րոպէ և այն, որ երգի մէջ ևս Տուրքը ճիշտ այնպէս է նկարագրուած, ինչպէս Խորենացին տալիս է մեզ, «խոժոռագեղ, բարձր, կոպտատարած, ատամքիմ, խորանի և գժնահայեաց»։ Մի՞թէ այդպիսի արտաքին ունեցող մի մարդ, որի նմանները երբ, որտեղ և որքան ուզէք՝ կըգտնէք, անբան անասուն պիտի լինի այն աստիճանի, որ գազափար չունենայ արծիւներ և նմաններ քանդակելու մասին։ Մ՛արդ ակամայ յիշում է թէ ինչպէս հին յոյները զարմանում էին, որ այն ազեղ Սոկրատի մէջ բնակում էր ոչ միայն մեծ փիլիսոփայի, այլ և քանդակագործի ոգի։

Անշուշտ այսքանով չէ սահմանափակում պ. Խալաթեանն իւր «հետազօտութիւնը»։ Երգի երկրորդ հատուածի մէջ Տուրքը «տաւրեական կոպիտ այժ է գործադրում», այսինքն ֆիշնամիների նաւերի ետևից վխմեր է ձգում։ Ուրիշ խօսքով, Տուրքը մի վայրենի ու անբան է դուրս գալիս։ Բայց չէ՞ որ այդ «հակասում է» առասպելի առաջին մասին (въ противность первому), որի մէջ Տուրքը այնքան զարգացած մեծ «գեղարուեստագէտ» քանդակագործ է, որ վխմերի վրայ նկրնգնեցրով արծիւների պատկեր է քաշում։ Ուրիշ խօսքով, նոյնն է անում ինչ որ նախապատմական ժամանակի մարդիկ էլ արել են, իրենց բնակած քարայրերի պատերի վրայ թռչունների պատկեր հանելով։ Եթէ պ. Խալաթեան առաջուց միտքը դրած չլիներ հերքելու ամեն ինչ, որ Խորենացու մէջ բերած է իբրև ժողովրդական բանահիւսութիւն, նա կըտեսնէր՝ այստեղ ոչ մի հակասութիւն չկայ։ Այլ ընդհակառակն, Տուրքը երկու դէպքում էլ պահում է իւր բնաւորութիւնը, — մի վիթխարի քարակով, որ կարողանում է «բուռն հարկանել զործաքար վիմաց», ուր ոչ գոյ դեղութիւն, և ձեղքել ըստ կամաց մեծ և փոքր, և քերել ըղընգամբք և կաղմել որպէս առեստակ»։ Նա անշուշտ և իւր ֆիշնամիների ետևից՝ պիտի «առնու վխմս բլրաձևս և ձգէ գինի»։ Ուրեմն պարզ է հակասութիւնը։

Բայց ենթադրենք մի րոպէ, որ հակա-

սութիւն կայ։ Այն ժամանակ հարց է. արդեօք ժողովրդական առասպելի կամ երգի այս կամ այն հատուածների ու միջադէպերի հակասութիւններով կարելի՞ է հերքել առասպելի կամ երգի գոյութիւնը։ Այդ կը նշանակէր ոչ մի հասկացողութիւն չունենալ ժողովրդական բանահիւսութեան մասին, որի մէջ յաճախ միևնոյն անձնաւորութիանը կապւում են, որոշ շերտաւորումներով, զանազան պատմական շրջանների ու գաղափարների, զանազան բնաւորութեան գծեր։ Համեմէք օրինակներ մեր արդի կենդանի Սասնոյ ծռերից։

Ի՞նչպիսի հակայ են մեր Դաւիթն ու Մհերը։ Որքան պինդ ու պողպատեայ է մանուկ Դաւթի մարմինը, որի «ճոճ ըմբի քիսաւ ի չարդու քար՝ կրակ էլաւ մծաէն»[1], կամ «ըղունգ առաւ քարին ու կրակ առաւ»[2]։ Մրթմրթա միևնոյն Տուրքի ձեռի ու եղունգի պնդութիւնը չէ՞։ Իսկ նորա ոյժը։ Այդ մանուկ Դաւիթը «ձեռ էթալ գլուա շեմքով սարքարով թռաւ էկաւ», «ձեռ էթալ մէկ սպնդրի (բարդի) ծառ կռանց գծեր խալ գեաին», կամ «ձեռ եաու վէրլ դարձուցից, երեք խարիր ձիաւուր փերիվ փահլևան սպանից»։ Նա երկաթի սղեր հագած, բարդի ծառն ուսին՝ «ինչ վուա կը զարկէր գետին, գետին կըմդնդէր»։ Նորա ձայնից փախչում են գայլեր, արջեր, վագրներ, առիւծներ, որոնց բոլորին ժողովում է ապայ հսկան և բերում Սասուն։ Նա մի կոպալով գևեր է կոտորում այն գևերը, որոնք ուռչում են «քանց Պոդ բլուր», և որոնց դիակներից նոյն իսկ բարակ ծառն արմատահան անող և իրրև գինք գործածող Ձէնով Ծովանը փախչում է։—Ահա ձեզ գեռ երևակայ Դաւիթը։ Բարձրութիւնն ու վիթխարութիւնն էք ուզում—երբ նա իր հօր Սանասարի հազուստը հագին Քուռկիկ Ջալալինի վրայ է նստում, նման է «սար որ էլեր ա սարի վրայ»։

Իսկ Մհերը, այդ գևերի ընկերը, որ երբ ման է գալիս, ոտները թազուում են գետնի մէջ, և որի ծնոտների տակը մասամ է, երբ քարին է զարնում—միթէ, այդ Մհերը մեր Տուրքին ցեղակից չէ։ Նա գալիս է Ջղիրու քաղաք, ուր «կըլինի որ խարիր քառասուն գետ իրարու կը խառնուի, կըլինի մէկ գետ» (Ջղիրու շատ, Տիգրիս)։ «Էկաւ էնտեղ մէկ մեծ արագին քար էրի, կցից գետաքի քամակ գիտու մէջ. գետ էլաւ էրկու ճնող, մէկ ձեռ էն եանէն կինայ, մէկ ես. էլ քետաքը չի աւրի, Բրջայ ըռլաքն էլ վեսը էն քետրին շինից. իսկի աւերիլ չկայ էն քերդին»։[1]

Ահա Տուրքն ամբողջապէս պողպատեայ մարմնով, վիթխարի հասակով և ուժով և սրտեայ, որ մատով օրձաքարից կրակ է հանում, ձեռներով քարերը փոս է ձգում և վերցնում է կարծածից աւելի մեծ ժայռ։ Մրթմրթ այդ Դաւթին ու Մհերը, այդ լեռնանման վիթխարիքը, որոնք նոյնպէս բնութեան բիրտ ուժերի հետ գործ ունին, այդ ուժերն իրրև զինք գործադրում են և նոյն իսկ, ինչպէս Մհերը, բնութեան բիրտ ոյժերի անձնաւորումն են—միթէ անբան առնասուն են գոքա, և «կուլտուրայի որոշ ասպիճանի» և նոյն իսկ բարձր ասպիճանի վրայ չեն կանգնած։ Որքան մտաւոր ու բարոյական մեծութիւն ասես, որ նոքա չունին։ Զանձրալի չլինելու համար՝ յիշենք, որ նոքա կարզալ գիտեն, այն էլ տէրտերի կամ վարդապետի մօտ են գաս առնում։ Նամակ են գրում, ստանում, բերդ ու վանք, եկեղեցի են շինում։ Թաշկինակ գործել ասլիս և ուզածը վրան նախշել ասլիս, մինչև անգամ «պիւրբինք» բանեցնում են։

Հետևանման կամ ըստ Յօրինացու, հարիւր քսան փոլ ոյժ ունեցող Ռոստամի առաջ նոյնպէս ոչ միայն գետինը, այլ և քարը գիմանալ չէ կարողանում

«Եթէ նա վեր եղլէր մի քարի վրայ ու կանգնէր,
Ծանրութիւնից երկու ոտքը քարի մէջը կըխրուէր»։
«Հսկայ Ռոստամն, որ հենց ժայռին ձեռ էր ձգում եւ բռնում»
Որձաքարը անգամ տեղից պոկում կռուի օրերում,
Եւ ահագին կորովովը սարը տեղից էր շարժում,
Ծանր, ամուր քարը մամ էր նա հանարում իր բռում։[2]

Ի՞նչ է, սրա նկարագիրը, եթէ ոչ մեր Տուրքինը։ Բայց այդ նոյն Ռոստամն է, որ անբան անասուն չէ և նախկնանում է պարսից ժողովրդի աւանդութեամբ, իրրև Պարսկաստանի ժայռերի վրայ հին քանդակների արարիչ։ Ո՞ւմ չայանի չեն այդ քանդակները Նախշի Ռուստամ անուանով։ Եւ միթէ, միւս րիչ հսկայ, սրտան Պրոմեթևս չէ՞, որ մրացկնում է ժարդկանց մէջ ուսում, գիտութիւն, արուեստ և ինչ որ պիտանի է «գեղեցիկ ու երջանիկ կեանքի համար»։

Բայց մենք օրինակներն աւելորդ ենք բազմապատկում։ Եթէ այդ ամենը կարող է անել—և շատ բնականաբար—մի Ռոստամ, ինչո՞ւ մի ուրիշ Ռոստամ միայն Անգղ Տուրք անուանով կարող չէ անել։

1. Սրուանձտեան, Դրոց Բրոց, եր. 151.
2. Գաւեգին ս. Յովսէփեան, Սասնայ ծռեր, եր. 26.

1. Սասնայ ծռեր. եր. 146.
2. Ժրդուխ, Ռուստամ եւ Սոհրաբ, թարգմ. Գիւլզադեանի, եր. 113. 125.

Տուրքի առասպելի երկրորդ մասի— թշնամիների նաւերի եռից քարեր ձգելու նմանութիւնը Հոմերոսի Ոդիսականի Կիկլոպ Պոլիփեմի արարքին՝ արդէն փաղաց ցոյց է տուել Էմինը։ Բայց այդ «աչքի զարնող նմանութիւնը», որ Էմինը «պատահական» է համարել, պ. Յակոբեանը կարծում է՝ Յունացին ինքն է «ուղղակի վերցրել որևէ յունական յայտնի ժողովածուից (ходячій сборникъ)։ Իսկ ապացոյցը — միայն նման լինելն է։ Մի երկու տասնեակ տարի առաջ գուցէ կարելի էր այդպէս ասել. բայց այժմ, երբ արդէն յայտնի է թէ ինչպէս ամբողջ ժողովրդական երգեր, վիպական մեծ ոտանաւորներ, որոնք երբեք գրուած չեն եղել, մի ազգից միւսին, մի լեզուից միւսին են անցնում՝ ժողովրդի բերանին գրեթէ բառացի ոտանաւորով թարգմանուելով, միթէ կարելի չէ՞ ասել, որ Ոդիսականից մի քանի տող առանց գրաւոր աղբիւրի, յոյներից իրենց գրացի հայերին անցած լինէր։ Եւ ինչո՞ւ անպատճառ յոյներից։ Որովհետև արդեօք Պոլիփեմի այդ հատուածը բնիկ յունակա՞ն է։ Չէ՞ Ոդիսականը բազմաթիւ ազգերի առասպելների մի ժողովածու է։ Եւ վերջապէս այդ «աչքի ընկնող նմանութիւնը» շատ էլ տարբերութիւններ ունի վիպական մանրամասնների մէջ, այնպէս որ միայն ընդհանուրի մէջ է մնում նմանութիւնը։ Եւ պ. Յակոբեանը գրում է, այդ ուրի՞ւ և մի այսպիսի անվերնաս բան է աւելացնում։ «Թէ մենք այսօր գրքերի (книжный) ազդեցութեան հետ գործ ունենք, այդ երևում է դարձեալ (առաջինը որո՞ն է) նորանից, որ Տուրքի առասպելից առաջ նրած հատուածն ամբողջապէս վերցրած է Եւսեբիոսից»։ Ցնծա՛, ևս պա՛տ։ Որ նախորդ հատուածը Եւսեբիոսից է վերցրած, ուրեմն յաջորդն էլ մի գրքից, Հոմերոսից պիտի վերցրած լինի։ Եւ ինչո՞ւ անպատճառ Հոմերոսից և ոչ Կիրակոսից ու Թորոսից, և կամ ժողովրդական առասպելից։

Անգեղ աստուած։—Այսպէս Անգեղ Տուրքի առասպելը ճնում է իրրև առասպել։ Տուրքի նման հսկաներ շատ ազգերի առասպելների մէջ կան և նոյն իսկ մեր արդի առասպելների մէջ։ Բայց որովհետև Յունաց շատ քիչ բան է հայորդում, ուստի մենք չենք կարող առ այժմ գոնէ այդ հսկային ուրիշ ազգերի հերոսների հետ համեմատել։ Արդէն վերևում տեսանք նման և խիստ նման գծեր մեր Տուրքի ու պարսից Ռոստամի մէջ։ Բայց այդ բաւական չէ Անգեղ Տուրքի բնութիւնը ճիշտ որոշելու համար։

Պ. Գաբագաշեան[1] գրում է. «Անգեղ թուի լինել հին հայ պիւցազին կամ աստուածութեան անուն։ Մեր նախնիք սովոր էին Հայոց աստուածներուն անուամբ կոչել ըստ յարմարութեան, օտարազգի պիս. զորօրինակ. զՕրիոն՝ Հայկ, զՀերակլէս՝ Վահագն.... այսպէս Անգեղ կըթարգմանեն հին Քուշեանց և Սեմականաց Նէրկալ կամ Էրկէլ (Հերակլ, Հերքիւլ) աստուածը, որ կը յիշուի ի Զորբարդ գիրս Թագաւորաց (Ժէ. 30)»։ Եւ ապա աւելացնում է նա. «Հաւանական է, թէ ինչպէս Քուշեանց և Սեմականաց Նէրկալը կամ Էրկէլն՝ նոյնպէս Հայոց Անգեղն պատկառազմի տոկումն էր, անձնաւորեալ պլատենօրէն ի հակայ անձոռնին, կաշըմբուռն և աւերիչ»։

Այս ենթադրութիւնները, սակայն, շատ կասկածելի են, մանաւանդ մեր հսկայի «անձոռնիութիւնը», քանի որ նոյն իսկ ինքը պ. Գաբագաշեան անմիջապէս յարում է, «Յունաց Անգեղի ահագին ուժոյն վրայ կը յանելու նաև տոկալի ագեղութիւն, որպէս զի Անգեղ անուանը մեկնէ ագեղ նշանակութեամբ, որ անտովոր (?) է ի մերում լեզուի»։ Ուրեմն որտեղից գիտէ, որ Անգեղն «անձոռնի» է։ Սեմական ազգերի Նէրգալը նոյնպէս ագեղ և անձոռնի չէ։ Նա արեգական բոցակէզ ջերմութեան, որով ու կորստաբեր տապի աստուածն է, որ «հրեղէն սուրը ձեռին, սարսափելի փայլք հագած, խոյխորտում և աւերում է»։ իրրև պատերազմի աստուած, յաղթութիւն է տալի և թշնամիների երկիրը քանդում։ Բայց նա միանգամայն աւելի ևս մեռելների աշխարհի վրայ իշխող է։ Նորա Քութա քաղաքը յատկապէս մեռելների քաղաք է։ Իրրև սանդարամեաի աստուած նա նոյնպէս պտղաբերութիւն է տալի[2]։

Մեր Անգեղ Տուրքի առասպելի մէջ Նէրկալի բնութեան այս գծերը չենք տեսնում բացի ուժից և թշնամիների դէմ կռուելու մի դէպքից։ Իսկ Աստուածաշնչի թարգմանութեամբ միայն՝ Անգեղ=Նէրկալ՝ գեռ չենք կարող հաւատալ մեր աստուածն կամ պիւցազին նոյն բնութիւնը վերագրել, ինչ ու ունի Նէրկալը։

Մ. Աբեղեան.

---

1. Բնական պատմ. Հայոց Ա. եր. 250.

2. Lehrbuch der Religionsgeschichte, herausgeg. von P. D. Chantepie de la Saussaye, Leipzig' 1897. եր. 185.

ԹԱՏՐՈՆ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Թիֆլիս 1899 թ

Պ. Ազ. Թարխանեան գովելի եռանդով և համբերութեամբ ձգտում է կանոնաւորել «Թատրոն»-ի հրատարակութիւնը: Մեր հասարակութիւնը պիտ ևս զուրկ է այն հասունութիւնից, որ պահանջ զգար մանրագիտական գեղասիրական հանդէսներ ապահովելու: Օրաթերթից զատ փոքր ինչ աւելի լուրջ պարբերականները ցանկալի յաջողութիւնը չեն գտնում: Բայց եթէ մեր մէջ հրատարակուէին այդպիսիները, ինչպէս «Մուրճ»-ը, «Լուման», և «Ազգագրական Հանդէս»-ը պարտական ենք գլխաւորապէս նոցա խմբագիրների համբերութեան և տոկուն աշխատանաց: Այդպիսիներից մէկն է և պ. Թարխանեանց, որ առանց յուսահատուելու և մեծամեծ զոհողութիւններով առաջ է տանում իւր գործը: Թարգմանական և ինքնուրոյն գրուածներից զատ «Թատրոն»-ը աչքի է ընկնում թատրոնի հետ կապ ունեցող անձնաւորութեանց լուսանկար պատկերներով: Պր. Եկմալեանի ներդաշնակութեամբ հերոսական ձայնանիշներով հրատարակուած է և «Պլպուլն Աւարայրի» երգը: Պ. Թարխանեան արժանի է ամենայն խրախուսանաց:

Գ. Վ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ·

„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ“

ԲԱՐՈՑԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱ-ԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹԸ

Հրատարակւում է 1900 թ. նոյն ծրագրով և ուղղութեամբ:

Տարեկան բաժանորդագինն է 10 ֆր.—4 րուբլի

Հասցէն A la Rédaction de la Revue Hantesse“ Vienne (Autriche) VII/2 Mechitharisten Gasse, 4.

ՆՈՐ—ԴԱՐ

(ՏԱՍՆԵՒԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Քաղաքական-գրական ամենօրեայ թերթը 1900 ին կը հրատարակուի Թիֆլիսում նոյն դիւքով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօներին հետևող օրերից:

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, երեք ամսուանը՝ 3 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ. հատուկ դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում՝ 5 կոպ.:

Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ մխիթարեան լմբագրատունը:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ *բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ:*

Յայտարարութիւնները ընդունւում են օտար լեզուներով. առաջին երեսում՝ բառը 4 կոպէկ:

Խմբագրատունը գտնւում է Վոդոլոզնայա փողոցում, տ. № 20:

Պոստով «Նոր-Դար»-ի հասցէն՝ ТИФЛИСЪ ВЪ РЕДАКЦІЮ „НОРЪ-ДАРЪ“ *կամ* Tiflis (Caucase), Rédaction du journal „Nor—Dar“.

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

տարի ԾՀ·

Հասցէն է Rédaction de la Revue „BAZMAVEB“ St. Lazare VENISE (Italie)

„ԼՈՒՄԱ“

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Ը· տարի

Հրատարակւում է տարեկան երկու գիրք

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ է 3 ՐՈՒԲԼԻ

իւրաքանչիւր գիրքն առանձին 2 ր.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „ЛУМА“ *կամ* Прот. Гюту Аганьянцу.

ԲԱՆԱՍԷՐ.

— *եռամսեայ բանասիրական հանդէս:*

Գինն է 20 ֆր.—Հասցէ՝ M. Basmadjian. (112. B.-d. Rochechouart)

Paris

ԱՐԱՐԱՏ

1900

Ս· ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՏՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԼՈՅՍ ԿՏԵՍՆԷ 1900 ԹՈՒԻՆ

ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՆՈՅՆ ԾՐԱԳՐՈՎ

Բաժանորդագին է՝ { Ռուսաստանում 4ր.
Արտասահմանում 5ր.

Խնդրում ենք բաժանորդներին յայտնել իրենց ճիշդ հասցէները.

Հասցէն՝ Св. Эчміадзинъ. Типографическому Комитету,

Արարատ-ի համար. Rédaction du Journal „Ararat". Etchmiadzine (Caucase)